

Urgent URGENT

Transcription
by G. C. G.

705

9(42)

U-66

Urgent

1887

E 2004

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԿԵՆԱՑ ԿԼԱՅՎՈՅ

ԳՐԵԱՑ

ՄԵՔԱԻԼԻ ՍԵՊՈՒՀ

ԹԱՐԳՄԱՆԵԱՅ

ԽԱԶԻԿ ԱԲՐԱՀՈՅՄ ԹՈՎՄԱՆ



(34)

ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԵՆ Դ. Ա. Զ. Ա. Բ.

1887

92

Մ-66

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԿԵՆԱՑ ԿԼԱՇՎՈՅ

9(42)
5-66

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԿԵՆԱՑ ԿԼԱՑ ՎԱՅ

ԳՐԱՑ

ՄԵՔԱՆԻ ՍԵՊՈՒՀ

ԹԱՐԳՄԱՆԵԱԾ

Պ. ԽԱՉԻԿ ԱԲՐԱՀԱՄ ԹՈՎՄԱՆ

1009
3260 /

16625-58
16625-58 R

5.



ՎԵՆԵՏԻԿ

Ի ՍՈՒՐԵՑ ԳՈԶՈՐ

1887

33548-4-f.

ANNE

ANNE

B R P B D A P B B J d G

ANNE

ANNE


ANNE

ANNE

ANNE

ANNE

ANNE



Ա. Ա.

Պ. ՅՈՎՃԱՆ ՅԱՐՈՒԹԻՒՆ

Զի՞նչ ընտանեկան զօդիւ կցորդելումս ընդ ձեզ՝ քաղցրագոյն կայցէ, բանտեսանել եկեալ զձեզ գեղեցիկ առատաձեռնութեամբ ձերով և խնամովք բանասիրութեան ի ծանօթումն ազգիս: Այն ինչ խընդայի ես ի տեսիլ զարմանագեղ պատկերաց նշանաւոր անցից պատմութեան Հայոց, զոր մեծապատի Հարք Մխիթարեան ուժտտին՝ որ ի Վենետիկի, մատուցանեն մեղ ծախուք ձերովք ի պարծանս հայրենեաց, և ի բարգաւաճանս ախորժակաց գեղարուեստից, գործ ճարտարաց նկարչութեան, ծանեայ ըզ հրամանս ձեր և զկամս առ ի տալ

ածել ի լոյս և զմատենիկս զայս
դուզնաքեայ. ոչ ինչ խտրելով ընդ
մեծամեծս և ընդ մանունս, եթէ
միայն իցէ իւրաքանչիւր օգուտ իւրի

Հայեցեալ յօգտակարութիւն մա-
տենկանս այսորիկ, յորդորեաց զիս
բարեյիշատակ բարեկամ մեր Պա-
րոն Ա. Պ. Աղանուր, փոխել զսա ի
մեր լեզու. և իմ հասու լեալ եթէ
զոր պէտս հարցէ սա հայրենակր-
ցաց մերոց գաղթելոց ի Հնդիկս, և
զոր խրատս ազդեսցէ յամեննեսին
առհասարակ, ահա զկայվ հայեցի
ուղերձեմ առ ձեզ. մաղթելով նմին
արդիւնս բարիս, և ազգասիրու-
թեան ձերում նախանձորդս ան-
թուելիս :

Ձեր կարի սեղսոյց
ԽԱԶԻԿ ԱԲՐՈՀԱՄ ԹՈՎՄԱՍ
ՍԱՄԱՐԱՅԻ, ՃՈՒԱ.

12 Օգոստոս, 1886.

ԹԱՐԳՄԱՆԻՉՆ

Ա. Թ. Ը Ն Թ Ե Ր Ց Ո Ղ Ս

Նկարագիր կլայֆայ՝ ոչ պաճուճանք
ցնորականք, այլ պատմագրական հա-
ւասիք, խելամուտ։ արասցէ ինկնին
զընթերցասէրս, թէ առ Բնչի մթերից
հրաշազան գրոց դարուս՝ զսա ընտրեցի
մատուցանել ի ծանօթութիւն աղջիս։
Յայլս ի մատենից յաճախ լինի զարմա-
նալ ընդ աշողութիւնս մտաց մարդոց,
և ընդ լաւութիւնս սրտի նորա գորո-
վել. իսկ ի սմա՝ կամաց մարդկայնոյ
կար երկաթի՝ հերքէ հրաշիք իւրովք
զմուար աղանդն զայն, որ յանհնարինս
գրէ զդժուարինս։ Անզիտանամք որչափ
ինչ կարեմք, մինչև զշափ առեալ ըզ-
կամաց մերոց։ Եւ ճշմարտութեանս
այսմիկ վկայէ ահա պատմութիւն կե-
նաց կլայփայ։

Մատենագիր սորա Թովմաս Բա-
բինկտոն Մեքաւլի, ազգաւ անդղիացի,
ծնաւ յամի 1800, և կնքեաց զկեանս
իւր յամի 1859: Սա մի ի սակաւոց ան-
տի է յականաւորաց, որ յամենայն
ազգս բանասիրութեան համանգամայն
պայծառացան: Չուգափառ հայակե-
ցաւ որպէս ճարտասան, որպէս ճառա-
գիր, որպէս քերթող և որպէս պատ-
մաբան: Երեմանամի մտեալ յատեան
տեսչութեան Անգղիոյ, առաքեցաւ ա-
պա յետ ամաց շորից ի խորհրդականու-
թիւն գերագոյն գալուարանին ի Կալ-
կաթա: ուր հետոազունալ զվէպս Հընդ-
կաց, ի լոյս Էած զհրաշագեղ ճառս իւր
զկլացիայ և զլարենայ Հաստինքսայ:

Երևելագոյնք ի մատենագրութիւնս
նորա են Պատմութիւն Անգղիոյ, ճա-
ռագայթ փառաց գպրութեան ազգին,
զոր եթող անկասար, Տաղք նախմոյն
Հոռիմայ, և Ճառք պատմականք և քըն-
նականք, հիապանչ արուեստիւ յօրի-
նեալք. յորոց է և առաջիկայս:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

ԿԵՆՈՅ ԿԼՈՅ ՎՈՅ

Զարմանիք թուեցան մեղ միշտ, զի ուր
ամենեցուն ծանօթ են անցք ինքնակա-
լութեան Սպանիացւոց յԱմերիկա, ան-
փոյթ առնենք և Անգղիացիք զմեծա-
պայծառ նահատակութեանց գտւառա-
կըցի իւրեանց յարեւելո: Գիտէ ամենայն
մանուկ գարոցական՝ թէ ու ետ զՄոն-
տեղումն ի բանի, և ու արկ խեղդ Ատա-
հալպայ . Երկըայիմք, եթէ սակաւուց
արդէ օք սմանց ի բազմահմաւտ իսկ ո-
րերոյն մարթիցի առել թէ ու յազմեւաց
ի ճակատամորտին Փոքսարայ, ու ըզ-
նախմիրս արեան գործեաց ի Պատմա,
ուր իշխեաց Սուրբածա Տովմա, յԱւուդ-
թէ ի Տրուանիքոր, և կամ Հոլկար՝
ՀՀոդկաց եթէ զՀագարացւոց պաշտէր

զգեն: Համայն և յաղթութիւնք Սպանիացոց կանգնեցան ի վերայ վայրենեաց, որք թափուրք էին ի դպրութենէ, որք անդէաք էին պիտառութեան հրահալից, որք չէին մղեալ անասնիկին է գործ, որոց հնաբք զնուց էին միայն պարսպարինք և փուշք ձկանց, որք հրեշ խառնագաղանս համարէին զհեծեալսն յերիվարս, որք զջօրս հրազնեալս առ կախարդս ունէին՝ բաւական ի վտարել զրոտմունս և զփայլստակունս երկնից: Ի նուաճել լինդից վեցուց զշնդիկս, ժողովուրդ աշխարհին առանապատիկ առաւելցը թուովքան զԱմերիկայիս պարտեալս ի Սպանիացոց, և գոգջիր հաւասար յաղթականացի: Կանգնեալ էր նորա քաղաքս ընդարձակս և հյուգակապս քաղաքս քաղաքս և ապարանս բարեալս, ոիլու և բազմածախս քան զԱմերիկային մեծափառ՝ որ ի Սիլվլ: Էին նորա սեզանից ձոխագոյնք քան զՃախագոյնու

ի վաճառականաց՝ որ ի Բարսելոն և Կադիս, Նախարարք, որոց պայծառութիւն անցանէր զանցանէր քան ըլլիարեփառին Փերաբինանասայ, այրուձի անբաւ, և գունդագունդ հրազնութիւնք՝ որ զարմանս ածէին և զօրավարին մեծի: Արժան էր որոց միանդամ փոյթ ինչ իցէ զոյլ և այլ մասանց պատմութեան, հետազոտել և գիտել, եթէ զիմրդ նուազունք ոմանք, զորս ծով համատարած ի հայրենէացն անջրպետէր, ի սակաւ ամս աիրեցին միումի յաղթ պէտութեանց աշխարհի: Այլ եթէ ոչ խաբիմք չարաքար, յորովք յընթերցնելեաց խորչին ի ձանձրութենէ անհամ գրենոյն՝ որ աւանդեն զայ:

Թերւութեան պատմագրաց իցեն թերւ և յանցանք յայսմ մասին, մեծավաստակ մատեան Միլոյ վերջանայ ի բազլ երանդ և ի կենդանատիպ նկարագրութեանց, որ զբոսացուցանեն զընթերցասերս: Որպէս ի կերպարանս բանից և ի կորովս նկարուց ոչինչ ի վայր քան

շայլսի յանդղացի պատմագրաց, թար
թարփի ՚ի մանուշա ձանձրացուցիչս .
մինչև ի միում ուրեք ի համրաց գրոց
իւրոց՝ ծախելնմա ի վէպ անցնիւր երկ-
օրեայ անցից՝ բազմատար էջ մի գրեթէ
ողջոյն: Նմին իրի պատմութիւն նորա
հաւատարիմյոց յաւանդս, և ի գար-
ձուածու բանից վայելագեղ, ոչ հաշա-
կեցու երբեք, և գուն ուրեք այժմը.
թեսնու ոք զայն:

Խիթամբ եթէ մարթիցի և դրոց
աւան Յովհանիսի Մելքոնաց յանկու-
ցանել զընթեռնին՝ վաղ ուրեմն սար-
տուցեալսի Միլայ և ՅՈՒմեայ: Նիթք
արգարի յորդցաք աւանդեցան Մելքո-
նայ ի Պալմիայ, այլ թէ արօւեստարար
պատշաճեցան այնք ի պատմութիւն ,
զայն տակ ոչ ունիմք: Սակայն ոչ է օ-
րեն այգանել զգիրս որ ի վայելութիւն
գայր ամփոփութեամբ՝ տարերք և ձա-
հաւար կարգու, եթէ յերկարեին կետնք
մատենագրին՝ առ ի կատարել և յղել
զայն: Մատիւր մանաւանդ նումբը ըլ-

հաճոյս հատուցանելոյ զնորհակալիս
մեր՝ տղնուական տոհմին, որում՝ ընդ-
պարանեաց պիտանի և նորանշան գի-
տելեաց՝ գատանիմք չնորհապարտ:

Խելամութիւն մատենին, թէ և նե-
րեսցուք իսկ զամենայն ակնառութիւն,
որով տաւեալ և տաեալ իցեն տեղեկու-
թիւնք նորին, բնաւ իսկ պանծացու-
ցանէ զբարս Կլայվայ: Ապաքէն հրա-
ժարիմք մեք ի համամութենէ Մել-
քոմայ, որոյ սէր գլէ զմիրով կենսա-
գրաց, և որ ի գործո գրուատելոյն իւ-
րոյ՝ ոչ այլ ինչ կարէ տեսանել, բայց
իմաստութիւն և արգորութիւն: Այլ
և քաւ լիցի միաբանել մեզ ի գմնեայ
գատաստան Միլայ, որ վարկարարի
պատմագրէ զգնացս Կլայվայ: Կլայվի-
բրէ զյոգունս ի մարգեանէ զգածեալս
բուռն կրիւք և ի հզօր հրապուրանաց
փորձեալս, յանցեաւ չտրաշար. բայց
որ ի բովանդակ ասպարէզ կենաց նո-
րին քաջիկ ակնարկիցէ, խստավանեսցի
աներկեայ, զի կողին Անդզիս բերեի ի

գիւցազունս և ի տէրունիս, դուն ու-
րեք յարոյց զոք վէհ քան զնա ի զէնս
և ի խորհուրդս:

Կլայլեանք անդստին յերկոտոսան
դարէ ընտէկին ի գիւրագին վլճակի ու-
րեք ի Շրոպշայր գաւառի: Առ թագա-
ւորութեամբն Գէորգայ առաջնոյ տի-
րէր գուղաքեայ և վաղեմի ժառանգու-
թեանս այսմիկ՝ Հալչարտ Կլայլ, այր
աննենդ և անընդունակ մեծի աջողակու-
թեան: Կրթեալ էր նա յիրաւագիտու-
թիւն, և բաժանէր զժամանակ իւր ի
զբազանս օրինաց, և ի ինամա կալրւա-
ծոյն: Կին ածեալ զգուսար ուրումն
Գասպիլայ, եղե հայր բազմաթիւ ազգա-
տոչմի: Հասբէրտ որդի նորա երէց, հա-
ւակ բրիտանիկ ինքնակալութեան ի
Հնդիկս, ծնու յամի 1725, ի քասնէ-
րորդ իններորդ աւելւր ամսեան սեպ.
տեմբէրի, ի վաղեմի վիճակի անդ նա.
խահարց իւրոց:

Վաղ իսկ նշմարեցան ի մանկանն այ-

րական բարուցն տիպք: Գոն գեռ նա.
մոկանի գրեալ յազգականաց նորին,
այն ինչ տղայ եսթնամեայ էր նա. և է
տեսանել անտի, զի և յայն սկզբնաբոյս
տիս զօրաւոր կամք նորա և կիրք հրա-
բորբոք գրգեալք յանլէհեր բնաւորու-
թենէն, որ երբէք երբէք ի խելայեղու-
թիւն թուէր զառածանել, անհանգըս-
տէն զընտանիս նորա: Քեափնորա ասէ
զնմանէ. Ի բնէ բերի ի կոււ. որով
այնպէս վայրագանայ և խրոխայ, մին-
չև ի վեր վաղել նմա յամենայն սնոտի
գէպս: Յիշեն տակաւին գրացիք նորա
ալեորք լոււեալ ի ծնողաց, զիարդ մա-
նուկն Կլայլ ելանէր ի գլուխ երկնա-
բերձ գմբէթի եկեղեցւոյ իւրեանց. և
եւը բազմեալ հուպ ի ծագ անդը, ահա-
բէկէր զամենէսին ի տեսիլ վասնդին:
Պատմի գարձեալ եթէ հրոսակ հինից
արարեալ նորա ի պարապորդ մանկաւոյ
քաղաքին, բանազբուշը զիրպակաւորս
հարկել ինքեան ինձորս և գանկս. փո-
խանակ այնր գրաւականեալ զանձն ի

պահ պատուհանաց նողին : Յզեցաւ դը
պրոցէ ի գպրոց . ոչ ուրեք ուսեալ ինչ
ըստ պատշաճի , և ամենայն ուրեք ստա-
հակ համբաւեալ : Ասի զգացեալ ու-
րութի վարժապետաց նորա , և նախա-
ձայնեալ , թէ աղայն յշլ հանդերձեալ
էր այր անուանի լինել յաշխարհի . այլ
ամենեքւան համարեին զհէքն Հռոբերտ
մանուկ թանձրամիտ , թէ արդեօք և ա-
պիրատ : Ընտանիք նորա , որ ոչ իմիք
ակն ունեն յաղամարութենէ նորին և
ի խեռութենէ , ինդամիտ ընկալան նմա-
զպաշտօն գորի վոճառակցութեան Ա-
րեւելան Հնդկաց . և արկին դնակ նաւ ,
դնալ մեծանալ , կամ մեռանել ի ջեր-
մանէ ի Մադրսա :

Ոչ էր Կլայվայ ակն ունել բախտի
պարտմանաց , զորս այժմ ամի ամի ար-
ձակէ վարժարան Անգլիոյ ի կայս ինք-
նակալութեան աղքին յ Ասիս : Վաճա-
ռակցութիւն Արեւելան Հնդկաց կոչէր
յայնժամ ջոկ իմն լոկ վաճառականաց .
և վիճակ նորա ի Հնդկոս ունել սակաւ

արտավարս , ընդ որում հարկս հարկա .
ներ բնիկ պետութեանց երկրին : Զօրա-
կան նորա սակաւաձեռն՝ հազիւ թէ բա-
ւէր յամբութիւն գզեկաց երկուց և
կամ երից՝ անարուեստ կանգնելոց ի
պահ շումսարանացն նորին : Պահակա-
պահըս այսորիկ նուսազունք՝ ըստ մեծի
մասին կազմէին ի Հնդկաց . որոց չկ ևս
մարդեալ ըստ օրինի վինուսարութեան
Եւրոպացւոց , և վասէին՝ որ յասպար և
ի սուսեր , և որ յազեզն և ի նետ : Ոչ
էր պաշաննեից վաճառականացն վարել
զիրս իրաւանց , գրամոց և գեսպանաց
մեծի աշխարհի , որպէս յայժմուս , այլ
սահանալ զալիւամոզիս վաճառաց , կան-
խել ոստայնանկաց զդինս անկուտածոց ,
բառնալ բեռինս 'ի նաւ , և ակն առա-
մանաւանդ 'ի վաճառականս օտարս : որ
իշխիցեն իրամատել զիեկին շահավա-
ճառանոցա : Տրուպ գպրաց նոցին այնքան
դպին էին վարձք , մինչև հազիւ կարել
նոցա ընուլ զկարմոր պէտս իւրեանց ա-
ռանց անկանելոյ ի պարտիս : Իսկ երի-

յագոյնք ի նոցանէ պարապեալ յուրոցն
վաճառաշահութիւն, ձոխանային յանձ
նիւր չահուց, և որ կարենին հասանել
ի կատար անդր պաշտամն իւրեանց,
մթերէն անձանց մեծութիւնս բա-
զումս:

Մարդաս, ուր կարգեցու կլայլի
գործ, զառալին թերես ուներ յայն-
ժամը տեղի ի գաղթականս վաճառա-
կանաց մերոց: Ի գարէ հետէ կանգնէր
անդ յապալէր ուրեք վայրի կոծելց ի
յարածուփ ծովէ ամրոց նու, Սուրբ
Գէորգ անուն, և ելեալ առ նովաւ քա-
ղաք մարդաշատ, որպէս ելանեն յա-
րելս քաղաքանի հանդիտարագ գոմե-
նոց մարդարէին: Եին իսկ անդր ի բացի
և բազում սպիտակ ամարանոցք, շրջա-
պատեալք յիւրաքանչիւր գրախալց.
ուր յետ տոօրեայ վաստանց՝ մեկնէին
ձոխը ի պաշտանէից անտի վայելէլ ի
զուլ սղօխս չնչեալս ի մուստ արեու՝ ի
ծոցոյն ինդիտալց: Վաճառական աւա-
գանեցս այսոցիկ թուի զակատեալ ի

զեղխութիւնս, ի պերձանս և ի կեն-
ցալ բազմապայծառ քան զատենակա-
լոց և զբաղաբավրաց վեհից՝ որ յա-
ջորդեցինն զնոսս: Այլ գիւրութեան
կենաց պակասէր նոցա խելամոռութիւն:
Հայթայթանիք յուրաք՝ որ այժմ ամո-
քեն զտապ օգոց, զառողջութիւն կազ-
գուրեն և յերկարեն զիեանս, անծա-
նօթք էին: Սուազագոյն լինէին յայն-
ժամ երթեւէք յեւրոսպա, և նաւար-
կութիւն զհըռուանդանուն Բարեյուսայ,
որյաճախ յեւսամնեայ աւուրս արարաւ
առ մեօք, յերկարաձգէր զամփս վեց, և
մերթ ևս աւելի քան զամ մի է Այսր
աղագաւ Անգվածոցն յայնժամ ի Հըն-
դիկս առաւել խորթանայր ի հայրե-
նեացն: առաւել զաւածանէր ի սովո-
րութիւնս Հնդկաց, և նուազ ի գար-
ձին ի ճահ գայր ընկերութեան Եւրո-
պացւոց քան զարդիս:

Յամրոցի անդ և ի սահմանս նորին
օճան առեալ Անգվածոցն ի պէտութե-
նէ Հնդկաց, արձակ վարէին իշխանու-

թեամբ. որպիսի էր և հանուրց Հնդիկ
տեարց մեծամեծ կալուածոց ի սահ-
մանս իւրաքանչեւր. այլ չէր նոցայե-
րազեալ երեք զինդիքի ինքնիշխան զ-
րութեան: Տիրեր անգ ի շըշակայ եր-
կրին իշխանն Կառնատիկայ, Նորաբի ի
Հնդկաց անուռանեւալ փոխանորդ նախա-
րարին Տէքանայ, Նիզամ կոչեցելոյ. “ը
և ինքն փօխանորդ ևեթ էր այնր մե-
ծայզլթ իշխանի, զոր նախնիք Մէծն
Սողու առաջնեն: Անուանքս այսորիկ,
երբեմն վեհք և ահաւորք, կան միան
տակաւին: Ետ տակաւին իշխան ի Կառ-
նատիկ, որ կեայ ի ոսձնէ զոր Անդ-
զիացիք հանեն նմա ի հասից գառաւին,
ուր հարք նորա իշխեցին: Ետ տակաւին
և նախարար ոմն, զորայ պակուցանեն
զմայրաքաղաք պարեկապանք Անդզիա-
ցոց. և ոսմիկան նոցա պատրիւակաւ
իրատու՛ տայ նմա հրամանս անհակա-
ռակելիս: Ետ գարձեալ և Մողու ոմն տա-
կաւին, որում ներեալ է ունել ընդ խաղ-
ղաբքունիս, և զաղերսանս ընդունել.

բայց ի նպաստել և կամ ի վըստել ու-
մեք անզօր է քան զյետին պաշտօնեայս
վաճառա՛անացն Անգլիացւոց:

Նաւագնացութիւն Կլայվայ տաղա-
կացյց զնա չարաչար և յայնմ տիս:
Զամփոս ինչ զկայ էտա նաւն ի Պրազիլ.
ուր պատանին բախտախնդիք ուսոււ
հարեւանցի զբարբառ ըրւսիտանիկ. և
զբարմն իւր վասնեաց իսպառ: Աւելի
քան զամփի յամեալ ի ծովու, ապա հա-
սանէր ի Հնդկիկս: Ի վիշտան հնարին ան-
կու ի Մագրաս. արծաթ նորա սպա-
ռեալ, թօշակ գուշնաքեայ, պատահար
պարտուց. օմեւան նորա յոռի և գժո-
խմբեր, ի հահանգին ուր Եւրոպացւոց
ի լայնալիր և ի բարեգիր սենեակս ևեթ
մորթի տոկալ տապայ օդոց: Տուեալ
էին նմա թղթեան ընծայութեան յա-
նուն ուրուք, այլ միջանել Կլայվայ ի
Մագրաս, նաւեալ էր սա յԱնգլիա:
Անհամբոյր և տմբար հաւաճ բնաւորու-
թիւն պատանւոյն ոչ թողլցը նմա ըն-
ծայեցուցանել զանձն օտարաց. և զ-

միս բազումն եղեալ ի Հնդիկս, ապա
ծահոթանայր միակ ազգատոհմի : Ա-
ռովզութիւն նորա և աշխայժք նուա-
զեն, յօդոց նահանգին, և ինդախ և է-
սանդուն բարուցն ոչ ի ճահ պատահէր
պաշտօն նորին : Գեղձոյր և հառաչէր
առ հայրենիս, և ի թուզմո իւր առ ազ-
գականն՝ մերկանայր սրտառուչ զան-
ձուկ խանդազաւելի, որում ոչ էր ակն
ունել ոչ յապառում մանկութենէ նո-
րա, և ոչ ի զարգուն տիցն անամուելի
դժեռութենէ : Քանզի գրէր, Յորմէ հե-
տէ մեկնեցայ ի բնիկ երկրէս, չեղե ինձ
վայելել և ոչ յօր մի բարեբաստիկ : Եւ
յաւելյոր. ի խորհեն՝ իմում ի սիրելին
իմ հայրենիս, գելանի սիրտ իմ : Եթէ
հասանիցէ ինձ նսեհ դառնալոյ անդր
վերստին, և մանաւանդ ի բոն քաղաքն
իմ՝ ի միջավայր ընաւիցո իմոց ըլքից,
ամենայն ինչ զոր մարթի յուսալ և
ցանկալ յանդիման լիցի ինձ միահա-
զցն :

Այլ եգիտ նոս պատուական իմն սիր-

փանս. զի էր կուսակալին Անդղիացոց
մատենադարան աղնիւ . և տուաւ նմա
անդր մտանել : Եւ յաճախեալ պա-
տանւոյն յընթերցանութիւն, ստացաւ
յայնժամգրեթէ զամենայն գրադիտու-
թիւն իւր : Զարաչար յուլացեալ էր
ի մանկութեան . ի պատանեկութեան
փոյթ կալու մեծաջան ի բանասիրու-
թիւն :

Բայց ոչ օդոց վատախառնութիւն,
ոչ կարօտութիւն կարեորաց, ոչ գրոց
փոյթ և ոչ թախիծք անձկարեկ նժդե-
հութեան՝ կարացին ի համբոյր ածել
զամեհութիւն յանհանպաստն մտաց
նորա: Գնայր նա ընդ վեհագունից իւ-
րոց ի պաշտամն՝ զոր օրինակ գնա-
ցեալ էր ընդ վարժապետաց ի գորոցի.
յաճախ ի վասնել լւալ կորստեան
պատաման իւրոց: Ի բնակել նորին ի
վոնս գորաց, երկիցս փորձեցաւ ան-
ձին առնել, և երկիցս ոչ արձակեցաւ
հրազէնն կըսեալ ի գլուխ իւր: Այս
ապրանաց ասի ազգեալ ի նա, որպէս

Հանգունաւոր փրկութեան ազգեալէր
ի Վալենսակն : Զննեալ նորա զզէնն , և
զմիշ լրութիւն նորին ստուգեալ , ձայն
արձակէր . Անշուշտ առ մեծ ինչ ապրե-
ցայ :

Ձայսու ժամանակաւ այն ինչ ամե-
նայն յօյս Կայլայ թուէր ի գերեւ ե-
լանէլ , գէպք յէղակարծում հորդեցին
նմա նոր վէրէլս ի պայծառութիւն :
Եւրոպա յամաց հետէ պատազէր ի պա-
տերազմ պայտատութեան Աւստրիա-
ցւոց . Գէորգ Եր' բորդ արքայ Անդ-
զիացւոց սերա նիզակափից էր Մարե-
մայ Թերեզյան . իսկ տունն Տօրբոնայ զշա-
կառակ կողմն ունէր : Անդլիւյանժամ
իսկ թէպէտ գէրազօր ի ծովու , չեւ ևս
կարէր անդուգեական զինուք ձայն տալ
ընդգէմ ծովամարափի զօրութեան հո-
նուրց ազգաց աշխարհի միահամուռ . և
ծանր թուէր նմա ընդ համագումար
նաւատորմի Գաղղիացւոց և Ապանիա-
ցւոց մլէլ զմարտ : Զօրանայր Գաղղիա
ի ծովս արեւելց . Լազուրատնէս կու-

սակալ Մաւրիտանիոյ , այր մեծահան-
ճար և առաքինի , առաջնորդէր արշա-
ւանի յէրկիր Հնդկաց . և թէպէտ զզէմ
կալու նմա նաւատորմ Անդլիւյացւոց ,
նաւեաց հաս էջ ի ցամաք . զօր գումա-
րեաց , եկի երեւցաւ առաջի Մագրա-
սայ . և հարկեցայ զքաղաքն և զամբոց՝
խօսէլ ի խաղաղութիւն : Առան փա-
կանք քաղաքին և մմերք վաճառաց Անդ-
լիւյացի յամթականայն , իբր ի մրցա-
նակ մարտի . և գրոն գաղղիացի պարզե-
ցաւ զամբոցաւն : Պայմանեալ էր յուխ-
տին խաղաղութեան գրել քաղաքայ-
նացն՝ ըստ բանի լոկոյ՝ ի կալանաւորս
պատերազմի , և քաղաքին կալ ի ձեռս
Գաղղիացւոց , մինչև փրկանաւորեցին .
Լազուրատնէս գրաւականեաց զպատիւ-
անձին , ոչ ինդրել փրկանս ծանունս :

Սակայն ընդ յաջողութիւն Լապուր-
տոնեայ խանդայր հայրենակից նորին
Տապէս կուսակալ Պանտիչէրեայ : Այլ
և երկնեալ իսկ էր սորտ ի մաի խոր-
հուրդս հսկայածնս . որով անդէպ գա-



տէր գարձուցանել զՄագրաս յԱնդ-
զիտցիս: Սմին իրի զեկոյց նա նոցա, զի
Լապուրտառնէս ելեալ էր ըստ կար պայ-
մանի իւրոց, զի կուսակալին ևեթ Պոն-
տիշերեայ անկ էր անօրինել զաշխար-
հակալութիւնս գաղղիսական զինուց ի
Հնդիկս. և զի հիմն ի վեր կործանեացի
Մագրաս: Հարկ եղե Լապուրտառնեայ
տեղի տալնմա, և ցասուցեալ Անդիկա-
ցւոց ընդ գրժանս ուխտին, գրգռեցան
ևս քան զես ի տմարդութենէ անտի,
որով վարեցաւ Տոպլէս ընդ նշանտորս
ի նոցանէ: Քանզի զկուսակալն և զյո-
գունս յերսելեաց տմրոցին՝ յուեալ ի
ձեռն զինուորաց ի Պոնտիշերի, ետ անդ
հանդիսիւ շընեցուցանել զինոս ընդ
քալաքնի մեսիլ բիւրաւոր մարդկան:
Այսու թանձրագոյն դրժանօք հասա-
րակաց հաւատոց՝ համարեցան Անդիկա-
ցիք լուծեալ պարտուց ուխտին կուելոյ
ընդ Լապուրտառնեայ. և կարի յիրաւի:
Փափէւաւ կայզը գիշերաւ ի քաղաքէն,
ծպտեալ ի ձեւ հագարացի, և անկաւ

յամուրը ուրեք Սուրբ Դաւիթ. անուն,
ի մի ի փորունց անդիկական գալթա-
կանաց ընդ հրամանաւ Մագրասայ:
Ի գիպաց աստի յաջողեաց նմա հա-
սանել անջան ի պաշտօն պատկանաւոր
անհանգարատ և անահ բարուց իւրոց,
քան զզնութիւն լաճառաց և զչոգո
հաշուոց: Զի խնդրեալ և ընկալաւ ըզ-
կարգ զինուորի. և ամսց քսան և միոյ
եմուտ ի զինուորական ասպարէզ իւր:
Արիութիւն սրտի, զոր մինչդեռ գպիրն
էր, եցոյց ակներեւ ի գմնդակ ուրեք
մենամարտի ընդ յօխորս և կոռւասէր
ումեմն զինուորի ահարկուի ամրոցին,
հռչակեցոյց զնա վաղ ի միջի յոլովից
անդամ քալաց: Ի նորում անդ պաշ-
տամանն սկսան անդէն յերեան դալ և
այլ բարեմանութիւնք նորաց ցայն վայր
անհմարելիք զքօնութիւն և արագու-
թիւն մոսց, և ակնածութիւն օրինա-
ւոր իշխանութեան: Եահատակեալ նո-
րա յայլ և այլ խառնուրդս մարտի ընդ
Գաղղիսցիս յինքն ձգեաց զուշ Լարեն-

սայզօրագլիքի, աջողաւգունին յայնժամ
ի սպայս Անդղիացւոց ի Հնդիկու:

Ի կալ Կլայվայ զամաս քանի մի ի
զօրուն, զըոյց եհաս անդք հաստել
հաշութեան ընդ Անդղիա և ընդ Գալ-
ղիա: Նմին իրի հարկեցաւ Տոպլէս զար-
ձուցանել զՄագրաս. և պատանին զօ-
րական՝ դառնալ ի նախկին զբազանս
իւր: Մատեաւնա միւսանդամի սեղան
գրոց. այլ եթող զայն վէրստին առ ի
ձեռն տալ Լաւրենսաց ընդդէմ ասպա-
տակի հինից Հնդկաց. և դարձաւ ան-
դրէն ի նոյն: Այն ինչ այսպէս տատա-
նեալ տարաբերէր ընդ հարգս վաճա-
ռականի և զինուորի. գէափ սահմանէ.
ցին զընտրութիւն նորա: Քաղաքավա-
րութիւն Հնդկաց առնոյր կերպարան
նոր. և թէպէտ խաղաղութիւն էր յեւ-
րոսա, այլ ընդ Անդղիացիս և ընդ Գալ-
ղիացիս պարապեալս ի նախանձընդդէմ
վաճառականութիւն արեւելց, յարեւա-
պատերազմ հարեւոր և բազմովուանդ.
պատերազմ, որ մատուցանէր ի մրցա-

նակ զամենապայծառ ժառանգութիւն
տանի թամուըլանկայ:

Խնդակալութիւնն կանգնեալ ի վեշ-
տասան գարուն ի Բաբերայ և ի Մողո-
լաց նորին, եկաց ընդ Երկար մի ի լայ-
նածաւալ և ի մծափառ պետութեանց
աշխարհի: Ոչ ուրեք որպէս ի նմա այն
քան բազմութիւնն ժողովրդոց ընդ մովլ
կայր իշխանաւ յԵւրոպա. և ոչ որպէս
անդ յորդեալ ուրեք մուտք գանձուց
որգունի: Վայելըսւթիւն և պայծառու-
թիւն արքունաց նորա՝ յապուշ կըր-
թէին և զուղեւոր ծանօթս եկեղեցւոյ
սրբոյ Պետրոսի ի Հռովմ: Գահչյը Գել-
հեայ շուրջ պատեալ յանհամար ոս-
տանէաց և ի բազմափայլ սպասուց,
խոսպէին և զասս ընդելեալսի շուք Վեր-
սայլի: Եին ի մեծամեծ նախարարս Մո-
զուաց, որոց թիւ հպատակաց հաւատա,
րէր բազմութեան ժողովրդոց արքային
Գաղղիայ և կամ ինքնակալին Գերմա-
նացւոց: Փոխահորդաց անդամ փոխա-
նորդացս այսոցիկ մարթէր ըստ սահ-

մանաց իշխանութեան և ըստ յաձա,
խութեան գանձուց՝ դասել ընդ դքօին
Տոսկանայ և ընդ իշխանին Սաբոնիոյ:

Սակայն չկը երկմտել, զի տեսչու-
թիւն այսր մեծի ինքնակալութեան՝ փե-
րեւտեալ վէր ի վերոյ զրութեամբ և
բարեբաստութեամբ, յուեգոյն դատ-
նէր և ի բարեհշան աւուրս իւր քան
զյուռեգոյնս ի կարգաց արդի տեսչու-
թեանց Եւրոպայ: Յանձնանձնիք իրաց
աշխարհին շաղախեալք տմենայն ախ-
տիւք միահեծան տէրութեանց Արեւ-
լց, և ամենայն ախտիւք բանութեան
աղջել ի վէրայ ազգի, և ընդգիմամարտ
գահամիրութիւնք իշխանազանց՝ դոր-
ծէին զոմիրս և զաղէտս հասարակաց
անսպասելիս: Փառամոլ փոխանորդք
ինքնակալն՝ էր զի թէկն ածէին զինին
իշխան աւագութեան, և գժկամտկեալ
վայրագ ազգայն Հնդկաց ընդ ըւծ օ-
տար, զանային զշտրկս յահախ. և ի
լեռնային ամրութեանց իւրեանց վա-
նեալ զզօրս արքունի, գային թափէին

սպառազէն ի բարձանց՝ ասպատակէլ
ընդ յուսութի անդաստանս: Աակայն մե-
ծազօր տէրութիւնս այս՝ թէպէտ յար
ի յուսութիւնս ևս յանձնանձնաց անկ-
զիտացեալ, թէպէտ մատնեալ մերթ ի
տագնապս գժնդակս, յորոց կազմած
ընկերութեան մարդկան ասսանէր հա-
մայն, երեր ընդ պարագայս ամաց զե-
րեցիթ միութեան, ժրութեան և փա-
ռաց: Բայց ընդ բազմամեայ իշխանու-
թեամբ Եւրոնդգիրայ՝ ոչ ինչ օգնեալու-
խարհին յամենայն արութենէ նորին և
ի քաղաքավարութենէ, ընթանայր ի
կորուստ: Յետ նորս մեռանելց յամի
1707, աշագին էր երագութիւն աւե-
րածոյն, զի ի սասատիկ թափոյ արտաքին
հարուածոց զայրացեալ անթութելի ախ-
տին՝ որ առանին ձարակէր, բայբայէաց
ընդ սակաւ ամս զինքնակալութիւնն
զայն իսպատ:

Վէպ յամորդաց Թէսոսի բերէ ոչ
սակաւ զննմանութիւն պատմութեան
յաջորդացն Արոնդգիրայ, այլ անկման

Մողլաց տպաւորտգյն արդեօք ըն.
ծայէ զուգակշխա՝ անկումն կարուեան
զարմին: Այն ինչ թաղւալ մեծին կարու-
լայ, սկսան սերունդը նորին խօթամը-
տութեամբ և գժառաթեամբ առ զան-
ձին յանարդանս, և զհպատակն ի կո-
րուստ: Լայնածաւալ պէտութիւն նո-
րա պատակեցու ի բիւր բաժինս. և
մեծահուշակ տանն անմեծար ժաւան-
գորդաց, Ճաղատ, և Յոյր, և Ծանծաղ
յուրջութելց: «Տ այլ ինչ միոյր՝ բայց ա-
նէակ և էթ անուն աւագութեան: Հրո-
սակ այլածին, այլառէ զու, այլադէն և
ամենի ազգաց գրոհեալ գոյր գորգես
համագունդ ի ծագաց երթի, աւար
հարկանել զդաւասս անպատասարս ի
պետութենէն. հէնք Հեւսփային ծո-
վուն՝ տարածեալ զաւերածս անդստին
յելայ գետայ մինչև ի Պիրենեան լէ-
րինս, տպա զկայ տանուին ի բազմաբեր
հոգտին ՍԵնայ. Հանդարացին, յորում
ահաբեկ միանձանց թուէր հանացէլ ըլ-
գութեալն ի մարդարէն զՊովդ և ըլ-

Մագովդ, տանէր զաւար քաղաքանւոյն
Լոմբարտէայ ի խորս Պանսնեան անսա-
սաց. Հագարացիք տիրէին ի Սիկիլիա,
և յաղարտ վարեալ զբարեբեր դաշտո-
րայս կամբոնից, արհաւերս արկա-
նէին շուրջանակի, մինչև առ պարիսպս
իսկ Հոռիմայ: Ի տառապանս յայսոսիկ
այլայլէին տարեբք տէրութեան տշխար-
հին համակ. զի երը ապականացու մա-
հու եռայր և յանէր ի նորանօր կեր-
պարտին կենաց: Ի համօրէն կարկամել
մեծամտրմին զանգուածոյ ամբոխի մարդ-
կան, որպէս թէ բոլը անզգայ և անխը-
մբար, սկսան մէն մի մասունք նորին ու-
րոյն զգալ և խըսել ընտւ իսկ ինքնա-
շարժ բերմամբ: Աստանօր ի տիսուր և
յամոււ միջոցի եւրոպական պատմու-
թեան՝ սկիզբն անուն ամենայն յառա-
ջաբաժինք վլճակաց, և ամենայն արդի
աղնուտկանութիւնք: Աստանօր հետա-
զատէմք զզօրութիւն այնց իշխանաց, որք
ընդ պատրուտակու հպատակութեան
ինքնիշխանք ըստ արդեանց իրաց, ազդի

ազգի յորջործանօք աւագութեան տիրեցին ընդ երկար, գոփեն յամենայն սահմանաւէթեան մեծին կարուց :

Այսպիսի կամ գրեթէ այսպիսի պատահեաց փոփոխութիւն և, ի մողութեան ինքնակալութեան՝ ընդ ամու քառասուն՝ յետմահու Աւրունդզեբայ : Թագաւորք թարմատարք յօրացեալք ի գրգանս, և փակեալք յանմատոյց արքունիս, ըստ Հեն զանձինս ի շուայտութիւնս, ի գրգուսնս հարձից և ի լուր հացկատակաց : Արիւնախանձ ասպատակաւորք ի ջանէին անդադար ընդ կոտանս լերանց արեմաից, առ ի յափշտակել զանգտարսպար ճոխութիւնս Հնդկաց : Պարսիկոնն աշխարհակալ անցեալ ընդ Խոդոս գետ, խալայր գայր զօրօք ընդ պահակ Իթէհեայ, և առեալ տանէր յաղթանակաւ զդանձն զայն, որց ճաճանչ շատ ցոյց զնուոյ և զՊերնիէր, զքահն առեմ զԱրտամարդ . յոր ի քաջագոյն ճարտարաց եւրոպացւոց ընդելուզեալ էին պատուականագոյնք ի գոհար ականց Պոլ-

կոնգայ, և զադամանդն անդին, Լեասն րուսոյ անուանեալ, որ յետ յոլով նշանաւոր շրջանաց՝ փաղփեալ յապարան ջան Հունձիտինիկայ, այժմ պճնէ զանդեղեայ գրուեալն Որիսաոյ և Ազատ ընդ հուպ զնեա գային Ալուանք, առ ի կատորել զոր պարփին սկսաւ, զգործ աւելիանաց, Թօթափէին պատերազմա, սեր ազգք Հռաճպւտամայ զւուծ Հագարացւոց, գունդ վարձկան զօրաց ունէր զՆայիկոնտ, միսին Սիդայցիք ընդ Խոդոս, և Յոսէք աչ արկանէին յափունս Յոմայ գետոյ : Ի վերնագտաւաց անտի՝ որ ձգին ընդ արեմանեան ծովնչերս Հնդկաց, իուշէր հեղեղաբար վիրագ ահագնագոյն, ազգնոր յերկար զարհուրեցւոց զոմենայն Հնդիկու, և որ զնեա բազում ահաւոր և կեզակործ ճագանց աեղի ետ բախտի ևնթ, և հանձարայ Անդղիացւոց : Ար թագաւորութեամբն Աւրոնդզեբայ՝ էջ նախ ի լերանց իւրոց գաղանամիտ ճեռա այս յելուզակաց, և վաղ իսկ յետ մահու-

Նորա ուսաւ ամենայն խորշ լայնատարած աշխարհին սոսկալի լուր աշեղ անուան Մարատաց : Բազո՞ւմքերրի նախարարութիւնք նուաճեցան համօրէն ի նոցանէ . և տարածեցաւ աէրութիւննոցա ծովէ ընդ ցամաք : Զօրապետք նոցա իշխանին ի Պունա , ի Գոււլիոր , ի Կուլերատ , ի Բէրար և ի Տանիւր : Սակայն և հասեալ ի չափ յաղթեշխանութեանց , բերէին տակաւին ըզբարս աւաղակոււնախնեացն , և ոչ գագարէին յաւարառութենէ : Ամենայն դաւառ , որ ոչն հպատակէր նոցա , տպականէր յասպատակէ նոցին : Ուր ուրեք լսելի լնէր գափիւն թմբկաց նոցա , ստանձնեալ շնականին զպարկ որիզոյն , և զդոյշն արծաթ իւր թագուցեալ ի ծոցի , փախստական գնայր կնաւ և որդուվք ի լերինս և յանտառս , առ հեղափոյն գրացիսաւոր բորենիս և առ վագերս : Բազո՞ւմք փրկանաւորէին զունձս իւրեանց տարեոր տրովք . և ուրուն իսկ վատչուէր՝ որ զինքնակալութեան տա-

կաւին բերէր զանուն , զիջանէր և նա ի նոյն սակ ամօթապարտ : Յարքունեաց անտի Դելչեայ տեսաւ երբեմն խարյկ բանակի աւազակապետի ուրուք . և այլ ոմն ի գլուխ ամբոխասաստ հեծելազին ասպատակէր ամի ամի յանդս որիզոյ ի Բենդալը Եւ Եւրոպացիք գլխովին զոփային զմթերանոցաց իւրեանց : Այսչեւ ևն ամբ հարիւր , զի հարկ եղեւ ամրացուցանել զկալկաթա՝ յերեսաց այրուձիոյն իւրաբայ . և անուն Մարտունեան իրամի՝ մշոնչենաւորէ զվտանդին յիշատակ :

Ի յարակայել ուրեք նախարարաց Մողլայ յիշխանութեան , աիրէին միահեծան : Իցէ նոցա խոստովանեալ բանիւնախագահութիւն տոհմին Լէնկթիմուրի . զորօրինակ խոստովանէր իշխանն Փլանտրաց զտկարագունին և զիմարագունին ի յետնոց անտի սերնդոց մեծին Կարոլայ : Իցէ նոցա երբէք երբեք արարեալ իսկ մեծարանս և պարդես՝ որումթագաւոր իւրեանց անուանէր , և կամ

իսութեալի նմանէ նշանակ ինչ պատռոյ .
այլ ըստ արդեանց իրաց ոչ ևս էին նո .
քա գաւառակալք ըստ հաճյու նորա .
փոփօխելիք . այլ որդի ի հօրէ զինքնիւ .
խան ժառանգեին պետութիւն : Այսու
օրինակաւ սկիզբն կալան այն մեծատոհ .
մութիւնք Հագարացոց , որք յառաջ
ժամանակաւ իշխցին ի Բենդալ և ի
կառնատիկ . և որք տակաւին ի գէմա .
հպատակութեան թագաւորեն իմն ի
Լաբնաւ և ի Հայարապատ :

Զի՞նչ ելք մնայր այսմ աղմբկի . յեր-
կարէլ էր գուստարին պարագոյց ամօք ,
թէ վճարել ընդ յառնել այլը ինքնա-
կալութեան . Հագարացոց թէ Մարտ-
աց էր տիրել ի Հնդիկս . միւսում ար-
դեօք ումեմն Խորեայ էր իջանել ի լե-
րանց , և առաջնորդել սիդակազմ՝ ազ-
գաց Քաբուլյ և Խորասանայ . ի Վ. րայ
Տօխագունի և անպատերազմասէր ազ-
գի : Ոչ ինչ 'ի կարծեաց ասաի թուէր
ան չնարին . այլ ոչ ոք և ի Կորովամը-
տաց ի մորդկանէ հնարաւոր համարէր

վառառականաց ոմանց , զր հնդեատասան
հազար փարսախաւ անջատէր ծով ի
Հնդկաց , ուր սակաւուց ևեթ արտա-
վարաց գետին էր նոցա ի պէտս վաճա-
ռաշահութեան , աարածանել զտէրու-
թիւն իւրեանց ընդ ամս նուազ քան
զհարիւր , անդստին ի Փոմորին սարա-
ւանդէ մինչև ի մշտնջենաւոր սաւամա-
նիս Հիմալայայ լերանց . ստիպէլ զՄա-
րաս և զՀագարացիս մուանալ զիւռ
իւրեանց հասարակաց ի նուաճումն իւ-
րեանց երկաքանչեւր . զգօնացուցանել
և զազդս վայրենիս , որ հզօրագունին
Մորուաց ի գդէմկալան . և միաբանեալ
ընդ օրինօք իւրեանց զբիւր բիւրս հպա-
տակաց , ածել զյազդական զէնս անդը
ընդ արեելս ի Բորամզուտէր և ընդ ա-
րեմնւտսի Հնեւդասպիս . թէլագրելի գը-
րունն Աւայ զպայմանս խաղաղութեան .
և զկամարտը իւրեանց նստուցանել ի
գահյոյ Կանդահարայ :

Որ նախկին ծանեաւ , զի յաւերակս
մոլուեան ինքնակալութեան մարթ էր

կառուցանել պետութիւն եւրոպական, այս այն էր Տուլիս: Արթուրն և Լոյնատարը և հնարիմաց մաք Խորհեալ էր նորա զայն, միջդեռ ածովագոյնք ի պաշտօնէից վաճառականացն Անդղիացոց՝ ի համարս դնոց և մթերից վաճառաց և էթ զբաղէին: Եւ ոչ միայն զայն առաջի եդեալ էր նորա նպատակ, այլ և խելամուեալ որից և անվիշտ հնարից հասանելոյ ի նոյն: Ետես յայտ յանդիման, զի ամենայն զրաւթիւն՝ զոր մարթէր հնդիկ իշխանաց հանել ի ճակատ, ոչ կարեր կաւ ի կշիռ ընդ փոքու դնդի զօրաց հրահնդիւոց և առաջնորդելոց բաս ռազմական հմտութեան Արևմտից: Ետես գարձեալ, զի մարթէր մարզել զՀնդիկս ընդ եւրոպացի հրամանատարք, և յարդարել զնոտս զօրականս. որոց և Արքուս և Փրետրիկ պահծային զրավարէլ: Դիտաց կշիռ գտակաւ, զի գիւրագոյն և դիպաւորտուցն հնար ըզբամբ ածելոյ առա եւրոպացւց զդերագոյն իշխանութիւն ի Հնդիկս, էր

Վարել զվարաց երկրին, և խօսել լնդ բերան պաղպաջօւն իմն պաճուճապատանց բազմելոյ ի բարձ հնդիկ իշխանի: Արուեստիցն պատերազմի և քաղաքավարութեան, զոր յետ սուզ ամաց ի կիր արկին Անդղիացիք բազմահռչակ յաջողութեամբ, նախիկն խելամուեալ և հետամուեալ գոլե Գրազիացիս այս հանճարեղ և աւագատենէ:

Արմէր Հնդկաստան, և բռնութեան դուն ուրեք պակասէին անդ բաղբաղյաք ինախին օրինաց և ինոր սովորութեանց: Անտոյդ էին անդանօր ամենայն իրաւունք, և որ խառնէինն ի վէճու Հնդկաց Եւրոպացիք, յաճախէին զավմուկս, յարեալի քաղաքավարութիւնս Ասիս ըզբամարկաց օրէնս Եւրոպայ, և ոչ ինչ խարեալ զայլեայլ հանգաման վիճակակալութեանց աշխարհացն երկոցուն: Եթէ ի գետ թուէր ինքնիշխան դնել ըզբկուսակալ հնդիկ, յօդէր փաստ ճարտար ի ջատագովութիւն, և առնուլ առնոյր նա զրութիւն ինքնիշխան: Եթէ ի

գէպ թուէր ունել զնա առ փոխանորդ
և թարգունեացն Դիւշեայ չէր գժուա-
րին և զայն վարդապետէլ զի էր իսկ
այնպիսի առ առս : Եթէ ի գէպ էր զիւ-
խանութիւն նորս գրել յաւագութիւն
ժառանդական, կամ միայն մինչև ցեւանս
յէրկարածիք, և կամ ի կամ Մոլոյ
թողեալ, առ այս ամենայն սադրանս
հայթայթէին ասպացոյցք և յարացոյցք:
Որ ի ձեռին ունեին զժուանդ Բարե-
րաց, յանդիմոն առնեին զնա իբր ան-
կեզակարծ հարազատ և միաչեծան ինք-
նակալ, որում այլոց ամենայն կուրու-
կալութեանց հարկ էր հզառակել իսկ
այլք, որոց ի գէմս ածէր պնուն նորա,
ոչ կարօտէին ընդունելի բազբազանաց,
առ ի պնդէլ եթէ լրւծեալ էր ինքնակո-
լութիւն նորա ըստ արդեանց, և թէ-
պէտ ի ճահ իսկ իցէ մեծարել զՄոլոյ
իբրև զպատկառելի նշեար ինչ իրաց ան-
ցելց, անդէպ էր գրել զնա բուն տէր
աշխարհին Հնդկաց :

Յամի 1748 վճարեցաւ ի կենաց ոմն ի

Հզօրտգունից ինորոց տերանց Հնդկաց,
Ալմուկ նտիութար Դիքանայ. և իշխա-
նութիւննորա անց յորդին իւր Նազիր:
Իմարզլց այսր մեծի նախարարութեան՝
կառնասալկ փարթամագոյն էր և ընդար-
ձակագոյն, ուր տիրէր կուսակտլ ոմն
վաղեմի, Անաւերտի յԱնդղիացոց կո-
չեցեալ:

Սակայն և այլք թէկն ածէին և զնախ-
տարի երկրին, և զիշխանի գաւառին:
Միրզափա թոռն Ալմուկայ անցանէր ի
հանդէս իբր ոսոխ Նազիրաց . և Զոնդա-
հոր նախանի կուսակալի կառնասալկայ,
վիճէր զիրաւանց Անաւերտեայ : Առ
տարանմութեան հնդիկ օրինաց գիւրին
էր և Միրզափայի և Զոնդայի կցիցելիւ-
րեանց իրաւունքա և 'ի զեղծ ամբոխի
տնդ գտանել երկարանջեւը կուսակիցս
ընչպացոս առ ի զհետ երթալ դրօ-
շուց նոցին: Միաբանեալ նոցա յօդուտ
երկարանջեւը, յարձակեցան ի կառնա-
սակ, յօդնութիւն կարգացեալ զՓաղ-
վիացիս, որոց դեռ ևս հռչակեալ էր

յաջողութիւն զինուց ի մարտին ընդ
Ախղիացիս, առ ծովեղերքն Կորուման-
տելոյ:

Եւ ահա պատահար ըստ սրափ խորա-
գիսին և փառասիրին Տոսղեայ, առնել
կուսակալ զոմն ի կառասաբիկ, դնել
նախարար զաք ի Դեքտն, իշխել ի դէմն
նոցաընդ հարաւային Հնդիկս առ հասա-
րակ, ովհչրապուրական ակնկալիք: Դաշ-
նաւորեալ նորա ընդ գահամիրացն եր-
կոցուն, արձակեաց յօդնականութիւն
նոցա եսեքհարիւր այր գտղղիացի, և
երկու հաղար Հնդիկ հրահանդեալ ըստ
օրինակի Եւրոպացոց: Մշկու պատե-
րազմ, և Գաղղիացիք արարին իւրեանց
փառս: Որաւերափ մասնեցաւ ի պար-
տութիւն և ի մահ, և որդի նորա Մա-
հոմէա Ալի, այն որ իբր իշխան Արքո-
տայ համբաւեցաւ ապա յԱխդղիա, և
որ ի սկերճաբանութենէ Բոբքոյ ընկա-
լու անմահութիւն՝ զկարի անհախան-
ձելին, առեւլ զդոյզն կաց մնաց զօրուն,
անկաւ ի Տրէնիսպոլս, և տիրեցին յադ-

թականիքն առ ժամայն գոդցես ընդ ա-
մենայն կամնատիկ:

Այս ոկիզքն ևեթ էր փառացն Տօպ-
էայ: Զ սմիսս ինչ մորտուցեալ, և պատ-
գամաւորեալ, և խորամանկեալ. և
թուէր ամենայն ուրեք զօրանալ բախ-
տի նորա և աջողութեան: Նազիր խող-
խողեալի համախոչից. Միրզափա տի-
րեալի Դեքտն, և յաղթանակ գաղ-
ղական զինուց և նախարապութեան կա-
տարեալ էր: Ի Պանախերի խմբէր տօն
ցնութեան, հեղէին բոմբիւնք հրեաից
ինդակցականք, և օր հնաբանութիւնք
երդէին յիհեղեցիս: Նախարարին նո-
րապսակ գայր անդր յայց նիզակակը-
ցին. և գահակալութիւն նորա տօնէր
անդանօր մեծահագէս հանդերձանք:
Տոպէսս արկեալ զիւրե զհանդեռ ու-
տանիկ հագարացւոյ, մտանէր ի քա-
ղաք անդր, բազմեալ ընդ նախարարին
ի նմին գահաւորակի. և յաւագախումբ
ատենին՝ որ զշեան գայր, զառաջին կա-
լեալ տեղի: Եւ քարոզ կարգայր կեց-

յէ Միրզափա նախարար Հնդկաց : Խւանութիւն նորա գերագոյն տնդամքան զԱնդայ, ընդարձակէր անդստին ի Քրիստոնյաց գետոյ մինչև ի սարաւանդն կոմորին, ընդ լցոնութիւն երկրի գոդցես հանդոյն Գաղղիս . և յանձնեցաւ նմա հրամատարութիւն եօթն հազար հեծելազօրաց : Հրամայեցաւ ոչ ևս ներել ոյլում գրամցի Կառնատիկ, բայց միայն որ վարերն ի Պոնտիչերի : Ի մթերից գանձուց նախնի նախարարացն Գեքանյայ եմուտ մասն մեծ յարկդ գաղղիացի կուստիկալին . և համբաւ ընթանայր զննունէ, ընկալետլ քսանի բիւրո գրամակշոյց * . թող զբաղում ականս պատուականս : Արդարիւ շահուց նորա հազիւ գոյր եզր զի գոգցես միապետէր նու յայնժամ զերիս հազարս բիւրուց մարգկան . ոչ բարձք և ոչ վարձք ելանէին ումեք արքունուստ, եթէ ոչ զնա

* Դրամակը իմանամք ի գրկոյս յայսափէ զստերլինկ դրամանդղիացի :

յաղերս ածեալ : Ոչ ընթեռնոյր նախարարն զաղերս ուրուք, եթէ ոչ կնքեալ ի նմանէ :

Միրզափա զամփս ևեթ քանի մի գա, չոսկալեալ, զբաւեցաւ ի կենաց . բայց այլ իշման ի նմին տոհմէ ել ի գահ ի ձևակ Փաղղիացւոց, և տիրացցց զամենայն խոսամունս նախորդի իւրոյ : Տոպլէս արքայօրէն յայնժամ տիրանայրի Հնդկիս, և մեծաբանէին հայրենակիցք նորա, իբր թէ ահիւ անուանել նմա և ի սենետակս իսկ արքունեացն Գելէնայ : Յապուշ հարկանէր ժաղավորդ Հնդկաց ընդ գիմագրաւութիւն առն մից եւրոպացւոյ, որ ի սուլ ժամանակի չարից ամաց հասեալ էր այնպիսում իշխանութեան յԱսիտ : Այլ գաղղիացին բարձրայօն ոչ յագենայր երական զօրութեամբ, և մատիառեալ ի ցոյցս, պերճանայր ի վերայ հպատակաց իւրոց և նախանձորդաց : Մերձի տեղին, ուր գաղպատվարութեան նորա կալեալ էր զւողմանակ իւր նշանաւոր,

արկեալ յիշխանութենէ զնտպիր , և
ընդ նորա ամբարձեալ զՄիրզափա , եդ
ի մոփ հանդնել ախոյեան . զորով ար-
ձանագիր չքեզաշուք ի քառից գիմաց
ի բարբառ քառեակ՝ զիմասնորա քա-
րոզեսցէ ազդաց և ազանց Արեւլից :
Դրաշմածք , յոր գրուագեալ էին յա-
ջողութիւնք նորա , եդան ընդ հիմամբ
կոթողին . և շուրջ զնովու կառուցաւ
քաղաք , ամբարտաւան անուամբ կո-
չալ ֆատլապատ Տոպեայ , որ լիի առ
մեդ՝ Քաղլաք յաղթութեան Տոպեայ :

Անդվացւոց փորձեալ էր փորձ աը-
կար և յաղդողդ , առ ի կասեցուցանել
զարագ և զպայծառ ընթացս սոսինաց
իւրեանց , և յար զՄահոմէտ համա-
րեալ կուսակալ Կառնատիկայ : Սա-
կայն իշխանութիւն Մահամետայ ամ-
փոփէր ի Տրիշնոպոլիս , որ պաշտրիւր
յայնժամի Զանդայ և ի գաղղիացի հա-
մահարզից նորին : Լուծանել զպաշտ-
րութիւն զայն թուէր անհնար . զի սակա-
ւաձեան զօրուն՝ որ էր ի Մագրաս , ոչ

գյոր հրամանատար : Լուրենս նաւեալ
էր յԱնդզիա . և չմնայր ի գաղթականին
զօրավար անուանի և ոչ մի : Հնդկաց
ուսեալ էր գամահէլ զազդն մեծագօր ,
որում առաջի կայր յաղթել և իշխել
նոցա ընդ հուաւ : Տեսեալ էր նոցա սա-
ւանեալ զամրոցաւն Անդվացւոց ըզ-
դրօս գաղղիացիս . ահսեալ էր ձա-
ղեալ զականաւորս յԱնդվացւոց ան-
տի ընդ հրապարակս Պանակերեսայ .
տեսեալ էր գարձեալ ամենայն ուրեք
յաջողեալ զլինս և զնորհուրդս Տոպ-
էայ . այն ինչ Անդվացւոց կամեցեալ
ընդգէմ կալ ընթացից նորա , նշաւա-
կեալ էր մլայն զակարութիւն իւրեանց ,
և զիմասնորա յոլովեալ : Յայսմ պա-
հու քաջութիւն և հանձար անդվա-
ցւոյ ուրումն պատանւոյ աննշանի շըր-
ջեցին յանկարծակի զգնացս բախտին :

Կլայլ էր յայնժամ ամաց քսան և
հնդից . և վարանեալ առ ժամանակ մի
ընդ կենցաղ զօրականի և վաճառակա-
նի , կացեալ էր ապա յասականութիւն

զօրաց, յորում կցորդէին պարտք եր-
կաքանչեւր կարգաց, և ընկալեալ զաս-
տիձան զօրագլխի. և արկածք մօտա-
լուսք զարթուցին զամենայն զօրու-
թիւնս նորա: Աղդ արար աւագագու-
նից իւրաց, զի եթէ Ճիգն ոչ գործէր
ուժին, անկանէր Տըլէինոպոլիս, Ա-
նաւերաեայ ջնջէր զարս, և Գաղղիացիք
տիրել տիրէին բովանդակ աշխարհին
Հնդկաց: Հարկ էր հարկանէլ հարուած
քաջանդուգին. յարձակիլով յԱրքոտ,
ի մայրաքաղաք Կառնատիկայ, ի ցան-
կայի գրգարան Հնդիկ իշխանաց, չէր
անմարթ լուծանել զպաշարումն Տըլ-
էինոպոլէայ: Պետք անգղիացի գաղթա-
կանին խովվեալի յաջողութեանց Տու-
լեայ, և զանգիւտեալ, զի ի յանձնէլ պա-
տերազմի ընդ Գաղցիա և ընդ Անդզիա,
անդէն առցի և կործանեսցի Մադրաս,
հաւանեցան ընդ Խորհուրդ Կլայլայ.
ի նա ինքն յանձն արարեալ զիատա-
րումն նորին: Պատանին զինուոր էանց
եկաց ի գլուխ երկերիւր անգղիացի զ-

րաց և երեքչարիւր Հնդկաց մարզելոց
ըստ օրինակի Եւրոպացւոց: Յութից
անտի զօրապետաց, որք ի ձեռանէ նո-
րա հրամայէին այսմ փառու գնդի, եր-
կոցուն և էթ միայն մաեալ էր ի պատե-
րազմ. և զըրեսին ի նոցանէ զլսմա-
ռականս՝ օրինակ արւոյն Կլայլայ յոր-
դորեալէր ի զինուորութիւն: Ամբովոք
յուղէին զօրս. այլ Կլայլ ի չու ան-
կեալ ի ճայլթիւն որոսմանց և ցոլումն
փայլատականց, ճպէր յանձրեսի ի գը-
րունս Արքուոյ: Պահակասպանք ամրոյն
խուճապեալք յերկիւլէ՝ լքին զայն.
և Անդկացիք մաին անգր անպատե-
րազմ:

Բայց գիտել գիտէր Կլայլ զի չէր
իւրանիւով ժառանգել զլսմթութիւն
իւր. նմին իրի սկսաւ նոյնհետայն ամ-
բորել պարէն, պատանէց կանգնել, և
կաղմել ի տոկ պաշարման: Իսկ պահա-
կապահացն փախուցելոց յերեսաց նո-
րա, սթափեալ ի զարհուրանաց, և յո-
րոց ի մերձակայ կողմանց հասանէին ի

թիկունս, ստուարացեալ մինչեւ յերեք
հազար այր, բանակ հարին առ քաղա-
քաւն։ Ել կլայվ յամրոցէն ի խոր դե-
շերի. և անկեալ յեղակարծում ի վե-
րայ բանակին, սրակոխ արար զբա-
զումս, և զայլս վարատեալ, դարձաւ ի
կայսիւր. ոչ կորուսեալ յիւրոցն և ոչ
զմի զբ։

Ենաս զրոյցս այս ընդ հուպ առ
ջոնդա, որ ընդ գաղղիացի նիֆակակիցս
իւր պաշարէր զԾրիշինոպոլիս։ Առ ժա-
մայն զատոյցնա ի բանակէն չորեքհա-
զար այր, և արձակեաց ՅԱրքոս։ Յա-
րեցան վաղ ի ջոկատս յայս և կաց մնաց
զօրացն այն ինչ հալածելոց ի կլայվայ,
և երկու հազար այր եկաւոր ի Վելլո-
րայ. և որ կարեւորագոյն ևս էր, հարիւր
և յիսուն զօրական գաղղիացի, առա-
քեալ ի Տոպլեայ։ Այսմ բոլոր բանա-
կի, յորում գումարէին արբ իր տասն
հազար, հրամայէր Զուաշս Սահիբ որ-
դի Զոնդայ։

Զեռն էարկ Հռաջա ի պաշարումն

ամրոցին Արքոնասայ, որ բնաւ իսկ ան-
զօր թուէր ի գիմակալութիւն։ Պա-
րսպագնորա խարխարունք, իրամք ան-
ջըրդիք, պատնէչք անձուկք և անտարք
հրետից, և պոտուարք ցածոնք անբա-
ւականք ի պատոպարութիւն զօրակա-
նին. սակաւաճեռն պահակապանք նորա
նուազեալ յարկածից՝ մնային հարիւր
և քան այր եւրոպացի, երկերիւր
հնդիկ, և չորս և եթ զօրապետ։ Կար-
մէին համբարք. և հրամանատար ամե-
նավարան գիմամարտին էր պատանի ա-
մաց քսան և հնդից, դպիր և եթ համա-
րակար։

Զաւուրս յիսուն յերկարաճգեցաւ
պաշարումն. զաւուրս յիսուն վերա-
մարտիկ եղեւամրոցին զօրավարն պատա-
նի այնու պնդութեամբ, տքնութեամբ
և ալողակութեամբ, որ պատիւ առնէին
և երեցագունին ի սպարապետու Սակայն
օր քան զօր յամախէին չարիք, և զդայը
տակաւ գունդոն զնայթ քաղիթ։ Վառ-
րանջէր արգեգք ամենայն զօրական այս.

պէս մատնեալ ի տառապանս, և գրեթէ
ամայի ի զօրապետաց, և տառ յաւելոյի
վտանդն ի զօրու կաղմելոյ յարանց այ-
լազանից ալզաւ, գունով, լեզուաւ,
բարուք և կրօնիւք : Այլ նուիրութի
գնդին ի սէր զօրավարին՝ անցանէր զա.
մենայն իւէք, որ աւանդի զատնեարդ
Լեզենէ Կեսարու, և կամզհնաւուրց
զինուորաց նապոլէսնի : Մատեան հըն-
դիկ զօրքն առ կլայվ, ոչ առ ի տրանջել
զրոյզն պարենից իւրեանց, այլ տուած-
արկել նմա, զի տմենայն ունդք տացինի
թոշակ Եւրոպացւոց, որ առաւել տուա-
ծիչ կերակրոյ կորոտին քան զիսիտ-
ցիս : Յատ է մեղ, տուն, հիւթն ջրջուռէ
յորիլզյ խարչելոյ ծորեալ : Զիք ի պատ-
մութեան քան զայս գորովագոյն օրի-
նակ զինուորական հաւատարմւթեան,
և կամզ զօրութեան իշխանական մտաց :

Տեսչութիւն Մագրասայ փորձեցաւ
ձեռն տալ ամրոցին . այլ ի գերմ ել
փորձ նորա . բայց այլ ուստիք գոյր
յոյս : Գումարտակ վեց հազար Մարտ-

տաց, ի կիսոյ զօրականք և ի կիսոյ սրի.
կսյք, վարձականեալ էր ընդ զօրավա-
րութեամբ Մորարի Հռոտնուռութումն
յօդնութիւն Մահոմետայ . այլ անպար-
տելի վարկուցեալ նոցա զզօրս Գաղ-
ղացւոց, և հաւասարի զաղմութիւն
Զոնդայ, անգործ կային յեղերս սահ-
մանաց կանանտիկայ : Սակայն հոչտկ
համբաւայ գիմամարտի Արքուայ յա-
րոց զնոսա յանգործութենէ : Մորարի
ասէ . Ոչ կարծէի մնաւ կարել մարտըն-
չել Անգղացւոց . կամսկար այժմ օգ-
նեցից նոցա . փոխանակ զի սրտապնդին
անձամբ օդնել անձտնց : Աղդ եղել Ճռա-
ջայ զի խորտէին Մարատք, վասն որոյ
պարա էր ձեւպել նմա ի գործ : Հնարե-
ցաւ նախ բանագնաց լինել, և կաշուել
զկայվ . այլ մերժեաց սա զմեծամեծ
կաշտոս նորին արհամարհանոք : Ար-
դուաւ ամփ Հուածտ յարձակել իսկոյն
յամրոց անդր, և ի սուր գատել զամե-
նայն ամրականս, եթէ ոչ ընդունիցի ըզ-
պայմանս իւր : Պատասխանի արար նմա

Կլայվ ըստ Խրոնտ բարուցն, և ասէ.
Վաշխակեր հօր որդիք, խաժամուշ
Խուժանի տռաջնորդ, բարւսք տրաս-
ցես Երկիցս Խորհել, մինչ չել յղեալ
զարօ քո վասա ի մարտկոց ուրեք պահ-
պահեալ յանեղլիացի զօրոց:

Խորհուրդ կալսւ Հռաջա անկանել
անդէն ի վերայ ամրոցին: Եւ օրին պատ-
շաճէր խիզախ շահատակութեանց պա-
տերազմի. զի տօնտօմքէր ի նմին յիտ-
տակ Հիւսէինաց որդւց Ալեյ: Զիք
ի բովանդակ պատմութեան Հագարա-
ցւոց Խանդազառելի քան զպտաձառս
այսր մեծահանդէս տօնի: Աւանդէն
վէտքն ողբատկանք զիարդ իշխանն ֆատ-
մակոնաց, ի տապաստ տնկանել զիւրեւ
իւրոցն ամենեցուն քաջոց, էարը ըզ-
յեաին կաթել ջրոյն, և զլերջն ազօմս
իւր բարբառեցաւ. զիտրդ որիկայքն
տարան զբլութ նորա յազմանակաւ.
զիարդ բռնտուրն զանկենդան շրթունս
նորա գտաւզանեաց. և իւր լալտգին յի-
շէին ծերունիք ոմանք տեսեալ համբու-

բել մարդարէին զըրթունսն զայնոսիկ:
Ի վերայ անցեալ է իւր երկոտասան
դարուց, և ահա դարձ տարեկան տօնին
արկանէ ի վայրագութիւն և ի տրտմու-
թիւն անհնարին զսիրտս բարեկրօն Հա-
գարացւոց ի Հնդիկս: Զառանցին առ
զայրոյթ, և մոլեգնին յողբոց. մինչև
ծփումն առնել խելաց, և փէլ ոմանց
զոդի: Հաւատան Հագարացիք՝ զի որ
ոք ի տօնի աստ սուսեր ի ձեռին անկա-
նիցի յանկրանից, քաւէ զամենայն մեղս
իւր և առժամայն սանայ ի դրախտանդր
փափկութեան: Եւ յայսմ տարեկանի
մուաբերիաց Հռաջա յարձակել յԱր-
քոտ: Բաշխեցան դեղորայք ի զօրուն,
առ ի գրգռէլ զնախանձ գէնին. և ա-
մենեցուն զլեմեալ յաւիւն զառանցա-
նաց և գեղոց, գրոհ ետուն անդր մոլէ-
դին:

Կլայվայ երազեկ լեալ Խորհրդոյն ի
ծածուկ, կազմակալ էր ի գիմանարտ, և
խոնջ անկեալ յանկողին: Զարթուցեալ
ի շոնդն ամբոխին, և կալսւ զկայս

իւր: Գայլը թշնամին, վարեալ յառաջց
զիիլու երկաթապատս ի ճակատն: Դըր-
դուեին արգեօք դրանդիք ամրոցին ի
բախիւն կենդանի բարեանացն այնոցիկ.
բայց ի զդալ վիթխարի գաղանացն ըզ-
ուումբս անդզիական հրազինուց, դար-
ձան կատաղեալը, և սրացան ի բաց,
առաթուր հարեալ զամբոխն՝ որ վա-
րեն զիսսա: Խջայց ապա թշնամին լսաս
ի ջրաւոր կողմն խրամին. տեսէալ կայ.
վայ զարս իւր որ յայնմ կուսէ կային,
վի ասրագէպ կամէին զդէնս, ընթացաւ
կալսա ինքնին հրեա մի. և ի վայրիեան
ժամանակի ջախչախնեաց զլաստն համա-
ջինջ: Ել ապա թշնամին ընդ անջուր
կողմն խրամին անվենէր, այլ և անդ
այնպիսում պատահեաց տարափոյ քա-
ջաձիք շամիթից, որ վազնուածնաց և ըզ
խրախսյան նախանձայուզութեան և ար-
բեցութեան: Վերջապահը սազմիցն
Անդզիացւոց ընուին և փօխանակէին
անդադար զհրագէնս առաջապահիցն.
և ամենայն գնդակ տապաստ արկանէր

զդի ի խռանէ անտի ի ստորեւ: Երիցս
յարձակեցաւ թշնամին զայրագին, և
ապա նահանջեցաւ յետկոյս խրամին:
Տևեաց գուտարն իւր զմի ժամ. և
անկան ի թշնամւոյն արք չորեքարիւր,
և ի պահակապանացն հինգ և կամ վեց
միայն: Զգիշերն զայն անցուցին Անդ-
զիացիք անքուն ի տարակուսի, գէտակն
կալէալ գարձագարձի յարձակման: :
Խայց ի լինել այգուն՝ ոչ ևս ուրեք եւ-
րեւր թշնամին խռասեալ ի բաց. և թո-
զեալ զշրեստ իւր և համեար բազում:

Ի հաշակ համբաւոյ այսր յաջողու-
թեան ցաւ գլւակին Սուրբ Գաւիթ հըր-
ձուանօք և պարծանօք. և Կլայդ յերա-
փի համասպատիւ համարեցաւ ընդ ամե-
նայն հրամանատարս: Առաքեցաւ նմա-
երկերիւր այր անդզիացի և եօթն հա-
րիւր հնգիկ, և այսու զօրու ել նա ան-
դէն յարձակել ինքնին ի թշնամին: Խառ-
զամուրն Տիմերի, և գումարեալ ընդ-
ջոկատի Մորարեայ, չու առնէր հապ-
ձեպով հասանել ի վերայ Հռաջայ, որ

զօրավարէր արանց իբր հինդ հազարաց .
յորոց երեքարիւր Գաղղիացիք էին :
Տուաւ մարտ սաստիկ . և Կլայլ լի կա .
տարեալ կալաւ յաղթութին . արկդ
գանձուց Հռաջայ անկաւ ի ձեսս յաղ-
թականին . և արք վեց հարիւր ի զօրաց
նորա անցին ի բանակ Անդվիացւոց , և
զինուորեցան նոցա : Կոնճեվերամ զէն-
ընկէց եղեւ անբանադատա . և կուսակալ
Առնեայ ելիք զՁոնտա , և յարեցաւ ի
Մահոմէտ :

Եթէ առաջնորդութիւն պատերազ-
մին բոլորովին յանձն լինէր ի Կլայլ .
փութով արքեով վճարէր գործն : Բայց
երկչուութիւն և անբաւականութիւն
երեեալ յամենայն շարժուածս Անդ-
վիացւոց , ի բացակայել նորա ուրք ,
յերկարաձգէին զգուապարն : Հծէին
Մարատէ՝ թէ այլաբունք էին զօրք նորա
քան զԱնդվիացիս դիպեալս նոցա այլ-
ուր : Ի ձահ առեալ Հռաջայ զգանդա-
ղանս նոցա , եկն երեեցաւ հուպ լոնդ
հուպ գրեթէ ընդ հրեաիւք սուրբ Պէ-

որդ ամրոցին , բազմակոյտ բանակաւ ,
յորում զինուորէին Գաղղիացիք չորեք-
հարիւր . և յաւեր դարձոյց ջնմարա-
ստանս և զգարաստանս ականաւորացն
ի գաղթականին : Ի դիմի հարաւ նմա-
սնդրէն Կլայլ , և խորտակեաց զիա : Եւ
կորեան ի Գաղղիացւոց արք աւելիք քան
հարիւր . կորուստ գմնդակագոյն քան
զՃնդկաց հազարաց : Եւ բանակն յաղ-
թական խտայր գնայր յասպարիզէ
պատերազմն , գէմ եգեալ ի դղեակն
Սուրբ Դաւիթ : Յանցս ձանապարհին
կանգնէին քաղաքն Տոպլէայ , և կոթող
մեծաշուք ի յիշատակարան յաղթանա-
կացն Գաղղիայ յԱսիա : Հրաման ետ
Կլայլ յատակել զերկաբանչւր , իբր ոչ
Եթէ առ քինու մտաբերեալ յայն , այլ
առ խորիմաց և արդարակորով քա-
զաքավարութեան . քանցի քաղաքն և
մեծափառ անուն իւր , կոթողն և սնա-
փառ արձանագիր իւր՝ կախարդէին որ-
պէս բժժանք Տոպլէայ զիստ ամենէ .
ցուն ի Հնդիկս : Կլայլայ անկ եր լուծա-

նել զհմայսն։ Ուսեալ էր Հնդկաց, զի
Գրադիս առենազը խոստավանէր յա-
մենային աղքաց եւրոպականաց, և զի ոչ
ոք յաւակնէր մաքառէլ ընդ նման զնախ-
իշխանութէնէ, և ոչ իւիք մարթ էր
ցրել զցնորսանոցա, բայց հրապարակաւ
տապալեալ զնախակս գալզիսական յալ-
թանակաց։

Խրախուսեալ տեսչութեան Մագրա-
սայ ի յաջողութեանց աստի, խորհե-
ցաւ յզել ընդ ձեռամբ Կլայվայ դու-
մարակ հզօր յօգնականութիւն պա-
հակապանացն ի ծրիժնոսպոլիս։ Սակայն
չև յարդիւնս եկեալ խորհրդոցն, ժա-
մանեաց Լաւրենյէրկրէն Անդզիացւոց,
և էաւ զհրամատարութիւն զըրուն։ Ի
ստահակութէնէ անտի և յանսաստու-
թէնէ զոր յանձին եթեր Կլայվ եթէ ի
գարոցի և թէ ի վաճառանոցի, կասկա-
ծէլ իսկ էր, զի յետ այնքանեաց բազ-
մահանդէս վաստակոց՝ ոչ տարցէ սպաս
յորդորամիտնախանձու կալովի ձեռա-
նէ։ Բայց Լաւրենս վաղ ուրեմն սէր

արարեալ էր ընդ նմա և յիրաւունս
Կլայվայ ասելի է, զի թէպէտ այր դուսող
և գմէնեայ, ոչ վատնէին գութ և գորով
արկեալնմա յայլոց։ Եկաց նա զուարթ
ընդ հրամանաւ վաղեմի բարեկամին, և
յէրկրորդունն կարգի աշխատ եղեւ որ-
պէս զիարդ և յաւաջնունն մարթէր
նմա։ Գիտէր և Լաւրենս զյարդ այնքա-
նոյ օգնականի և թէպէտ ոչ վիճակեալ
իմացականութեան գեր ի վերայ հասա-
րակաց առողջ մատաց, այլ ի միտ առ-
նոյր զբաջամանութիւնս պահծալի ա-
ջակցին։ Ուսեալ էր նա ոճով զարուեստ
զինուորական, և հանդցին այլոց ըստ օ-
րինի ի գործ ինչ կրթելոց՝ բնաւորեալ
ընդ ակամբ հայել յարս օտարատե-
սուչուն, այլ մեծախոհութեամբ խոստա-
վանեալ թէ արտուզութիւն էր Կլայվ
յաւորեայ կանոնաց, գրէր այսպէս։
Հաճոյ թուի ոմանց արդասիս գիպաց
և ձիրս բախտի կոչել զյաջողութիւնս
Կլայվայ։ Այլ ըստ իս, որ գիտեմ զնա,
արժան էր նմա ի գնացից իւրոց տկն

ունել ամենայնի, որպէս զիարդ և գիւղաւ։ Կամք նորա անընկճելի, բնաւութիւն անիւսով, և զգաստութիւն մոաց անմեկնելի ի նմանէ և ի վասնդս ծանունս. այր զօրական ի ծնէ. զի անբաժ ի զինուորական վարժից և ի յաշախ հաղորդութենէ հմուտ զինուուրաց, առաջնորդեաց բանակի՝ ըստ ողջամիտ զգօնութեան իւրում՝ իբրև զօրակար փորձ, և արի զօրական, այնու խոհականութեամբ՝ որ խոստանայրն անշուշտ զյաջողութիւն։

Գաղղիացւոց ոչ գոյր զօրագլուխ բաւական ի գիմակալել բարեկամացն երկոցուն։ Տոպէէս ճարտարութեամբ մարթանաց և գաւանաց՝ ոչ ինչ ընդհատ յայլոց Եւրոպացւոց, որ հանգանակեցին ի յեղափոխութիւնս Հնդկաց, ոչ կարեր իւրօվի առաջնորդել պատերազմի. չէր նորա վորձ և ոչ իղձ զօրականի։ Ամբաստանէին զնա թշնամիքն ի վատութիւն, իսկ նա ջատագովէր զանձն կարկատուն բանիւ. և ասէր ի բացեայ կա-

ցեալի հրացան գնդակաց, զի լուութիւն և անդորր խնդրէին պէտք հանձարոյն, և մտախոհութիւնք իւր խափանէին ի գրնդիւն հրազլնուց։ Ամին իրի հարկ եղել, ասէր, յայլ ապաստան առնել զըրումն պատերազմական խորհրդոց իւրոց, և բողոքէր չարացար զարբանեկութենէ նոցա։ Ապաքէն օժանդակեալ էր նմա բազմավաստակ զօրավարն անուանին Բոսսիք. յայլ չուեալ էրսաւնդ հիւսիս ընդհանիսարարին Հնդկաց, և յարգունիս նորա զբաղէր միայն ի շահ օդափ անձին և հայրէնեաց իւրոց։ Ի զօրապետս, որ կային առ Տոպէէայ, ոչ գտանէր այր աջնօղակ և ոչ մի. և բազումք ևս ի նոցանէ մանկունք էին ափովք. զորոց զանդիտութեամբ և զանմունթեամբ ծիծալդէին և զինուուրք մինլքուրք։

Բայց Անդղացեք յաղթանակէին ամենայն ուրեք։ Ուք պաշարէին զԾըի չննոպուլսն, պաշարէցան ինքեանք, և հարկեցան խուել ի խաղաղութիւն։ Զոհտա անկաւ ի ձեռս Մարատաց, և ի

մահ մատնեցաւ սադրանօք արդեօք ո-
սսիսի իւրոյ Մահոմետայ: Ա.յլ Տոպեայ
ոչ նուաճէին միտք , և ոչ սպառէին հայ.
թայթամկ : Ու աս ընդունէր յ Եւրո-
պայ ոչ նպաստ , ոչ օգնութիւն և ոչ
քաջալէրութիւն . զի սպասաւորեալքն
ի նմանէ գտատպարտէին զշնարս նորա .
և փոխանակ զօրաց առաքէին նմա ըդ-
փախստեայս ևեթ ի կախաղնաց: Ա.յլ
նա տակաւէին յամառէր , կաշառէր ,
մենքենայէր , խոստանայր , վատնէր զար-
ծաթ իւր . զշամբաւ իւր քամէր , հայ .
թայթէր նորանոր հրովարտակս ի Դել
հեայ , ամենայն ուրեք յարուցանէր
Անդլայցոց նորանոր թշնամիս , և ի
գաշնակիցս խկ նոյցին գտանէր իւր սա-
տարս: Ա.յլ զուր չան . զի զօրութիւն
Անդլայցոց երթայր և զարդանայր . և
Գաղղիացւոյն վատթարանայր տակաւ :

Առողջութիւն Ալայվայ գեղեկէր ի Հըն-
դիկս . և այնպէս հիւծեալ էր արդ մոր-
մին նորա , զի եղ ի մաի գառնալ . յ Անդ
զիս : Ա.յլ չե մեկնեալ անտի , յանձն

Էտու դիմել յարշաւան ուրեք տաժանա-
ւոր . և սովորական արութեամբ իւրով
և աղողակութեամբ վճարեաց զայն :
Քանզի սահմանեալ էր արձակել զօրս
ի վերայ Քոմելսնկ և Զինկլեպոտամբո .
շաց . զօրս ունէին Գաղղիացիք . այլ առ
վատթարութեան զօրացն պատրաստե-
լոց ի գործ արշաւանին՝ ոչ ոք բաց ի
Կլցվաց կամեցաւ զօրավարութեամբն
ի վատնդ արկանել վշամբաւ իւր : Զի
զօրականն այն կազմէր ի հինգ հարիւր
նորակարգ Հնդկաց , և յերկերիւր ան .
կիրթ եկաւորաց , որք գես ևս իջեալ
էին յ Անդլայց . արք անազգիք և ժան-
տաժուաք , ելեալք յաւազակարանայն
Լնտանայ: Ալայվ թէպէտ վատառողջ
էր և սկեսպառ , յանձն էտա հրահան .
գել զնոյն զայն խաժամնւժ . և չու տ-
րար նովաւ ի Քոմելսնկ : Ի հարկանել
անդ ի գնդակէ արձակելց ի գլեկէն
ուրումն ի նորանշան զինուորաց աստի ,
ամենեքեան շրջեցին զթիկունս , և փա-
խեան . և դժւարաւ կարաց Կլայլ ժո .

զովել զնոսա անդրէն։ Այլ երբեմն բուշ-
բիւն հրետի այնպէս ահացոյց զպահա-
կերս, զի և յետ ժամուց ինչ գտաւ
ոմն ի նոցանէ սաքրեալ յունջ գըոյ։ Եւ
տակաւ ընդելացոյց զնոսա կլայլ ի վը-
տանդս։ և հանապազ գիմագրաւեալ
ինքնին յարկածս ահագինս, յամօթ
առնէր զնոսա ի քաջութիւն։ մինչեւ ուր
ուրեմն յաջողէաց նմա յօրինել գունդ
մարզիկ ի շարացուք խառնաղանձէն։ Քո-
վելոնկ առաւ։ Եւ ըռւաւ կլայլ զի ջո-
կատ հզօր գայր յօդնութիւն ամրոցին ի
Զինկեպոտայ։ Խնամկալաւ թագուցա-
նել՝ ի թշնամոյն զտարաժամելչուոյն։
և գարանեալ զՃանապարհայն, էհար ի
նմանէ միով հրացանութեամբ արս հա-
րիւր, գերեւալ և զերիս հարիւրս։ Եւ
զհետ մտեալ փախստէիցն մինչեւ ի դը-
րունա Զինկեպոտայ, պաշարեաց անդէն
զամուրն անպատերազմելի ի Հնդիկս։
և խրամատեալ զայն, իբրև կամէր
յարձակել անդր, խօսեցաւ ի խաղա-
զութիւն հրամանատարն գաղղիացի,

և արամբը իւրովք խոյս ետ և ել ի
բաց։

Դարձաւ կլայլ յաղթական ի Մագ-
րաս, այլ վատառովզութիւն ոչ ետ նը-
մա յամել անդ։ Յայնմ վայրի ած կնու-
թեան զՄասկելին օրիորդ, զքոյր նշա-
նաւոր չափաբերին, որ զամն բազումն
եկաց աստեղաբաշխ արքունի։ Նկարա-
գրի նա կին գեղանի, և ըստ պատշաճի
գաստիարակեալ։ և նամականւոյ առն
նորա ասի բերել զառհաւատչեայ խան-
գակաթ սիրոյ։

Եւս հարսանեացն կլայլ ընդ կը-
նոյ իւրում ի նաւ, երթալ յ Անդղիա.
և դարձ առնէր անդր այլափոխեալ
համակ ի հէք և յարհամարհ մանկա-
նէն, որ յառաջ քան զամն տասն վա-
րեցաւ տարագէմ, ինդրել իւր կեանս
իտար աշխարհ։ իւր նա յայնժմաց ամաց
քսան և եօթն. սակայն մեծարել զնա-
հայրենիքն իբրև զմի յերեւելի զնուո-
րաց իւրոց։ Խաղաղութիւն էր յայն-
ժամը ընդ Եւրոպա համօրէն։ ի կառ.

նատիկ և եթ զէն առնուին Անդղեացիք
և Գալղիպացիք ի վերայ երերաց : Բազ-
մաշան հնարից Տապէայ արկեալ էր
խոսլութիւն մեծ ի Լոնտոն մայրաբա-
ղաքի . և արտադ յեղաշըլէլ բախտին մա-
նաւանդ ի քաջութէնէ և ի հանձարայ
կըալիայ , ազգեալ էր անդ ուրախու-
թիւն և ցնծութիւն : Զօրավարն պատու-
նի՛ կոչէր յԱնդղիս գերապանծ մակա-
նուամբ սպարապետ . և նովին մեծ արա-
նք հեղափին ատենակալք նուէրս ի կէն-
դանութիւն նորա՝ ի խրախունս : Իբրև
է հաս անդ , եսես զամենեսին , զի սիրա-
նային և պանծային ի նա : Վաճառակ-
ցութիւն արեւեան Հնդկաց չնորհ կա-
լու նմա զլաստակոցն յոյժ , և մասոյց
նմա սուսեր ականակուռ ի պարգև :
Այլ չքնաղ բարեձևութեամբ հրաժա-
րեաց նա յընդունելց զառհաւատցեայն
զայն երախտեաց , եթէ ոչ նոյն մեծա-
րանք լինէին և Լաւրենաս բարեկամի
իւրում և հրամանատարի :

Անձկալի ողագուրանք ընկալան ըզ-

Կլայլ ընտանիք նորա . որք հրձուէին
ընդ յաջուղութիւն նորին . հաղիւ հասու-
լէալ զիարդ հեղդ և ստահակ մանկան
իւրեանց փոխեալ էր յայր վեհ : Հայր
նորա անհաւատանայր համբաւոյն , մինչ-
և յորժամ լսէլի եղկ գիմամարտն Ար-
քոսայ յԱնդղիս , և յայնժամ համկին
մամայը ծերունին , թէ աղամորն այն
յետ ամենայնի չէր թափուր յամենայ-
նէ : Եւ երթային և զրանային բացա-
տրութիւնք հաւանութեան նորա ըստ
հասանել համբաւոյ բազմափայլ նահա-
տակութեանց որդեսցն . մինչեւ ուր ու-
րեմն զեղունմա ի սէր նորին և ի պար-
անս տարապայման :

Աղդականաց Կլայլայ էր և կարի նիւ-
թական յորդոր ուրախ լինելց ընդ-
գարձ նորա . Արծաթ բազում անկեալ
էր նմա բաժին յաւարէ մարտի . և ա-
ծէր ի տուն Ճախութիւն հերեւ , որով
թափեաց զհայրն և զմիհակն հայրենի
ի պարտուց : Զմիացուած ընչիցն թուեի
ծախեալ նորա յամս երկու . զի կեայր

մեծաշուք, պՃնէր ի հանդերձս պայծառս. ունէր կառս և երիվարս. և ոչշատ համարեալ այսպիսի սպասուք զերծանել յարծաթոյն, մտաբերեաց ի զօրաւորագոյն հնարս արագագոյն սպառելց զայն, այն է ի հակառակամարտընտրութիւնս աւագութեանց յատենի տեսութեան աշխարհին, առ որ արկ և աղերս:

Յամի 1754, յաւուրս աշխարհական ընտրութեան աւագանւոյն՝ այլատարազ էր պետութիւն երկրին. և ատեան նորա վերջանայր գոգցես ի յայտնի գիմարանութենէ: Զատագովք համարձակ ազատութեան վատասրտեալ էին ի յետին ապստամբութէնէ ռամկին: Ազատանին կուսակից արքայի արհամարհէալ յամենեցունց, լքեալ էին ի համախոհից իւրեանց, յամենայն հանձարեղ արանց. և յամաց հետէ գուն ուրեք բերէին զնշանս կենաց: Դոյզն գաս նոցակայիշեալ ի զօրութենէ և ի խոստանց Փրետրիկայ իշխանի, քայլքայեալ

էր մահուամբ նորին իսպառ: Ի գործ աշխարհին կայր յայնժամ գոգցես ամենայն այր մեծահանձար, որում դասու և կոսակցեալն էր յառաջագոյն, և կոչէր զմնձն հասարակապետական: Այլ նորանշան կերպարանս այս ձայնակցութեան խարսումկ էր համայն: Յանձանձանք իրաց աշխարհին յուղէին դժնակ հեռիւ, և ընդդիմամարտ ըդձիւք աւագանւոյն, որ գուն գործէին ընկճել և սայթաբել զվիմեանս: Նիւքաստէլ գահէրէց ատենին, այր տկարամիտ, երկզու, յաշտղկոտ և նենգաւոր՝ ատէր և անդամնէր յոմանց յերեւելեաց յաւագանւոյն, ևս առաւել յատենագլրէն պատերազմի, որում անուն էր Հենրի Փոքս: Սա այր աջողակ, խիզախ և փառասէր, բուռն հարկանէր յամենայն պատեհութիւնս առ ի հակառակէլնմա, յորմէ յանկասկածի ոչինչ երկնչէր և ոչինչ յուսայր զի նիւքաստէլ զանդիտէր զամենայն կեանս իւր և ի տհաճելց զարս բազմահան-

ճարս, և ի մատուցանելոյ վնասա ի բարձու գերակայս:

Նիւքաստել ցանկայր գարձուցանել զերկոսին ատենակալս Սրբոյ Միքայել, միոյ ի չարաբաստիկ աւանաց անտի, որ յամի 1832 ջնջեցան հրովարտակու: Հակառակ եկաց նմա Սահնուիչ, յորմէ ակն ածէր ատեանն ողջոյն. և Փոքս պատսպարտն եղել բանից Սահնուիչը ուժդիմին: Եւ կլայլ, որ ընծայեալն էր Փոքսեայ, և ընկալեալ ի նմանէ մարդասիրաբար, ածու ի մէջ ի զօրավիդն խորհրդոյն Սահնուիչը, և մէրժեցաւ: Այլ սուլքեաց կլայլ զմերժմանէն. և հերթեաւ բոլորին ամենայն զօրութեամբ Նիւքաստելայ:

Քննեցաւ վէճն ըստ օրինի ժամանակին ի դատաւորաց, առաջի բովանդակատենին: Խնդիրք ընկալութեանց համարէին յայնժամանախոհութեանց հեթինդիրք. ոչ ոք ի դատս կեզծաւորէր անդամ՝ զանաշառութիւն: Վալորու համարձակ յեղյեղէր յահուին, թէ ի

պատերազմունս ընտարութեանց՝ մի լիցի ամուր ապաստանի: Դղոդեցաւ ատեանն ամենայն. և բուն վէճն նորա չէր այն, թէ կլայլ ի ճահ թէ անճահ մերժեցաւ, այլ թէ Նիւքաստելայ եթէ Փոքսեայ էր լինել ակրնորյա ատեանին և գահերէց աւագանուոյն: Յերկար և յամա էր պայքարն. և յաղթութեան թուէր մերժ յայսկցոյ միտել և մերժ յայն: Փոքս ի ճակատ հանեալ զամենայն ատենաբառնական կորով իւր զարմանալի, եհար զկեսս յիբաւագիսաց ատենին նոյնին իսկ զինուոք. և արկ հերձուածս ընդգեմ ամենայն զօրութեան գահերիցուն: Սահմանեցին դատաւորք զիլէճն ի նպաստ կլայլայ. այլ յազդ լինել վճաղն, այլայլեցան իրք: Նշանը դատու ազատանուոյն, թէպէտ փանաքի, այլ գեւ կշաեր հերիք առ ի շրջել զիլէտոս հշգրիտ հաւատաբութեան կողմանց Նիւքաստելայ և Փոքսեայ: Սզասանին անարդէին և եթ զնիւքաստել այլ զՓոքս կէս ատենին իրու զքաղաքավար վէս և

ամենահնար, իբրև զքաջագոյն ատենա-
բան ընկերհաշտութեան, իբրև զանցեղ-
լի բարեկամվալպուլայ, և իբրև զսերտ
համախոհ Կոմբերլանտայ: Տատանեալ
ատենին ընդ երկար ի տարակուսանս,
խորհուրդ կալաւ ապա առնուլ զլարկս
ամենեցուն ընդ բարեկամաց նախագա-
հին միանդամայն, ուստի լրւծաւ վճիռն
առաջին, և ըստ դոյզն յաւելուածոյ
քուէից չեղիս կլայվ մուտ ի կարդ ա-
ւադանւոյն:

Մերժեալ յատենէ տեսչութեան աշ-
խարհին, և կապտեալ յընչից, դարձոյց
զազս իւր անդրէն ի Հնդիկս: Վաճառակ-
ցութիւնն և պետութիւն ցանկային
օդուել ծառայութեամբ նորա: Ապաքէն
կուեալ էր նորա ի Կառնատիկ ուստ
նպաստաւոր ազդին. և Տոպէս ոչ ևս
էր ի միջի. զի բարձեալ զբեկորս բազ-
մագանձ մեծութեանց իւրոց, մեկնեալ
էր յերկիր իւր, ուր բարուրք և բամ-
բասանք արկին զնա վազ յարեւէ: Բայց
բազում ինչ գուժէր պատերազմ մօ-

տալուտ ընդ Գաղղիա և ընդ Անդղիա.
վասն որոյ կարեոր թուեր արձակել
զոք հրամանատար քաջ ի Հնդիկս: Եւ
կարդեալ կլայվայ ի վաճառակցութե-
նէն ի կուսակալ գաղջականին, և ա-
սեալ յարքայէն զաստիճան զօրագլխի
իբրիտանիկ զօրուն, նաւարկեաց վերս-
տին յԱփիա, յամի 1785:

Ոնդ անկ եղե նմա նախ նոււաճել զա-
մուրն անառիկ, որ կոչէր Գերիա, կա-
ռուցեալ յապառամբուտ սարաւանդա-
կի, և գրեթէ շուրջ պատեալ ի ծայ-
րածաւալ ծովէ: Յամրի աստ որջանայր
հէն ոմն, Անկրիա անուն. որոյ նաւք ի
բազմաց հետէ արհաւիրս արկանէին
յԱրաբեան ծոցին: Վաստան ծովակալ
անդղիացի հրձիգ արար զտորմիղ նա-
ւաց աւազակին. կլայվայ որշաւելով ի
կաղալ անդր նորս ընդ ցամաք: Առաւ
ամուրն ընդ հուպ. և բաժանեցան յազ-
թականից զաւար հնդետասան բիւրուց
դրամակըոց:

Ապա յետ այսր արշաւանի անց գնաց

Կլայլի կուսակալութիւն իւր յամբոցն
Սուրբ Դաւիթ. և չե լեալ անդ զամփս
Երկուս, ընկալաւ զոյց՝ որ գրաւեաց
զուշ և զուրուշ նորա:

Ճիսիգոյն ի գաւառացն կացելոց
ընդ իշխանութեամբ տօհմին Լէնկթի.
մուրի, և ի բնէ քաջագէպ ի հողագոր-
ծութիւն և ի շահավաճառ՝ էր Բէնգալ:
Գիւտն Գանգէս ընթացեալ յօրձանա-
հոս ընդ բիւր առաջս ի ծով յօրինէ
գաշու լայնալիր և արգաւանդ, որ ընդ
յեղյեղակացն իսկ երկնաւ՝ ի վէտ գայ
ընդ գալարագեղ գարնայնոյ երկրին
Անդղեյ: Անդ արտորացք որիզց բե-
րն զառառութիւն արգեանց անձանօթ
այլուր: Անդ շաքար, բանջար, համեմք
և ձէթք ընծային մեծասփանչ բազմաբե-
րութեամբ, և զանապառ լիութիւն ձը-
կանց մատակարարեն գետք: Կըլլին
անմարդիք սփուեալք առ ծովեզերք, և
ծածկեալք ի թունաւոր բուսոց և ի
բազմոհցլ ելզերուաց և ի վագերց,
մատուցանեն գաւառացն մշակելոց ալ

առատ: Գետն որ զերկիրն արգասաւո-
րէ, արահետ է միանգամայն և շահա-
վաճառութեան Արևելից: Յափուասնո-
րա, և որոց ի նա բերանացեալ անկա-
նին վտականի, յառնեն վտաճառանոցք
բազմափարթամք, մեծապայծառ մայ-
րագաղաքք, և սրբարանք Հնդկաց վե-
հավայրք: Անդ բռնաւորութիւն մար-
դոց ի բազմայոլով գարուց սկսրեալ էր
և զուր ընդ ամենասատ բարութիւնն
ընութեան: Բէնգալ, թէպէտ հարսաա
հարիւալ ի բռանց Հագարացւոց, թէ-
պէտմասնեալ յաւար Ուարատաց, համ-
բաւէր ընդ Արևելը իբրև զգրախս ե-
ղեմական, և իբրև զնոխ արքայութիւն:
Ժողովուրդ նորա աճէր և բազմանայր.
սնանէին ի զեղուածոյ համբարոց նորա
հետասան գաւառք, և տոհմիկ տիկ
նայք Լոնտոնի և Փարթիու զբաֆուեկ
անկուածս նորա ագանէին: Ազդն բնա-
կուոր ի ճոխ երկրի անդ, մեզիւալ ի
քաղցրախանանութենէ օգոց նորին, և
ի խաղաղ զբագանս սովորեալ, այնպէս

ունէր առ այլ Ասիացիս, որպէս Ասիացիք համօրէն առ ժիր և խիզախ Եւրոպացիս: Ասէն կաստալացիք, թէ ի Վալենկիա հողն է ջուր, և այլն՝ կին. առակս այս ոչ ինչ նուազ ի դէպ գայ լայնատարր գաշտի ստորինն Գանգեայ: Բենդալացին յամբ է ի գործ. սիրէ ըզբաղէլ ի նիստ, խորշի յաշխատանաց. և թէպէտ արագ ի վէճ և խեռ ի թափուր աղաղակ, դուն ուրեք միսէ զձեռն ի կրիւ և ի կռուփ. և հազիւ գրի ի վի. նուռութիւն: Ոչ գիտեմ եթէ իցեն ընդ ամենայն ի զօրու Անդղացւոց բուն Բենդալացիք հարիւր: Զեկաց թէրես ուրեք ազգ ի բնէ և ի սովորութէնէ նայապէտ ճահաւորեալ օտարին լծոյ:

Ի վաղուց հետէ մեծամեծ վաճառակցութեանց Եւրոպացւոց էին գործակալութիւնք ի Բենդալ: Գաղղիացիք բնականային, որպէս և բնականան խկ, ի Զանաերնագոր առ Հուկիլ գետով. Հումանտացիք անդր ևս ի վիր կոյս ի Զինորա. և մօտագոյն ի ծով կառուցեալ էր

Անդղացւոց զամրոցն Ուկիէմ. և ոչ ինչ հեռի անտի եկեղեցի, և շանմարանս ընդարձակս: Գնայր ձգէր ընդ եղերս գետոյն կարդ մեծակառոյց տանց վաճառապետացն Անդղացւոց. և ի մօտավայրի ուրեք կանդնէր քաղաք մեծանիստ և բազմազբաղ, ուր ընչաւէտ վաճառականաց Հնդկաց կալէալ էր ըընակութիւն: Բայց ուր ամբառնան այժմիկ բարձրագեղ ապարանք Ջովինդէպայ: անդ կային գծուձ և եթ իր Ճիթք ունանք յարդիւ յարկեալք: Անբնակ մացառք՝ դադարք հաւուց ըրայնոց և տիտուանց ահաւորաց, խափանէին զկայս արդի միջնաբերդին, և զհրապարակն զուարձալք, ուր հանապազօր սուրան զարդիս ընդ երեկս կառք շքեղք ի Կալվաթա: Ի վերայ կալսւածոյ գալթականին վարձը վհարէին բնիկ պետութեան երկրին Անդղացիք. և սուեալ էր նոցա որպէս այլոց աերանց մեծամեծ կալուածոց, վարել իշխանութեամբ իւիք ի վիճակի սուրեանց:

Ի բազմաց հետէ իշխէր ի մեծի գաւառի անդ ի Բենգալ և յՈրիսա և ի Բահար, Նախարարութիւնը Ալիվէրտիւ Անդ զիացւոց կարգացեալ, որ հանգոյն այլոց նախարարոց Մոզուսց կալեալ էր զիշխանութիւն միահեծան: Յամի 1756 զբաւեցաւ նա ի կենաց, և պայազատեաց զնա թոռն նորա, պատանի չեւ և օքսանամեայ, որ Կոչէր Սուրաջան Դովլա: Բանակուլք Ասիացւոց յոռեգոյնք են թէրես ի գասուց ազգի մարդկան, և մանուկս այս թշուառ ընծայէր գասու բանակալաց յօռեգոյն յարացոյց: Խմացութիւն նորա ի բնէ տկար, բնաւորութիւն գժահի: և գասախարակութիւն լեալ այնպիսի, որ ջատակը և ըղմիտ կորովիս, և զբարս տղնուական եղծանէր: Զէր նա իրաւախոն, զի չէր ուրուք իշխեալ իրաւաբանել առ նա, և ոչ կամարար, զի չէր իրաւաեալ երբէք ի հարկէ կարօտելց այլոց: Տարաժամ զեղիսութեան ծիւրեալ էր զմարմին նորա և զմիտս, շուայտէր և արբե-

նայր ի ցքւոյ, որ զապիկար ուզեղ նորա հրդեհեալ, մոլէր զնա և ցնորեցուցանէր: Կենակիցք նորա արք չողոմարաբը ընտրեալք ի միջոց սինլքորաց ժողովրեան, ոչ առ այլ ինչ գտեալ էին չնորհս առ նմա, բայց առ խեղկատակութեան իրեանց և առ նուռաստութեան: Հասեալ էր նա ի յատակ մարդկային ապականութեան, յօրում անդը թութիւն առ անդութեան և թ քաղցրունայ: յօրում տեսիլ ցաւոց առ ցաւոց միայն հաճոյ լինի, ուր չկը իսկ շահ օգտաի, ոչ գրգիս վրիժութշնամեաց, ոչ ինսիր իրուսափանաց ի վանդէ: Ի առ զայութեան զբանայր ի կտակ զանաւունս և զթուզունս: և ի ախ լեալ, վայելքը ամորքանօք յաղէտս նմանեաց երոց:

Սուրաջան անգամին ի տպայ տիսց ատէր զԱնգիպացիս, գրգեալ ի ցնորից, և ցնորից նորա ոչ ոք ընդգէմեկաց երբէք: Այն զի կարծիս կուտական բերէր զդանձուցն, զոր մարթէր կողոպւ-

տել ի նոցանէ. և չառնոյր անմիտն ի
միտ, զի եթէ անցանէր իսկ ըստ կար-
ծիս կողոպուտ մեծութեանց կալկա-
թայ, ոչ փոխարինէր ֆլաուտ վարելոյ
այլուր զշահավաճառ նոցա՝ որ ծաղկէր
ի բենգալ: Եւ բաղայք ի կուիւ գտան
առ ձեւին: Անդղացւոց առ կասկած
պատերազմի ամրացուցեալ էր զդաղ-
թականս իւրեանց անհրամանն յիշեա-
նէն, և մեծատուն ոք հնդիկ, զսր կապ-
տել ըլդանայր ի գոյեց, ապաւինեալ
էր ի կալկաթա, և ոչ մատնէր նմա:
Այսր աղագաւ չու արար Սուրաջա աշ-
խարհազօր բանակաւ ընդէմ Ուիլէմ
ամրոցի:

Անդղացւոց ստիպեալ էր ի Տոպեայ
կրթիւ ի քաղաքավարս և ի զինուորս
ի Մագրաս. այլ ի բենգալ վաճառա-
կանք միայն էին տակաւին, և զահի հա-
րան, և տագնապեցան ի լուր մօտալուտ
վտանգին: Ոստիկան նոցա իրադէտ ան-
գթութեանց իշխանին, զարհուրեալ և
յիմարեալ ոստեաւ ի մակոյկ, և աճա-

պարեաց ի նաւ անդր մօտագոյն. և զօ-
րապեա նոցին լաւ համարեցաւ զհետ
երթալ իմաստուն օրինակին: Առաւ ա-
մրոցին յետ անդօր գիմամարտութեան.
և յոգունք յամրականացն անկան ի
ձեւս թշնամոյն: Բազմեալ Սուրաջայ
մեծաւուր ի գահձի ոստիկանին, հրա-
մայեաց ածել առաջի զերևելին ի կա-
լանաւորս զշողուէլ: Յանդիմանեալ զնա-
ընդ ժպրհութիւն ազգին, քրթմունչէր
լնդ գոյցն գիւտ գանձու յամրոցին.
այլ խոսացաւ խնայել ի կեանս նոցա,
և մեկնեցաւ տալ զանձն քնոյ:

Յայնժամ գործեցաւ եղեռն այն ա-
ղիողորմ, արժանի յիշատակաց առ խու-
ժագուժ գժնդակութեան իրին, և առ
ահագին վրիժուն, որ եկն զհետ: Թո-
ղան կալանաւորքն ի կամս պահապա-
նաց. որք խորհեցան ունել զնոսա զգե-
շերն զայն անձողոպրելի յարգելան ամ-
րոցին, ի նկուլ ինչ ծանօթ սոսկալի ա-
նուամբն յուռու յաշարին: Որդելանս
այս մղձկուտ անձկանայր ի տօթագին

նահանգին և միում ումեք եւրոպացի
յանցաւորի. զի միջոց նորա քսան և
եթ օսմանչափ քառակուսի էր, և երդք
մանունք և առաքանեալք: Ամառն էր,
և արեգակն հասեալ յայծեղջիւր, յոր-
ժամ հազիւ է Եւրոպացւոց ամոքել
զմնհնարին տօթ թենգալայ յարաշարժ
հովահարօք և ի սրահս բարձրաբերձս:
Եւ կալանաւորն էին ոգիք հարիւր և
քառասուն և վեց: Յորժամ հրաման
տուաւ նոցա մասնել ի նկուղ անդր,
կատակ վարկան զայն, և խրախու-
սեալնոցա ի խոստմանէ իշխանին ինս.
յելց ի կեանս իւրեանց, ծիծաղէին
զանհէթեթ բանիւք զրականին: Առ-
վազ ծանեան զլբեպակ իւրեանց: Պան-
դատէին, թախանձէին, այլ ի զուր զի
սպառնացեալ զինուորացն խոլխողել
զդժկամակս, միեցին անդր զամեն պին
ի սայր սուսերի. և փակեալ զդուան,
աղլեցին զայն:

Ոչ ինչ ի պատմութիւնո, և ոչ յա-
ռասպելո, և ոչ վէան այն, զոր կար-

կատեաց Ուկոլինի ծովու սառանմեաց
յաւիտենից, յետ զարիւնոս շրթունսն
ի գանգ սպանչի իւրոյ սրբելց, հուա-
սորիեցէ արհաւրացն սպամելց ի սա-
կառուց տալրելցն ի մահաշուռ կիշե-
րոյն: Գոչէին ի խնդիր գթութեան.
խորակէլ Ճպնէին զդուան. և Հոլու էլ,
որ և յանմ սագնապի չէր իսպառ կո-
րուսեալ զլտացն զդոստութիւն, մա-
տոյցնոցա կաշուռ բազումն: Բայց պա-
տասխանի տային նոքա, թէ ոչ էր մարթ-
անհրաման միշխանէն առնել ինչ. թէ
ի քուն կայր նա, և թէ ցանոյր ի շար-
թուցանէլ ուրուք զնա: Անդ էր տէսա-
նել ցնորեալ զկալմանաւորն առ յու-
սահառութեան. կոխէին զմիմեանս.
մարտնչէին զկայիցն առ պատուհանօք.
մարտնչէին զլոյն, որով անագորսյն
գութ գահճացն ծալըէր զսագնասա օր-
համի նոցա բանդագուշէին, աղօթէին.
հայհայէին, կողկողէին, պաղատէին առ
նօսա զսաւ առնել կենաց իւրեանց հը
րազինուք: Իսկ բանտապահացն Ճրագս

Կալեալ առ ծերպս արգելանին, քըքիջ
բառնային ի զինին երկանց մահու զոհից
իւրեանց : Յածեաւ տակաւ աղաղակ
եղկելեացն ի նուազ հեծութիւնն : Մա-
գեաց տիւ . և զարթեաւ իշխանն յան-
առակ քնոյն . և բանալ ետ զդուսան
բանտին : Այլ առ ելս առնել որոց իէինն
տակաւին ընդ զրահանս դիականցն, որ
հարեալ իսկ էին ի տօժոյ, հարկ եղե
զինուորացն հարուստ մի չեղակուտել
զնոսին աստի և անտի զմիմեամբք : Ուր
ուրեմն իբրև բացաւ ուղի, կերպարանք
անդոհականք քսան և երեք, զորս մարց
իսկ նոցա ոչ էր ձանաչել, դեգևէին է-
լանէին մի մի ի գերեզմանէ անտի : Փոս
հատաւ անդէն, և իսպն ի խուռն հո-
սեցան անդք դիակունք հարիւր և քսան
և երեք, և հող արկաւ ի վերայ :

Ի չարեաց աստի, զոր և յետ ամաց
աւելի քան զութսուն ոչ մարթի ա-
ռանց արհաւրաց յիշատակել, չանկաւ
գութ յաղիս, և ոչ թախիծ ի միտս վայ-
րենի իշխանին : Ոչ պատուհասեաց ըզ-

մարդասպանն, և յապրեալմն ոչ մար-
դասիրեաց : Ապաքէն թողան ոմանք
երթալ ի բաց, յորոց չէր ափն ու-
նել իմիք. այլ յորոց բոնազքսէլ ինչ
չնարին թուէր, տանջեցան նոքա չա-
րաչար : Հոլուէլ անզօր ի գնայս, ա-
ծաւ առաջի բոնաւորին . որ կշամ-
բեալ և սպասնացեալ նմա , մարեաց
զնա երկաթակապ ի միջերկրայս ընդ
այլս ոմանս, զորոց կասկածէր դիտել
զթագուն գանձուց նոցա առաւել քան
զոր կամէինն ի վեր հանել : Սոքա ծըն-
կեալք տակաւին յօրհասական վշտաց
անտի, օմէինն ի տաղտաւարիկս յոնիս,
և ընդովլուկով կըովլ կերպակրէին . մինչեւ
ապա յաղերս անկան իշխանին կարեւոր
կանյաց նորա առնել նոցա թողութիւն :
Կին մի անդղիացի ապրեալ էր ի մահա-
հոտ արգելանէն, և մուծաւ ի կանա-
նոց նորա ի Մուրշեապատ :

Նամականի արար յայնժամ Սուրա-
շա առ անուանեալ արքայ իւր ի Դիւ-
չի . նկարագրեալ պերճ և Ճուռոմ բա-

նիւք զլալթութիւն իւր : Եղ պահս
յամբոցին Ուկլէմ. արգել մի բնակել
Անդլիացւոց առ նովաւ . և պատուի-
րեաց ի յիշատակ պայծառ արութեանց
իւրոց՝ կոչել զիալզաթա յայնմ հւտէ
Ալինագոր, որ նշանակէ գուռն Սոստու-
ծոյ :

Փոյժ անկման Կալկաթայ եհաս յամ
սեան օգոստասի ի Մագրաս, և բրգե-
ցան գալթականքն ի սրամնւթիւն ան-
հարթին : Մանչեցին ամենէքեան ի վլէժ-
իսդրութիւն, և անդէն երկօրեայ սահ-
մանեցաւ արշաւել ի Հուկլի : Կըյզայ
կալով ի գլուխ ցամաքային զրտւն, և
վատսոնայ նաւոկանին : Գումարտակ
ինն հարիւր անդլիացի մարդիկ և որտեայ
հետեակաց, և հազար հինգ հարիւր
Հնդկաց, ելանէր պատուհասել զիշխան
ոմն, որ բաղմագունից հրամայէր հստա-
տակաց քան զլոդովիկ հնդետասանե-
րորդ և քան զինքնակալուհին Մարիամ
Թիերեզա : Նաւեցին զրքն յամսեան
հոկտեմբերի, այլ կոծեալ ի ստահակ

հողմոց, յամեցին ժամանել ի Բենգալ
մինչև ի գեկտեմբեր :

Խրախանայր Սուրաջա երազայոս
ամբութեամբ ի Մուշիտապատ . և ան-
գէտ ամենէին տարաշխարհիկ իրաց .
յելզեղէր սովորակի, եթէ յԵւրոպա
համայն ոչ գյոր և ոչ բիւր այր . և չան,
կանէր իսկ ի միտս նորս իշխել արշա-
ւել Անդլիացւոց ի սահման իւր : Բայց
թէպէտ անխոռով յերկիւզէ զննուորա.
կան զրութեան նոցա, սկսանէր ընդ-
բացակայութիւն նոցին ապաշտել :
Քանզի կարձեցան հասք իւր . և խոր.
Հըրդականք յաջողեցան խելամիւտ առ-
նել զնա, զի մերթ օգտակարագոյն իցէ
իշխանի պատսպարել զվաճառականն ի
համարձակ վայելս շահուց իւրեանց ,
քան խոշտանգել զնոսա ի գիւտ թա-
գուն արկեզաց ոսկւոյ և արծաթոյ : Զի-
շեալ էր թողուլ նոցա գառնալ յաշ-
խարհ իւր ի շահավաճառ, իբրև ազդ ե-
զւ նմա, զի նաւե նոցա սպառազէնք հա-
մեալ էին ի Հուկլի : Հրաման ետ նոյն-

Հետայն գումարել ամենայն զօրաց իւ-
րոց ի Մուշխտապատ, և չուեաց ի կալ-
կաթա:

Կլայվըստ սովորակի արութեան իւ-
րում նախաձեռն արարեալ ի մարտ,
էաւ զբոջեբոջ, էհար զպահակապանս
Ուկիմէմ ամրոցին, կալսւ զկալվաթա.
և յարձակեալ ի Հուկի, աւարեաց
զայն: Իսկ Սուրածա՝ որ և յօժարեալ
իսկ էր շնորհս ինչ առնել Անդղիացւոց,
ի հաւաստեաց աստի զօրութեան նոցա
և քաջութեան՝ համոզեցաւ ի խալա-
զամիրութիւն: Ամին իրի առաջարկեաց
առաջնորդաց բանակին վերականգնել
անդ զգործակալութիւն իւրեանց, յան-
ձըն առեալ զլզենակս նորին, և զիո-
խարէնս ընչլց, զոր կապտեալն էր ի նո-
ցանէ:

Կլայվայ պատերազմ էր արուեստ.
և ի նախատինս համարէր զհաշտութիւն
ընդ իշխանին. այլ սահմանաւ էր կար
իւր: Վաճառականաց ոմանց փախստէից
ի կալվաթայ, անկ էր հոգ իրաց արշա-

ւանին. և անձկային սոքա դառնալ ի
կայս իւրեանց, և առնուլ զփոխարէնս
վխասուցն: Տեսըութիւն Մադրասայ ի-
րազեկ լեալ խանձելոյ պատերազմի Եւ-
րոպա, և երկուցեալ ի հինից յարձակ.
մննց Գաղղիացւոց, անժոյժ մնայր դար-
ձի զօրականին: Մեծամեծք էին խսա-
մունք նախարարին. և բախտ զինուց
կեղակարծ. վասն որոյ հաւանեցաւ Կը-
լայվիսուելի խաղաղութիւն. զիզջլեալ
նմա ընդ ելս իրացն ոչ ըստ կամի յա-
ջողելոց:

Այսու դաշնաւորութեամբ սկիզբն
առնու նոր իմն գլուխ գրոց ի կեանս
կլայվայ: Ցայս վայր իբրև զինուոր և եթ
կատարեաց նա վնորհուրդս այլոց՝ մե-
ծահրաշ աշողութեամբ և արիութեամբ:
Բայց յայսմ հետէ համարեսցի նա մա-
նաւանդ քաղաքավար, և զինուորական
շարժմունք իւր՝ քաղաքավարական խոր-
հըրդոց իւրոց արդիւնք: Զի ի նորում
աստ պաշտաման՝ հանդէս արար հան-
ձարոյ մեծի և մեծամեծ յաջողութեանց,

այն յայտ իսկ է . այլ յայտ է գարձեալ ,
զի յոր ինչ և յետ այսորիկ ձեռնար-
կեաց , կեզտ նախատանաց ի բարոյա-
կան իմաստ նորա եթող :

Զէ մարթ միաբանել մեղ ընդ Մել-
քոմայ , որ յամառի ոչ այլ ինչ տեսա-
նելի վարս գիւցազի՞ն իւրոց , բայց ուղ-
ղութիւն և պատիւ : Ասկայն տարածայ-
նիմք և Միւլայ , որ բամբասէ զկլայլ
իր ոչ խզնել երբէք ի պատրանաց կա-
րմորաց ի լուսնին կամաց եւրոց : Թուի
մեղ կլայլ ըստ բուսոյ բարուցն՝ տիո-
նկարագրի ամենենի իսկ ներհակ առն
խաբեայի . իմզախ թէ յանդուդնիսկ ,
անկեղծ թէ արդեօք և անդոյս . մու-
րիմի բարեկամութիւն , և ի թշնամու-
թիւն համարձակ : Ու ի սոսկական
կեանս նորա . և ոչ յաւագութեան գոյ-
գանել զչետո նենգութեան առ համ
ազդիս : Նա աւանիկ յամենայն վէճու
որ եղեն նմա որպէս անգղիացւոց ընդ
անգղիացւոց , ի կոփամարտից անտի նո-
րա ի գպրոցս մինչև ի մորկայց ու գըդ-

տութիւնս ատենին տեսչութեան , յո-
րում զլետին ամս իւր անցոյց , թերու-
թիւնք իսկ նորա էին թերութիւնք վեհ
և մեծախոհ մտաց : Այս իցէ ձմարիտ ,
զի խաղ ինչ վարկանէր զքաղաքավա-
րութիւն ասիական , յորում չգոյր ինչ
գժպատեհ : Գիտէր զամբաւ խտիր զա-
նազանութեան օրինաց բարոյականին
ընդ Հնդիկս և ընդ Անգղիացիս . գիտէր
գարձեալ , զի առաջի կայր նմա վարել
ընդ որեալ ունայն ի պատույ , ընդ
որեար , որ առանց վարանաց տայր զա-
մնայն խոստմունս , և առանց ամօթոյ
գըդէր ամենայն խոստմանց , ընդ որեար՝
որ անխիզ ի կիր արկանէր զկաշա-
ռանս , զիարդախանս և զսուտ երդ-
մունս առ ի հասանել յուշ նպատա-
կին : Յողթեան նորա վկայեն , զի հանա-
պազ յուշի ունէր զկատիր զանազա-
նութեան իմաստից բարոյականին ընդ
նոսա և ընդ իւրեանս : Իցէ նորա զառա-
ծեալ ի մոլար կարծիս , թէ չըմարթէր
վճարել ինչ ընդ այնպիսի սոսխաց , ե-

թէ շատանայր պարաւանդեալ ի պար-
սուց, յորոց զէրծ կային նոքա, եթէ
միշտ ասէր զճմարտութիւն, և լսէր
երբէք ոչ. եթէ լնոյր ի տոյժու անձին
զամենայն դաշինս առ դաշնակիցս, որ
ոչն ընուեին բնաւ զդաշն անօդուա ան-
ձանց: Ամին իրի սա պյլ ուրեք անդ,
զիայի արգոյ և այր զօրական, ընդ ոսո-
խել իւրում ընդ չարիմաց Հնդկի, եղե
և ինքն հնդիկ չարիմաց. և էջ անխիզ
ի խարկանս, ի շողումն և ի փոխանակու-
թիւնս մուրհակաց և պիտակ ձեւա-
դրաց:

Ազք երկու երթեւեկէին յաճախ ի
հրեշտակութիւն ընդ նախարարն և ընդ
Անդղիացիս, մին Վատէս ոմն անդղիա-
ցի, և միւս հնդիկ անուն Ոմիչոնտ: Ոմի-
չոնտ մի ի ճոխագոյն վաճառականաց
Հնդկաց բնակելոց ի կալկաթա, կորու-
սեալ էր զմեծութիւնս իւր յարշաւել
անդր նախարարին: Յաճախեալ սորա
ի տուրեառս վաճառաց առ Անդղիա-
ցիս, կարգեալ էր իրը պատգամաւոր

նոցա առ արքունիս Հնդկաց: Եր սա
այր մեծազօր յազգի իւրում: և վլխա-
կեալ զառատ ձիրս հնդիկ հանճարոց.
զարագատեսութիւն, զաջողակութիւն,
զճարտարութիւն և զերկայնմտութիւն.
և զհնդիկ ախտից՝ զնուաստութիւն,
զընչաբաղցութիւն և զդաւ:

Եւ նախարարն վարէր ամենայն ան-
հաւասարմութեամբ հնդիկ քալզաքա-
վարի, և ամենայն թեթևամտութեամբ
մանկան զեղծելոյ իշխանութեամբ, և
յանձնապաստանութեամբ: Խոստա-
նայր, ստրանայր, վարանէր, խուսա-
փէր, խաղայր գայր սպառնալից բանա-
կաւ ի կալկաթա. պյլ ի տեսիլ ան-
դրդուելի ճակատու Անդղիացւոց՝ նա-
հանջէր խուճապաւ, և յանձն տոնոյր
վիալզալութիւն ըստ նոյին իսկ պայմա-
նաց: Ուխտ կռէալ ընդ նոսա, և մտա-
բերէր ընդգէմնոցին ինորանոր չարիս:
Հնարի հնարէր ընդ Գալզիացիս. և հը-
րաւիրէր զիոսսի դիմելի Հուկլի, և վա-
նել զնոսա ի բենդալայ: Այս ամենայն

ոչ էր զանխուկ ի կլայվայ և ի Վատսո-
նայ . վասն որոյ եգին ի մտի լուծանել
բախմամբ զտորակոյս , և յարձակել ի
Զանահանագոր , չե օգնական զօրաց հա-
սեալ անդր ի հարաւոյ Հնդկաց , և կամ
յԵւրոպայ : Վատսոն առաջնորդէր ար-
շաւանին ընդ ջուր , և կլայվ ընդ ցամաք .
կալան ի միասին յաղթութիւն երագ
և լի . և անկան ի ձեռս նոցա ամրոցն
և պահակապահք , և զէնք և պարէնք և
մթերք առհասարակ . և ընդ կալանա-
ւորմ զօրք եւրոպացիք իբր չինդ հա-
րիւր :

Երկնչէր նախարարն յԱնդվիացւոց ,
և առէր զնոսա , մինչդեռ մարթէր նիշա
ի ճակատ հանել նոցա զոսոսս նոցին
զԳաղղիայիս : Հարան ահա Փաղղիա-
ցիք , և սկսաւ նա հայել յԱնդվիացիս
անհնարին երկիւղիւ և դժնդակագոյն
առելութեամբ : Տատանէր տկար և յԵւ-
յԵղուկ միտք նորտ ի յոյզո նոււասու-
թ նան և գոսողութեան . էր զի յդէր ի
կալկաթա արծաթ բաղում իբր ի հայ .

թայթանս վլասուն զոր արար . և էր
զի ականս պատուականս առաքեալ առ-
իսսսի զրավրն հաշակաւոր ի պարզե ,
սադրէր զնա փութալ ի պահ թենդա-
լայ , և հաշածել անտի զԿայվ . զոր դու-
ի մարտի անոււանեալ , յաւելոյր . Թա-
փեացին ի գլուխ նորա ամենայն չարիք :
Մերթ հրաման աայր չուել զօրաց իւ-
րաց ի վերայ Անդվիացւոց , և զՀրաման
իւր շրջէր . և մերթ պատառեալ գրերս
կլայվայ , և ապա պատասխանի գրեր
նմա ի ճուռոմ բարբառ մեծարանաց : Ար-
տաքսէր յԵրեսաց իւրոց զՎատէս , մոր-
թել զնա սպառնացեալ . և դարձեալ
կոչէր զնա , և թշնամանայն խնդրէր
թողութիւն : Մինչ այս մինչ այն , չա-
րացւք տեսչութիւն նորա և անմտու-
թիւն և ցոփութիւն և կենակցութիւն
գուէհկայ՝ պարտասեցուցին զամենայն
դաս հպատակաց նորա , զզօրականս ,
զլաճառականս , զդրանիկս , զսէդ և ըլ-
պերձ Հագարացիս , զերկւոտ , զՀլու և
զժութկալ Հնդիկս : Նիւթեցաւ նմա

դաւ ահագին, որում կցորդէին Հռո.
տոլով ոստիկան գանձուց, Միր Զափար
զըրավար երևէնի, և Յոկետ Սահամ սեղա
նաւոր մեծափարթամ ի Հնդիկու: Հա.
ւատացաւ գաւն յԱնդղացիս. և երթ.
և եկ թղթոց սկսաւ ի մէջ տժոհոհացն
և նոցա ընդ Մուրշիտապատ և ընդ Կալ.
կաթա:

Ի վարանս տարակուսի կային Անդ.
ղիացիք. այլ Կլայլ ջատագովեալ զդա.
ւաճաննն, ըմբերանեաց զամենայն դի.
մաբանութիւն: Եւ խորհուրդ կալան
ձեռն տալ նոցա զօրեղապէս, յընկե.
նուշ վՈուրաչա, և ի կացուցանել ըզ.
Միր Զափար ընդ նորա ի դահ Բենդա.
լայ: Ի փոխարէն վաստակոց նոցա խոս.
տահայր Միր Զափար հատուցանել ըզ.
մաս վաճառականաց նոցա բովանդակ,
և նուշ պարգևօք զզօրս նոցա և զամե.
նայն պաշտօնեայս: Յուռութիւնք Սու.
րածայ քստմնելիք. զբկանք Անդղիա.
ցոց ի նմանէ, վտանգն՝ յոր շահավա.
ճառ նոցա անկանէր, ի յարանալ նորա

ի նախարարութեանն, այս ամենայն
թուի մեղ անբասիր առնել զկամս ար.
կանելց զնա յիշանութենէ: Սակայն
ոչ ինչ անբասիր արասցէ զմեղմեղանն՝
յոր էջ Կլայլ. քանզիք գրեաց առ Սու.
րածայ գեր սիրալիք. որպէս զի հանգուս.
ցէ զնա առ ժամանակ մի անքայթ յան.
դորրու: Նոյն սուրհանդակ, որ ած առ
իշխանն տկարամիտ զըր Կլայլգեր ողոք
անոււանէ, ած և զմիւս ևս առ Վատիս,
որ ունէր այսպէս: Ասա յՄիր Զափար
մի երկնչելուստեք. զի յարեցայց ի նա
հնդ հաղար սպառազէն արամէք, որ
ոչն դարձուցին երբէք զթիկունս: Վըս.
տահայս զնա, զի զտիւ և զգիշեր ըու.
արարից հապենպով հասանել նմա յօդ.
նութիւն, և կացից առ նովաւ մինչե
նեց իմ այր մի:

Ոնմարթ էր այսպիսում բազմամաս.
նեայդաւաճանութեան բոլորալին (թաք.
չել ընդ երկար. և հասին իսկ յունկն
իշխանին ինչ ինչ, որ արկին զնա ի կաս.
կածանս: Այլ կեղծիք և պատրանք յօ.

գեալք բազմահրաշ հայթայթանօք ի
հնարիմաց հանձարոյն Ոմիջնատայ , հան-
դարաեցին զնաւ փութով : Այն ինչ ա-
մենայն ինչ հարթ ընթանայր , և ի հաս-
դայր դաւն , ծանեաւ կլայվ , զի ոչ էր
վտահել յՈմբռնա : Խոստացեալ էր
հնարագետ բենդալացւոյն արփառուր ա-
ռատ ընդ ամենայնի՝ զոր կորուսեալն
էր ի Կալկաթա , այլ ոչ շատանայր նա-
սյուսիկ : Վաստակեք մեծամեծք Էին նո-
րա , ուներ զթել բովանդակ դաւոյն .
և բան մի եեթ շնչեալ յունկն Սուրա-
ջայ , կարեր ցրել զամենայն որ ինչ նիւ-
թեալն էր : Ի կամն նորա էին կեանք
Վատեայ , Միր Զափարայ և դաւակցացն
ամենեցուն , և եդ ի մոի յօգուտ արկա-
նել զկար իւր , և անձամբ ասնել ըդ
պայմանս անձին . Ոմին իրի խնդրեաց ե-
րեսուն բիւրս գրամակըռոց իւրև գինս
ծածկութեան իւրայ և սատարութեան :
Զայրացան Անդղեացիք ընդ մատնու-
թիւն այս , և զարհութեալ ի վտանգէն ,
անդիտանային զինչ ասնել : Այլ կլայվ

ի կշեռ եկեալ ընդ Ոմբռնատայ , անցա-
ներ զնովաւ ի նորին իսկ արուեստի :
Այլ անոպայ է գա , ասէ , և ամենայն
դաւ անսագիւա , որով մարթիցի պար-
տել զդաւ գուրա : Եւ խոհական գտակը
խոստանալ զննդիրն , և ի մատնել նո-
րա ընդ հուպ ի ձեռու իւրեանց , պա-
տուհասել զնա , ժխտեալ ի նմանէ ոչ
միայն զկաշառոյն սակ , այլ և զբաժին
փոխարինին անկաւոր ամենեցուն , որք
զգեալն էին ի գդից իւրեանց ի Կալ-
կաթա :

Ընդունելի եղն խրասա այս , այլ զի-
արդ էր պատրել զննդիկն զդոյշ և խո-
րագիտ : Պահանջէր նա յեռուլի յեա
կար անդր Անդղեացւոց և Միր Զափա-
րայ զպայման իւրաւանց իւրոց , և ոչ շա-
տանայր մինչ չե իւրով իսկ ազգ տե-
սեալ զայն : Կլայվայ առ ձեսին կային
հնարք , և կրկին յօրինեցան պատշերք ,
մին ի սպիտակ քարափափի , և միւս ի կար-
միր , առաջինն բուն , յորում ոչ անուա-
նէր Ոմբռնատ . իսկ երկրորդն պիտակ ,

և առ ի ցոյց յերիւրեալ, բովանդակէր
զպայմանս նորա:

Բայց միւս այլ խոչ ելանէր ընդ ա-
ռաջ, զի Վատոսն ծովակալ գժկամա-
կէր արկանել զձեռագիր իւր ի պիտակ
պատշըն, և թերութիւն այնք կարեոր
անուան՝ ոչ թաքնոյց յանքուն և ի սուր-
աչաց Ոմքոնայ. և գրդէր զնա ի կաս-
կած: Բայց Կլայլ չէր ի նոցանէ, որ
կիսովն առնիցեն ինչ. և գրել գրեթէ
շառագունիք, զի խարդախեաց զձե-
ռագիր ծովակալին:

Արդ կազմ էր ամենայն ինչ ի գործ:
Վատէս փախեաւ ի ծածուկ ի Մուրզ-
տապատայ. և Կլայլ խտղացոյց զլըս
իւր. և գրեաց իշխանին ի բարեառ այլ-
աղջ յոյժ ի նախկին նամականուցյն: ի
գէմս ածեալ նմա ի թղթին զամենայն
զրկանս կրեալս ի նմանէ, ինդրէր իրաւ-
արար իւրեանց կացուցանել զՄիր Զա-
փար. և յաւելցը աղդ առնել նմա, զի
որովհետեւ եղանակ անձրեաց մեծե-
նայր, գային ինքն և արք իւր, մեծարա-
նօք առնուլ ի նմանէ պատասխանի:

Գումարեաց Մուրաջա իսկոյն զամե-
նայն զօրս իւր, և ել ընդ առաջ Անգ-
ղացւոց: Իրան եղեալ էր Միր Զափա-
րայ մեկնել ի նախարարէն, և զվաշտ
իւր ածել ի բանակ Կլայլայ. այլ ի մօ-
տել վերջնն պահուն՝ ընկճեցաւ յեր-
կիւղէ փառասիրութիւն գաւաճանին:
Ժամանեաց Կլայլի կոսիմբոզար, ուս-
տի փարսամօք ինչ բացագցն բանա-
կեալ էր իշխան զօրու ծանու ի Պլա-
սի. և Միր Զափարը յամէր ընուլ զնոս-
տումն իւր. և պատ ի պատ պատաս-
խանի տայր թախանձանաց սպարապէ-
տին Անգղիացւոց:

Անկաւ Կլայլ ի տագնապ տարակու-
սի. ոչ կարէր վստահել ի հաւատար-
մութիւն և ի խրախոյս դաշնակցին. և
որչափ և վստահանայր ի զինուորական
հանձար իւր, և ի քաջութիւն և ի հը-
րահանգս արանց իւրոց, ծանր էր պա-
տերազմել ընդ զօրաց քսանապատիկ
թուով բազմագունից: Առաջի նորա գը-
նայր գետ, ընդ որ գիւրին էր անցանել.

այլ ի ձախողել մարտին, և ոչ միում
ումքը ի փոքու գնդէն մարթ էր դառ-
նալ ընդ այն։ Զայս առաջին և վերջին
նուագ անմեկ էր սիրա նորա կասեաց
առ վայր մի յահեղ վասնդէ սահմանե-
լոյ զմիտո իւր։ Կոչեաց զզօրապէտո իւր
ի ժողով։ և յոդունք ի նոցանէ խրատ
էտուն մի մարտնչել։ և կլայվ ինքնին
միաբանեաց ընդ նոսա։ Ապա յետ ա-
մաց միակ եեթ ասէր կոչեալ իւր ժո-
ղով զինուորական, և եթէ անսայեալ
էր խորհրդոյ ժողովցն, ոչ ասիրէն եր-
րէք Անդղեացիք ի Բենդալ։ ի լուծա-
նել ժողովցն, յինքն եկն անդէն. և մե-
կուսացեալ ուրեք, եկաց ժամ մի մը.
տայոյզ ընդ հովանեաւ ծառոց։ Եւ ի
մոի եղեալ զամենայն ինչ ի բախտն
առնել ապաստան, դարձաւ և հրամա-
յեաց կազմել անցանել ընդ գետն առ
վաղիւ։

Անցին զօրքն ընդ գետն ի վաղորդայն.
և յետ տաժաննաւոր չուց աւուր՝ իջն
նսեմաւ ի ծառաստան ուրեք մանկե-

նեաց մերձ ի Պլասի, փարսախաւ հեռի
ի թշնամւոյն։ Հատեալ էր քունյացաց
կլայվայ, և զգիւերն ի բուն լսէր զձայն
թմբկաց և տաւզաց հնեւեալ ի բազմա-
տարած համբարէ իշխանին։ Զեն ինչ
զարմանք, զի և նորին իսկ սիրտ անահ
լքանէր երեւմն, զմուաւ ածեալ ընդ ո-
րում անհամեմատ բազմութեան և ընդ
որոց գնոց գնայր գուապերել։

Այլ և Սուրախայ ոչ էր հանդիսա
խալազադոյն։ Միտք նորա տկար հա-
մայն և մրկածութի տագնապէր ի իու-
ճապս անդոհականս։ Զարհուրեալ ի
սպառնալեաց մօտալուտ վտանգին։ ի
զօրավարաց իւրոց խիթացեալ, էրկու
ցեալ ի մարդոյ միանդամայն և ի միայ-
նութենէ, նասէր տիուր ի խօրանին,
լցեալ, որպէս ասասցէ քերթող հել-
լէն, ի կատաղեացն այնոցիկ, որք յեւս
հոգւոցն անէծս գառինս կարդացին նը,
մա ի Խաւարին խոռոչին։

Մագեաց օրն . օր որ հանդերձէր
սահմանել զբախա Հնդկաց : Զեղան

զօրք իշխանին ընդ արևածայրս ի բաղւ
մապատիկ ելից բանակին . և զեռային ի
ծառաստան անդր , ուր կային Անդղիա-
ցեք : Հետևակազօր քառասուն հազար
վառեալ ի հրազենս , ի գեղարդունս ,
ի սուսերս և յաղեղունս , հեղեղատէր
ի դաշտ անդր . բերելով ընդ իւր զալիք-
հրեսս յիսուն , ձգեալ մեն միյէրկայն
կարգէ ամրլաց սպիտակ եղանց , և մը-
ղեալ յետուստ իւրաքանչիւր ի փոլէ :
Այլ ահաւորագոյն ևս էին թերես հը-
րետք ինչ մասունք վարեալք ի սակա-
ւուց գաղղիացի մարտակցաց : Այլու-
ձի նոցա բիւր և կէս , կազմէր ոչ ի կը-
նատ թենդալացւոց , այլ ի խրոխտ աղ-
դէն բնակելոյ ի գաւառս անդ հիւսի-
սոյ . և նշմարեաց կիրթ ակն Ալայլայ
և զարսնոցա զերիվարս , զի էին հուժ-
կու քան զՊառնատիկեցիս : Խոկ որք ընդ
այսմ բազմակոյտ ամբոխի ելանէին ի
ճակատ , էին արք երեք և եթ հազար .
այլ իւր հազար ի նոցանէ Անդղիացիք ,
և ամենէքեան մարդեալք ըստ օրինի , և

յանդղիացիզօրապետացառաջնորդեալ
Երևելի ի ուազմս փոքու բանակիս գը-
տանէր գունդն Երեմներորդ իններորդ .
որ ընդ յոլով յաւելուածս պատուցի
ժառանգեալս ընդ ձեռամբ Վելինկառո-
նայ ի Սպանիա և ի Գասկոնիա , տակա-
ւին բերէ զնշանակաւ իւրավ զանուն
Պլաստայ , և զամնծալի զայս վերնատիք .
Ապաշին ի Հետիկս :

Սկիզբն եղև մարտին հրազինուք . այլ
հուր թշնամւոյն ըլինէր ինչ գամագիւտ ,
ուր բազում նախճիրս գործէին սա-
կաւ հրեաք Անդղիացւոց : Անկան յո-
գունք ի գերահոչակ զօրավարաց Սու-
րածայ . և աղմուկ շփոթի ընդ ուազմն
նորա տարածանէր : Յաձախէին հետ
ընդ հետ և նորին իսկ արհաւերք . և ունի
ի գաւաճանաց անտի ստիպէր զնա ի
նահանջ : Թելադրեալ ի զարհուրանաց
անձին , մտադիւր ունին եդ նենդաւոր
խրառուն , և հրաման ետ զօրուն ընկըր-
կել . և այս հրաման սահմանեաց զկո-
րուստ նորա . այն զի չեթող նմա պա-

բայ Կլայվ. այլ մղեաց զիւրսն յառաջ։
Ամբոխն լքեալ և լուծեալ, տեղի ետ
բուռն յարձակման քաջաց զինուրաց։
Ոչ ուրեք պարտեցաւ խուժան հինից
ի մարզիկ զօրաց դժնդակագոյն կորա-
նօք։ Խսկ դոյզն գունդ Գաղղիացւոց, որ
միայն խիշախէր զդիմի հարիանել Անդ-
զիացւոց, աղխաղեալ վարեցաւ ի յոր-
ձանաց խուռն փախստէիցն ՞ բաց։ Ի
միում ժամու բեկաւ բանակ Սուրա-
ջայ ի սպառ։ և անկան ի պարտելոց
անտի արք միայն հինդ հարիւր, այլ
աղին նոցա և վրանք, և զէնք, և սայլք
անթիւք և արջառք անհամարք թողան
յաղթականին։ Կլայվ Կորստեամբ ա-
րանց քսան և երկուց, թող զիւրաւորս
յիսուն, վարատեալ էր զզօրսիւր վաժ-
սուն հազար, և նուաճեալ զպետու-
թիւն ընդարձակ և բազմամարդ քան
զՄեծն բրիտանիա։

Մեր Զափար ոչ օգնեաց Անդզիացւոց
ի պատերազմին, այլ իբրև ետես աներկ-
բայելի զելս նորին, մեկնեաց զըոկատ

իւր ի բանակէն. և ի զպաւ լինել մար-
տին, յղեաց նիզակակցին զինդակցու-
թիւն իւր։ Ի վալիւ անդք երթայր աչ
ընդ ահ ի բանակ Անդզիացւոց, կասկա-
ծեալ զընդունելութենէն, որ մնայր
նմին անդ։ Խորվեցաւ ակներեւ, իբրև
կարգեցան կացին զօրականք ընդունել
զնա շքով ըստ պատշաճի աւագութեան
նորա։ Այլ վալ ընդ փոյթ փարատե-
ցաւ երկիւզն, զի եկն Կլայվ ընդ տռաջ
նորա, գիրկս արկ նմա, ողջունեաց զնա
իւրեւ զնախարար երից մեծամեծ դա-
ւասաց, բենդալսյ, բահարայ և Որի-
սայ, ունին մատուցյ աղերսարանութեան
նորա վայելըութեամբ. և խորհուրդ ետ
նմա գիմել անցապալի Մուրշիտապատ։
Սուրաջա հեծեալ յուզտ երագ, և
շտապաւ փախուցեալ ի ճակատուէն,
եհաս ընդ ժամս սուշ ինչ աւելի քսան
և չորս ի Մուրշիտապատ։ Անդ կոչեաց
զիւրեւ զնորհդականս իւր. յորոց ի-
մասնագոյն ոմն խրամեաց զնա անձ-
նատուր լինել Անդզիացիս, յորոց չէր

նմա չարագոյն ինչ կասկածէլ, քան ան-
կանել յիշխանութենէ, և կալ ի կա-
լանս : Այլ մատնութիւն վարկաւ գաս-
գրահող զայս : Այլք յորդորէին զնա միւս
անդամ փորձէլ զբախտ զնուց . և հա-
ւանեալ ընդ այն , հրաման եհան ի
մարտ . սակայն ոչ խրախուսէր յարանալ
և ոչ օր մի ի խորհուրդ ինչ արիական :
Լոււալ զի հասեալ էր Միր Զափար,
և ահ անտանելի կալաւ զնա : Այլակեր-
պեալ ի ձև գձուձ ; և գզոց լի գոհա-
րօք ի ձեռին , սողեալ էջ գիշերախառն
ընդ պատուհան արքունեացն , և ընդ
երկուց եւթ սպասաւորաց եմուայա-
կատ , զերծանել ի Պատնա :

Եհաս յետ աւուրց Կլայլ երկերիւր
անդղացի զօրականօք և երեքարիւր
Հնդկօք ի Մուրշիտապատ : Պատրաս-
տեալ էր նմա անդանօր ապարանք շքեզ
ի բնակութիւն . զորով պատէր պարտէզ
լայնատարք . որ ամենայն զօրաց . որ
ընդ նմայն էին , մարթէր բանակել ըստ
պատշաճի : Եւ եղեն յայնժամ նաւա-

կատիք նախարարութեան Միր Զափա-
րայ : Ածեալ Կլայլայ զիշխանն նորապը.
սակի գահ , բազմեցոյց զնա անդ . և ըստ
վաղնջուց սովորութեան Արևելցի մա-
տուցեալ նմա պատարագ ոսկի , գար-
ձաւ առ Հնդիկս , որ խոնէին սրահին ,
և ուրախակից լինէր նոցա ընդ նսէհ ա-
զատութեան իւրեանց ի բռնակալէ :
Հարկ եղեւ նմա թարգմանաւ խօսել անդ .
և զարմանք են , զի թէպէտ ընդերկա-
րեալ ի Հնդիկս , թէպէտ հմուտ Հնդիկ
բարուց և գնացից , և պաշտէալ ի Հըն-
դիկ զօրականէն , չուսաւ նա երբեք ան-
սայթաք բացատրէլ զիմոտ իւր ի բար-
բառ . Հնդկաց : Ասի իսկ զի ի խօսակցել
նորա ընդ Հնդիկս , էր զի ստիպէր թէկ-
րէկել զբանս ըստափանացիս , զոր ու-
սեալն էր ի մանկութեան ի Պրազիլ :

Խնդրեցաւ ասպա ի նորոյ նախարա-
րէն յարդիւս ածել զիստմունն իւր
առ դաշնաւորս . և ժողով գումարեցաւ
ի տան Ցոկետայ սեղանաւորին մեծի ,
առ ի կարգաւորէլ զկարեւորս : Եղն անդ .

և Ոմիչնա, ոչ ինչ երկմատեալ շնորհս
գտանել առաջի կլայքայ. որ գլեալ մեղ-
մեխանօք և զբենդալացիս՝ յայն վայր
գթամիրեալ էր ի նա անընդհատ : ի
մէջ բերաւ յետկարն սպիտակ, և ըն-
թերցաւ: Թարձաւ յայնժամ կլայքի ի
Աքրափտոն ոմն թարգման անդլացի,
և ասէ ցնա անդղերէն . Ժամ է լուծա-
նելոյ զպատրանս Ոմիչնատայ: Եւ Ըս-
քրափտոն ասէ հնդկերէն: Ոմիչնատ, ընդ-
խաղ ևեթ գրեցաւ յետկարն կարմիր.
և ոչ ինչ տացի քեզ: Անկաւ Ոմիչնա-
նուալեալ ի գիրկու ծառայից եւրոց . և
ի զգալ նորա անձին, թափեալ էր ի
մուց անկուժելի: Կլայք անյոզ ի նողէն
ի գնացս եւր ընդ քաղաքավարս Նըն-
դիկս չէր անմարդասէր ոք: և յուղեցան
գութք նորա ընդ Ոմիչնա: Ետես զնա
յետ աւուրց . խօսեցաւ քաղցրու-
թեամբ ընդ նմա . իրատ ետ երթալ
յուխատ ի մի ի մեծամեծ մէհենաց աշ-
խարհին, յուսացեալ փոփոխութեամբ:
տեսարանաց ապաքինել նմա . և կամքր

իսկ յետ անցիցն անցելոց կացուցանել
վնա վերստին ի գործ համարակաց: Այլ
անդմտին յանսակնկալ թամբոյ կրիցն եր-
թայր և անզգայէր այրն հէք: Այն որ
երբեմն կորովիս նելամտութեամբ իւ-
րակ, և անսպանցակենցալով հռչակեալն
էր, վասնէր յայնժամ զմնացուածս ըն-
ծց եւրոց ի համատանս աղյօակամու: և
պճնէր ի հանդերձս փալփունս և յա-
կանս պատռաւականս: Այսպէս հաշեալ
և մաշեալ զամփան ինչ, ապա մեռանէր:

Անկարեսոր համարէաք յամել ի բանս՝
յուղղութիւն քատամտանի ընթերցա-
նելեաց մերօց զայսմ խարբէութենէ, ե-
թէ չէր Մելքոնյան նկրտեալ ի պատըս-
պարութիւնն ամենայն մասանց նորին:
Յաւէ նմա ապաքէն զի հարկ եղւ ի կիր
արկանել գհնտրս եպերականս, այլ ե-
պերէլ զայնուիթէ՛ որ խարեցին զիսաբե-
րայն, զայն յանձնու ոչ առնու: Թանը նմա
թէ չէր պարտ հաւատարիմ առ անհա-
աւատարիմն դուլ . և զի՞ թէ լցէալ էր
Անդղիաց ըսց զիսուտմիւնս իւրեանց առ

շարանիւթք բենգալացին, դրդէր օրինակ
յաջողութեան նենդոյն՝ զչարահնարս
անհամարսի նմանութիւն, Արդ մեք ոչ
քննեցուք զինդիրս զայս ըստ անսատէ,
ըիւր իմաստից բարոյականին. զի չեն
իսկ այդմ պէտք. այլ հայեցեալ յայն
երջարդասիս հարկի գմնդակագունին,
և փաստից ևս ոչ կարօտեալ վսեմակա-
նաց, ոչ ինչ յերկուանամք, զի գմեաց
կլայվ, և գործեաց ոչ միայն ոճիր, այլ
և վրիպակ. Թէ. համեստութիւնն է ի-
մաստնագոյն քաղաքավալարութիւնն, ա-
ռած իմն է ընդունելի, և յաձախանվորէալ
ևս և շահ ժամանակեայ օդաֆ. միոյ միոյ
ի մարդկանէ. այլ յընկերութիւնն մարդ-
կան գուն ուրեք վրիպի կանոնդ ի ճըշ-
մարտութենէ. վասն որոյ և ընկերու-
թիւնք յերկարակեացք են քան զիւրա-
քանչիւր ոմանս. Մարթի յիշատակել
զարս մեծացեալսի դրժանաց հաւատոց
ոմանց. այլ ո՞ր այն պետութիւն, որ ճըշ-
մարտիւ օդաեցաւ ի դրժութենէ հա-
սարակաց հաւատոց: Բովանդակ պատ-

մութիւն բրիտանիկ Հնդկաց պարզէ ըդ-
ճշմարտութիւնս զայս մեծ, զի չէ խո-
հական դրժանօք զդրժանաց առնուլ
զառալս, և զի զին զօրեղ առ ի խոհա-
տել ընդդէմ ստութեանն է ճշմարտու-
թիւն: Անդզիացի իշխանք Հնդկաց շըր-
ջապատեալ ընդ պարագայս ամաց ի
դաշնաւորաց և ի թշնամեաց, որ ոչն
պատկառ կային պարտուց, վարեցան
առ հասարակ անկեղծութեամբ և ուղ-
ղութեամբ. և արդիւնք իրացն վկայէ.
ցին, զի իմաստութիւնն են անկեղծու-
թիւնն և ուղղութիւն: Արութիւնն և խե-
լամուռթիւն Անդզիացւոց նուազ օդ-
նեցին ի տարածանել և ի պահպանել
զարևելեան աշխարհակալութիւն նոցա-
քան զճշմարտասիրութիւն նոցին: Ա-
մենայն որ ինչ մարթէր շահել նոցա նը-
մանելով Հնդկաց յերկբանութիւնս, ի
ստայօդութիւնս, ի խաթկանս և ի նենդ,
ոչ ինչ են առ որով շահեցանն, լեալ
ազդ միակ ի Հնդկէս, յորոյ ի բանս մարթ
է վստահել: Ոչ երդումն ի նանրահա-

ւատ մտաց ճարտարեալ, ոչ պատանդ
պատուական ազգիցէ զիուն մասն այնր
վստահութեան, զոր ընծայէ սցոն այս
և ոչն ոչ անդիմացի գեւպանի: Բերդ
անմատոյց և ամբակառոյց ոչ տայ բեր-
դայնոցն այնպիսի ապաստան անդոյթ.
յոր վայելերով բերդակալն անդիմակա-
նաւ և եթ զինեալ երաշխաւորութեամբ
անցանէ ընդ ատհմանն հզօր և սիսերիմ
թշնամեաց: Մեծազօրն իշխանաց Ա-
րեւելից հազիւ յաջողէ ընդ ապարագայ-
ման տոկոսեաց վերսծել զմանն մեծու-
թեանց թաքսուցելոց ընդ երկրաւ ի
տունն հպատակացն: Իսկ պետութիւնն
անդիմական մատուցմանէ վաշխ դուզ-
նաքեայ, խուն մի աւելի քան զորս առ
հարիւր, և փութայ ագահութիւն հա-
նել զրիւր բիւրոց դրամոց ի ծածկա-
գոյն մառանաց իւրոց: Խոստանցի ան-
հաշտ Հնդիկ արքայ զօրաց անդիմացոց
զերինս սոկւոյ, առ ի դասալիք առնել
զնոսա: Անդիմացին խոստանայ նոցա
զոյշն և եթ սոճիկյետ բազմամեաց զի-

նուորութեան: Այլ գիտէ ամենայն զո-
րական հնդիկ, զի լցի ի նոստումն Անդ-
վիացոց զի եթէ կեցցէ և զամա հա-
րիւր, աղ իւր և որիզ հանգոյն վար-
ձուց ամենիշխան կուսակալի նոցա ոչ
հատցին երբեք. և զի չիք այլ պետու-
թիւն ի Հնդիկս, որ թէ և ուժաս հրա-
պարակաւ գինցէ, ոչ լքանիցէ զնա-
կորնչէլ սովամահ ի գուեհս, իբրև ոչ
ևս իցէ նմա պիտանացու: Օդտակարա-
գոյն բարեմատնութիւն պետութեանէ
լննել հաւատարիմ ի մէջ անհաւատա-
րիմ պետութեանց. և յայս նսեհ վայե-
լէն Անդվիացիք յԱսիփա: Եթէ յաւուրց
յեաին երկուց սերնդոց՝ գնայեալ էր
նոցա ըստիմաստիցն, որ անմոլար թուին
Մելքոնյ, եթէ վարեալ էր ընդ նմա-
նիս Ոմիչոնտայ ըստ օրինակի նոցա սը-
տութեամբ, խարդախութեամբ և դըժ-
րութեամբ, հաւանեալ եմք ի մաի, զի
ոչ քաջութեամբ նոցա և ոչ աջողու-
թեամբ մարթ էր աշխարհակալութեան
նոցա կալ ի հաստի:

Հաւանի Մելքոմ, զի առ անհնարին
և էթ հարկի մարթիցի արդարացուցա.
նել զդրժանս Ալայլայ. այլ մեք և ան-
հարկ և անդէպ գնեմք զայն, և դատա-
պարտեմք ամենամին:

Ոչ Ոմիչոնտ միայն ի զրհ մատնեցաւ
սակս այսր յեղափոխութեան, այլ և
Սուրաջա Գովլա աւուրբք յետոյ քան
զփախուստ իւր ձերբակալ եղեալ, ձգե-
ցաւ առաջի Միր Զափարայ: Անդ քըստ-
մնեալ արկ զանձն ի յերկիր. և կովկո-
ղէր և կականէր և հայցէր զդթութիւն,
զոր ինքն երբեք ոչ եցցց: Վարանէր
Միր Զափար, այլ որդի նորա Միրան,
պատանի ամաց եօթն և տասանց, հան-
գոյն վատչուէր կալանաւորին թանձրա-
միտ և վայրագ, ոչ ողբեցաւ: Ոծաւ
Սուրաջա ի խուզ ուրեք ամայի. ուր
վայրիկ մի յետոյ մոխն և պաշտօնեայք
մահու: Անդղեացիք չեղեն սատար սպա-
նութեան նորա. և Միր Զափարայ զգա-
ցեալ զի զարկին լուդ այն, պատճառէ-
ցաւ առ հարկի առեալ զլբէժ նոցա
յոխերմագոյն թշնամոյն:

Տեղայր յայնժամ տարափ ոսկւոյ
յԱնդղեացիս, և ութսուն բիւրք գրա-
մակշուոց յղեցան ի Մուրշիտապատայ
յամբոցն Ուելեմ: Եւ խաղայր գայր
ընդ երկայնութիւն գետոյն ի թռիչս
դրօսուց, և ի ձայն նուագարանաց տոր-
միջ նաւակաց առելի քան զարիւրոց,
բարձեալ բերելով զմեծաշուք գանձն
զայն: Կալկաթա, որ յառաջ քան զա-
միս ինչ նուպանացեալն էր, ևս քան
զմս բարգաւաճեաց: Վերկենցաղեաց
վաճառաշահութիւն. և նշանակի լու-
թեան յերևան դային անդ յամենայն
տունս Անդղեացոց: Իսկ կլայվայ ոչ
ևս գյոր չափ գոյեց, բայց չափոյք և էթ
անձին: Բացաւ գանձարան Նորկացընդ-
արձակ առաջի նորա. ուր ըստ սովո-
րութեան հնդիկ իշխանաց խոկեալ էին
դրամք ամբաւք. յոր գտանէին և գահե-
կանք եւրոպականք, ընդ որոց գնէին
Վենետիկեցիք զանկուածս և զհամեմն Ա-
րևելից, չև պատեալ եւրոպացի նաւու
զժրուանդանաւն Բարեյուասոյ: Եւ գը-

Նայր Կլայլ ընդ շեղմակցաս ոսկւոյ և
արծաթոյ, պատէալ յակնթիւք և ա-
գամանդովք, և կարէր աւնուլ անտի
որչափ ինչ և կամբ : Եւ ընկալաւ իրր
զքսան բիւրս գրամակըուց :

Այս տուրեառ գրամոց ընդ Կլայլ
և ընդ Միր Զափար գատապարտեցաւ
յետ վեշտասան ամաց, ի ձայնէ հա-
սարակաց, և յատէնի աւագանւոյն դա-
տեցաւ խստիւ : Այլ Մելքոն պնդա-
գոյնս ջատագովէ զայն : Դատախազք
յաղթական սպարապէտին յանդիման
աւնէնի զշահս նորա իբրև զկաշառս, և
կար զաւրս անզօր նիզակակցի՝ ի սայր
սուսերի բանագատէալ : Իսկ պատմա-
գիր անցից կենաց նորա ընդ հակառակն՝
համարեալ զնոսին պարգևս անբանա-
դատս և անարատս և մեծամեծարս, հա-
մեմտակ զայնոսիկ ընդ փոխարէնս վաս-
տակոց, յօտար պետութեանց հատու-
ցեալս Մարլպուրայ, նելսնայ և Վել
լինկտոնայ . և յաւելու . Միշա իսկ սո-
վորութիւն եղեւ յԱսիա տալ և առնուլ

պարգևս . և չե էր հրովարտակն՝ որ
արգելցը ումեք ի ճահ առնուլ զսովո-
րոյթ զայս : Այլ այսու պատճառաբա-
նութեալը ոչ շատանամք մեք : Ու կառ
կածեմք վաճառեալ Կլայլայ զօդուտ
պաշտաման իւրոյ , և կամ զհայրի
նեացն . այլ ոչ կարեմք անսպարտ առ-
նել ջնա յիմիք, որ թէ չէր չար ինքնին
սակայն չար տայր օրինակ : Չիք ինչ
յայանի քան զայն, զի զօրավարի պարտ
է իւրումն սպաս տանել պետութեան,
և ոչ այլում : Այսմ զհետ դայ, զի որ
ինչ և ընկալցին նա փոխարէն վաստա-
կոց, պարտի ընդունել զայն կամ յիւր
մէ պետութենէն, և կամ լիով գիտու-
թեամբ նորին և հաւանութեամբ : Այն
կանոնի պարտ է պատկառ կալ ևս և ի
մանունս, ևս և ի տուրս խաչի, դրոշ-
մածոյ, և գերթի իսկ ժամաւրինի : Եւ
իբր մարթիցի ըստ օրինի սպաս ունել
պետութեան . եթէ որք հրամայենն զօ-
րութեանց նորա, համարձակիցին ան-
հրաման և գաղտ ի նմանէ ընդունել ի

նիզակակցաց զմեծութիւնս արքայականս: Վայրապար է ասել, թէ չե ևս արգելցը հրովարտակ զննունելութիւն պարդեաց յասիացի իշխանէ: ոչ ըստ հրովարտակին, որ յետոյ էլ, առի խափանել զպարգևս այդպիսիս, այլ ըստ խմաստից, որք ընդունելիք էին, մինչ չե իսկ ելեալ հրովարտակին, ըստ խմաստից հասարակաց օրինաց և հասարակաց մոսաց դատախաղելք զգնացից կլայվայ: Զեք հրովարտակ մեզ ծանօթ, որ արգելուցու զդիւնադպիթ տարաշխարհէկ իրաց պետութեան Անդգեյ, մի առնուն մոշակ յայլոց պետութեանց: սակայն ոչ ինչ նուազ սոսոյդէ և այն, զի եթէ թոշակեալ նորա ի Գրազիոյ ի ծածուկ ապախտարասցէ զըպարտս իւր, չարաշար և ծանունց պարտաւորեսցի պատժոց: Մելքոմ բալդատէ զգնացս կլայվայ և զվելինկառնի լոնդ միմեսնս: այլ ներեսցի մեզ հերքել զհամեմատութիւն նորա: այսուակնարկութեամբ: Օրինակ իմ, եթէ

Վելինկառն յետ արշաւանին յամի 1815, և մինցեւ հրամայէր զրուն, որ ուներն զԳալլիա, ընդունէր զանխուլքսան բիւրս գրամակըսոց ի Լոդովիկեայ ութեւտասներորդէ իբր յառհաւատչեայ չնորհակալեաց նորա վասն մեծամեծ սպասաւորութիւնս հարկանելց իւր տոհմին Բուրբոնայ, զինչ էր կարծէլ զնմանէ: Սակայն առ սովու ոչ ինչ աւելի արգելցը արձանագեր հրովարտակաց զննունելութիւն պարգևաց յեւրոպա: քան առ նովաւ յԱսիա:

Համայն և հարկ է հաւանել, զի բազում ինչ մեղմէ զմեղս կլայվայ: Քանզի համարէր նա զանձն ոչ զօրավար արքունի, այլ պաշտօնեայ վաճառականաց: Վաճառականացն գէթ լուելայն չնորհեալ էր պաշտօնէց իւրեանց զիշխանութիւն մեծանալց՝ յառատութենէ հնդիկ ևս հնարից: Եւ իբր էր խելամութեան պարտուց ակն ունել յարբանեկէ համեստագունէ քան զտերանց նորա: Կլայվ թէպէտ ոչ զեկոյց նոցա

մեկն զբախտ իւր, և զհաւանութիւն
նոցա ոչ խնդրեաց. այլ ջանիւ ծածկու.
թեան չեղե մատն գիտակցութեան գոր-
ծելց իւր զանպատեհս: Նա աւսիկ
համարձակ խոստովանէր բարութեան
իշխանին վերաբերեալ զնա ի լուռթիւն:
Գլուխ բանիս, թէ և թուր մեզ, թէ չեր
նմա օրէն այսու օրինակաւ առնուլ ինչ.
գովելք զնա, զի չէառ աւելի: Ընկա-
լաւ զբսան թիւրս դրամակցուց, ուր
միով և թ բանիւ մարթէր կրկնել զայն:
Դիւրին էր յոյժ ձեանալ զառաքինու.
թիւն անդր ը Անդղիա, և զյափշտակու.
թենէ կլայլայ ձառու արկանէլ. այլ հա-
զիւ ումեք ի խուանէ դատախազից նորա
լինէր նայապէս ի չափու ունել զանձն
ի լիապատար գանձարանի անդ Հընդ-
կաց:

Ձեռն որ եդ ի գահ զՄեր Զափար, այն
միայն կարէր ունել զնա անդ: Զէր նա
ասպաքէն մանուկ խակ, և ոչ թշուա-
ռութեան վիճակեալ ծնամնէլց ի ծիրա-
նիս. լամա որց և չէր լիմար և զեղծ

ամենևին զօրէն նախորդի իւրոյ. այլ
վերջանայր ի յաջողութեանց մասց, և
յառաքինութեանց կարեռաց ի գա.
հուն. և որդի նորա թագաժառանդ
Միրան՝ էրմիսուսմն Սուրաջն: Ազմկեալ
էր յեղափոխութեան զմիսու մարդկան.
և յոդունք յաւագաց աշխարհին նշա-
հէին համարձակ ջնախարարննոր: Նախ
արար Առուգայ հզօր և ձոխ գաւառի,
որ զօրէն այլոց նախարարաց Մողրայ
փոխեալ էր յարքայ ինքնիշխան, սպառ-
նայր ասպատակել ի Բենդալ: Եւ ոչ
մարթէր երերուն պետութեանն կալ
յակաստանի աւանց աջողութեանց մը-
տաց և իշխանութեան կլայլայ: Յայսմ
վայրի հասեալ նաւու, ած նամականի,
գրեալ յատենէն վաճառականաց, մինչ
չև էր նոցա ընկալեալ զզոյց պատե-
րազմին Պլասեայ: Խորհեալ նոցա յան-
ձանձել զգաղթականս իւրեանց ի Բեն-
դալ, սահմանեալ էր տեսչութիւն բալ-
մակնձիրն և գժպատեհ. և ի լուռմն չա-
րեաց, չէր տուեալ ի նմա բարձ կլայ.

Վայ : Սակայն ընտրեալքն ի կազմու .
թիւն այսր նորոյ տէսչութեան , յանձն
առին ի մեծարանս իսկ անձանց հետուել
տարադէպ հրամանին . և հրաւիրեցին
զնա ի բարձ գերաբոյն իշխանութեան :
Հաւանեցաւ ընդ այն . և վաղ ի յայտ
եկն , զի կանխեալ և եթ էր նոցա յիշձս
ատենին վաճառականաց : Քանզի ա-
ռեալ նոցա զաւետիս պայծառ յա-
ջողութեան Ալյավայ , կացուցին զնա
կուսակալ վիճակաց իւրեանց ի թեն .
գալ հանդերձ շնորհակալեօք և մեծա-
րանօք : Յայնժամ զօրութեան նորա ոչ
ևս գոյր պայման . զանցեալ զայնուիկ .
յոր եհաս Տոպէս ի հարաւակոզման
Հնդկաց : Ահեւ և դողութեամբ հայէր
ինա Միր Զափար . և սաստեալ էրբեմն
յոմի յերևելեաց ի բնիկ աւագանւոյն .
որոյ կագեալ էին արք ընդ հնդիկ զօ-
րականս Անդլիացւոց . ասէ . Եւ դեռ
ուսանել իցէ քեզ , թէ ո ոք իցէ զօրա-
վարդ այդ Կլայլ , և յոր կարդ կացոյց
զնա Աստուած : Իսկ այրն աւագ , որ ի .

բրե ծաղրածու հոչակաւոր և վաղեմի
բարեկամ Միր Զափարայ իշխէր համար-
ձակախօսել առ նմա , պատասխանի ա-
րար , և ասէ . Եւ ի՞ր իցէ ինձ թշնամա-
նել զնա . ինձ որ ոչն յառնեմ ընդ ա-
ռաւուս , չև երիցս ի ծունը իջեալ ա-
ռաջի ցոյց նորա : Իբր ոչ եթէ ըստ ա-
ւելեաց իմն ասացաւ կատակս այս . զի
ամենեքեան խոնարհէին առ ոտս նորա :
Անդլիացիք զնա միայն համարէին բա-
ւական ի բռնազբօսել զՄիր Զափար առ
ի ընուշ զուխտ իւր . Միր Զափար զնա
միայն վարկանէր ձեռնհաս ի պատսպա-
րել զիշխանութիւն իւր ի խոռվարար
հպատակաց և ի հինից գրացեաց :

Ի գեպ իսկ է ասել . զի ճարտար և
ժիրաժիր վարեցաւ Կլայլ իշխանու-
թեամբ իւրով յօդուտ հայրենեացն :
Արձակեաց նա զօրս յերկիր ուրեք ի
հիւսիսյ Կառնատիկայ , ուր զօրանային
Գալլիացիք , և կարեոր էր վարել ըշ-
նոսա անտի : Ուաշնորդութիւն արշա-
ւանին յանձն եղւ զօրագլխի ումեմն ,

որ կոչէր Փորտ, հազիւ ծանուցեալ
ցայն վայր: այլ կորովի ակն կլայվայ
նկատեալէր ի նմա զիշանաւոր աշոտու-
թիւնս պատերազմականս: Եւ վճարե-
ցաւ արշաւանն արագ և պայծառ յա-
ջողութեամբ:

Այն ինչ այսպէս պատաղէին յոլո-
վագոյնք ի զօրաց բէնգալայ ի բացեայ,
վտանգ նոր և ահաւոր սպանայր յէլս
արեմտեան սահմանաց նորուն: Մէծն
Մողոլ կայը կալանաւոր ի ձեռս ուրուք
ի հսկատակայն ի Դեշի. որդի նորա ե-
րէց, Շահ Ալէմ անուն, Ճակատագրեալ
զամն բազումն ի խաղալիկ ձախողակ
բախտին, և ի գործինախ Մարատաց,
և ապա Ախուղիւցոց, խուսեալ էր յար-
քունեաց հօրն: Զարմ նորա մեծարէր
տակաւին, և իշխանազունք ոմանք հը-
քորք, մանաւանդ նախարարն Աւուդայ,
կամէին ձեռն տալ նմա: Դիւրաւ ձգեաց
Շահ Ալէմ ի դրօշ իւր զնուռն բազ-
մութիւն ի ինդիր բախտի զինուորելոց,
որովք երկիրն զեղոյր: Արք չորք բեւրք,

այլածինք և այլագենք, փութանակի
գումարեցան զնովաւ. և մտարերեաց
ընկենուլ յաթոռոյ զանազգին փառա-
ւորեալ յանկարծակի, և յինքն հանել
զիշխանութիւն նորա:

Արհաւեիք կալան զՄիր Զափար. և
միակ հնար թուեցաւ նմա գնել բա-
զում արծաթոյ զվաբանութիւն Շահ
Ալէմայ: Զայս հնարս հնարեցան սաէպ
որք յառաջ քան զնա իշխեցին ի մեծա-
փարթամ և յանպատերազմասէր գա-
ւառս անդ, մերձ ի բերան Գանդիսի:
Պախարակեաց զկարծիս նորա կլայվ.
և ըստ կորովի մտայն և անսասան ա-
րութեան գրեաց առնա, և ասէ. Եթէ
զայդ առնիցես, ելցեն և այլք յոգունք
յամենայն խորչց աշխարհիդ, յոխոր-
աւլ և մերկիլ զքեզ յարծաթոյդ, մին-
չե չմասւ և ոչ դանկի միոջ ի գանձուդ:
Աղաչեմ զքեզ մի թէրահաւատել յԱնդ-
զիացոց, և ի զօրաց նոցա յարելոց ի
քեզ: Գրեաց ըստ ամին օրինակի և առ
կուսակալ Պատնայ քաղաքի, հնդիկ զե-

նուոր արի և մեծարոյ նմա յոյժ . և ա-
սէ . Պինդ կաց . պահ կաջօիր քաղաքիդ
մինչև ի սպառ . վատահ լեր զի սերտ և
ստոյդ բարեկամք են Անդղեացիք . և զի
ոչ ձեռնթափ լինին յիրաւանց . յո՞ր
նկրտեցան միանդամ :

Եւ կացոյ նա զբանսիւր : Շահ Ալէմ
պաշարեալ զՊատնա , իբրև հանդերձէր
ի վերայ յարձակել , ազգ եղե նմա . զի
խաղայր գայր Կլայլ արշաւասոյր : Բա-
նակն համայն , "որ դիմէր անդր , կազմէր
միայն ի չորեքարիւր և յիսուն Եւրո .
պացւոց , և յերկու հազար և ի հինդ
հարիւր Հնդկաց : Այլ անուն ևեթ Կը-
լայլայ և անդղեացի զօրաց նորա՝ ահ
արկանէր յայնժամ ընդ Ասիա համօ-
րէն : Եւ ընդ երեւել առաջապահ գնդի
նորա , գարձաւ թշնամին խառն ի խուռն
ի փախուստ : Գաղղիացիք ոմանք , որ ի
խնդիր բախտի կային առ Շահ Ալէմ ,
յորդորէին զնա փորձել զբախտ զի-
նուց , այլ ի զուր : Ճամբար նորա բազ-
մագումար , որ խոռվեաց զարբունիս

Մուրշիտապատայ , լուծաւ անհետա-
ցաւ յահէ ևեթ անդղիայի անուան :
Դարձ արար Կլայլ յաղթանակաւ
յամրոց Ուկլիէմ : Միր Զափար ի զար .
հուրանաց ի հրանւանս փոփարերեալ ,
մատոյց պահապանի իւրում զպերձ գը-
րաւակոն նորհակարեաց իւրոց : Վարձք
վճարելիք նախարարին ի վաճաւակա .
նացն Անդղեացւոց վասն լայնատարած
կալուածոցն զոր ունեին ի հարաւոյ
կակաթայ , գումարէին իրը յերիս
բիւրս դրամակիշոց ի տարւոզ : Այս
հաս Ճոխ , որ բաւականանայր երևելա-
գունին յանդղիական աւագանւոցն ի
վարել զկենցաղ մեծաշուք , համօրէն
չնորհեցաւ Կլայլայ զամնայն աւուրս
կենաց նորա :

Անստիւտ համարիմք զպարգևս զայս ,
սրում չէր և չէր մարթ զանիուլ գով .
զի վաճառացութիւնն ինքնին ուներ
զվիճակն ի վարձու . և չէր հնար պատ-
ճառել նմա զանդիտութիւն և զընդդի-
մութիւն . զի որ լուէն , հաւանի :

Բայց ոչ յերկարեաց գոհութիւն
Միր Զափարայ: Զգայր յաւուրց հետէ,
զի նիշակակիցն զօրը, որ ամբարձն զնա
ի վեր, կարէր և մղել զնա ի վայր. և
յածէր զասն ի խնդիր պատսպարու-
թեան ընդգէմ ահեղ զօրութեանն այ-
նորիկ, յորմէ պատսպարեալն էր ինքն
ցայն վայր: Գիտէր զի ոչ գտանէր ի մի-
ջե Հնդկաց զօրութիւն բաւական առ ի
գիմագրաւել փոքու գնդի նորա. և զի
Գալլիացւոց շիշեալ էր կար ի Բեն-
դալ: Այլ համբաւ Հոլանտացւոց հրո-
սակեալ էր ի վաղնջուց ի ծովս Արևե-
լից, և չե ևս ծանուցեալ նուազել զօ-
րութեան նոցա յԵւրոպա: Պատգամք
ընթեանային ի ծածուկ ընդ արքունիս
նախարարին և ընդ Հոլանտացիս հա-
տուածեալս ի Ջինորա. որոց նամակա-
նի բազմաթափանձ յլեալ ի Բատաւիա,
յորդորէին զպետութիւնիւրեանց հան-
դերձել բանակ համազօր ընդդէմ բա-
նակի Անդվացւոց ի Բենդալ: Հոլան-
տացիք առ տե՞նչ տարածելոյ զիշսա-

նութիւն հայրենեաց իւրեանց, և մա-
նաւանդ խառնելոյ ի բաժինս մեծու-
թեանց, որովք յոլովք ի վտարանդի
Անդվացւոց ընուին դեռ ևս, կազմե-
մեցին նաւասարմ քաղազօր: Եւ ահա
նաւը եօթն յաղմք հասն յեղակար-
ծումի Հուկիք. և զօք ի նոսս հազար և
հինգ հարիւր, իբր կէս ի կէս եւրոպա-
ցեք: Եւ ի գէտ ժամանակի պատահէր
արշաւան նոցա զի զօրս բազումն ար-
ձակեալ էր Կլայզ ի վերայ Գալլիա-
ցւոց ի կառնասիկ. և որք առ նմա-
կային, նուազունք էին թուովքան ըզ-
Հոլանտացւոցն: Գիտէր նա զի Միր Զա-
փար գաղտ ձեռն տայր հրոսակին. զի
ի յառնել իւր ի վերայ հաշու ազգի,
հարկ էր ճշգիւ համար տալ զդնացեց
իւրոց. զի պետութիւնն անդվական ոչ
կամէր յաւելուլ պատերազմ ընդ Հո-
լանտացւոց ի պատերազմն զոր միէր
եսկ ընդ Գալլիացիս. զի մարթէր նմա-
ի յանցանս գրել զինորձ իւր, և պա-
տուհասել իսկ: Այլ և ի ձեռն Հոլան-

տացւոց այն ինչ առաքեալ էր նորա
զարծաթ իւր յԵւրոպա. վասն որոյ օ-
գուտ բազում էր նմա խոյս տալ ի կը-
ռուցյ: Սակայն ոչ ինչ երկուանայր, զի
եթէ թողոյր բատաւեան նաւատորմին
անցանել ընդ վերկոյս գետոցն, և գու-
մարել ընդ պահակապահն Զինսորայ,
դիմէր Միր Զափար ի գիրկս նորոյ նիզա-
կակցին, և իշխանութիւն Անդզիացւոց
անկանէր ի վտանգ անհնարին ի Բեն-
դալ: Այսր աղադաւ խորհուրդ կաւա-
ըստ իւրումն խիզախական բարուց, և
զօրավիդն եղեն նմա զօրավարք իւր,
ևս առաւել Փորտ, որում յանձնեցաւ
կարևորագոյն մասն մարտին: Փորձե-
ցան Հոլանտացիք բոնադատել իւրեանց
անցս: Այլ ի դիմի հարան նոցա Անդ-
զիացիք ընդ ջուր և ընդ ցամաք միանդա.
մայն: Բազմաձեռն էր թշնամին յԵրկա-
քանչիւր տարերմն. և երկուստեք իսկ
պարտեցաւ սպառսպուռ: Առան նաւք
նորա. և անկան և կամ գերեցան գոդ-
ցես ամենայն եւրոպացի զօրականք,

յորս արշաւան նորա յԵնոյր: Ել պա.
շարեաց յաղթականն զՁինսորա. և ա-
ւագաց հատուածոցն Հոլանտացւոց ի
նեղ անկեալ, զիման ի պայմանն թելա-
դրեալս ի կլայլայ: Խոստացան մի կա-
ռուցանել ամուրս, մի զօրահատոյց լի-
նել աւելի քան զջոկատ մի սակաւաճե-
ռըն կարեւոր ի պահ բարեկարգութեան
գործարանաց իւրեանց. և նշանակեցաւ
բացայաց, զի եթէ լուծանիցեն նոքա
զպայմանքս, տարագրեացին առժամացն
ի Բենգարայ:

Եռամսնեայ աւուրբք յԵտ այսր մեծի
յաղթութեան նաւեայ՝ Կլայլ յԱնդ-
զիա: Անդ վարձք և պատիւք պահէին
նմա, թէպէտանհաւասարք ըլզից նորա
և կամ փառասիրութեան: այլ հայե-
ցեալ ի տիս նորա, ի կարգն ի զօրու, և
ի բռնկայս իւրի ժողովորեան, պարտէ
պայծառս և չքնաղս անուանել զնոսին:
Ամբարձաւ նա յաւագրութիւն իւրաց.
և իսրամսուեցաւ ակն ունել և անդ-
զիական անուան մեծարանաց: Գիշորդ

Երբորդ, որ այն ինչ ելեան էր ի գահ, ընկալաւ զնա սիրելաբար։ Աւագանին մեծապատիւ մեծարէին զնա։ և Պիտ, յորմէ ակն ածէին ատեան աւագանւոյն և աշխարհն ողղոյն, ցանկայր ակնյայտնի պանծացուցանել զայրն զայն, որոյ նահատակութիւննք յաձախէցին զիտառ համբաւատենէ դարուն։ Ճարտասանու այս մեծ նկարագրեալ իսկ էր զկլայվ յատենի իբրև զերկնածին սպարապետ, իբրև զքք, որ առ սեղանով գրոց գաստիարակեալ, ի հանդէս ածէր զհանձօր զինուորական, որ ի զարմանս կըրթէր և զարբայն Պրուսաց։ Յաւուրսն յայնոսիկ ոչ երթևեկէին զրուցատարք օրագրաց ի ձեմելիս ատենին։ այլ դըրուատես այս ազդողաբար պերճաբանեալ ի վեհագունէն քաղաքավարաց դարուն, և բերանոյ ի բերան յածեալ պատմեցաւ Կլայփայ ի Բենդալ, և բերկրեաց զնա և շողամեաց յոյժ։ Ապաքէն ի Վլուփայ հետէ Կլայլ միայն եկաց ըսպարապետ անդղիացի, յոր պարծել

մարթէր հայրենակցաց նորա։ և կարի իսկ յիբաւի։ Զօրավարին կոմպերանաւոյ բազում ուրեք ձախողեցին իրք. և միակ յաղթանակ նորա կանգնեալ ի վերայ գաւառակցաց, և գմինեայ անդըմութեամբք այլանդակեալ, նսեմացոյց զհամբաւնորա չարտաշար քան զբազում պարապութիւնս իւր։ Կոնուա այր սըրտեայ և ներհուն ի զինուորութեան, կարօսէր կորովց և աջօզակութեան։ Գրանի զինուոր համեստ, աղնուաբարոյ, և արի իբրև զառիւծ, վերջանայր ի գիտութենէ և ի հանձարոյ։ Սաքւիլ հմտութեամբ և աջողութեամբ ոչ ինչ ընդհատ ի ժամանակակցաց, ստդաւաբարանօք, որ զիտառ ազարտէ զինուուրի։ Եւ ընդ օտար զօրավարսն ատան յագթութիւն Անդվացիք ի Մինդեն և ի Վարբուրդ։ Սմին իրի որպէս անկ իսկ էր, ողջունէր ժողովուրդն պարծանօք և ցնծութեամբ զզօրավար իւր համաշգի. որ բնիկ արութեամբ իւրով և ինքնագիւտ մարթանօք զուգապատիւ ար-

ձանանայր մեծանուն սպարապետաց
Գերմանացւոց :

Մըշէր կլայլ փարթամշոխութեամբ
իւրով ընդ ականաւորս ի մեծատանց
Անդիսոյ : Կան մնան հաւաստիք , զի
յլէալ էր նորա ի ձեռն հոլանտացի վա-
ճառականաց աւելի քան զութեատան
բիւրս դրամակըսոց , և ի ձեռն Անդ-
զիացւոց առաւել քան զբիւրս չորս , և
այլ ևս արծաթ յոլովընդ ձեռն այլոց :
Տուեալ էր և գանձս բազումն ի գին
ականաց պատուականաց . այս տարազ էր
փոխադրութեան դրամոց յաճախեալ
անդ յայնժամ : Ի Մագրաս միայն ստա-
ցաւ ադամանդս ընդ բիւրուց երկուց և
կիսոյ : Եւ բաց յանբաւ գումարոյ առ-
ձեռն արծաթոյն , էր նորա և վիճակն
հնդիկ , որումն ան ինքնին սակ հատա-
նէր բիւրս երկու և հազարս եօթն ի
տարւոջ : Համայն հասք նորա տարեւորք
ըստ Մելքոնայ , որ հնարի ըստ կարի
նուազել զայնս , անցանէին զըորիւք
բիւրուք . զոր առ Գէորգաւ Երրորդիւ

գէթ այնպէս գէուարին էր ունել , որ-
պէս բիւրս տամն առ մեօք : Ասասցուք
աներկեան , զի յամենայն կարգս կենաց
չել ուրեք անդզեացի անինչ , որ անդ
ուրեմն յերեսուն և ի չորս ամի տիոց ա-
րար իւր զայնչափ մեծութիւնս ընչեց :

Բայց արժան է յաւելուլ զի ազ-
նուարար ի կիր էարկ կլայլ զմեծու-
թիւնս իւր : Եւս Պլասէայ պատերազ-
մին , որ հիմն եղ ճոխութեան նորա ,
յլէաց իսկ և իսկ բիւր դրամակիւռս
առ քրոս իւր . բաշխեաց յայլ ազդա-
կանս , և ի ըքաւոր բարեկամն զբիւրս
կրկին . պատուիրեաց քսակակալի իւ-
րում տալ ծնողացն ամ ըստ ամէ ութ
հարիւր . և ժանել զնոսա , զի կալցին
կառս . և վաղնջուց հրամանատարի իւ-
րում Լաւրենսայ , որ ցականեալն էր ,
կարգեաց դրամակիւռս հինգ հարիւր ի
տարւոջ : Որ ինչ ըստ այսմ օրինակի
ծախեաց , մարմի հաշուել միահամուռ
դրամակիւռս հինգ բիւր :

Եւ խորհեցաւ ապա ինամ տանել

Հայթաթանաց աւագութեան. և սովոն
իսկ Խորհրդավ թուի գնեալ նորա ըշ-
կալուածո: Յամի 1761, յետ աշխար-
հագումար ընտրութեան՝ գտաւ նա յա-
տենի հասարակաց ի գլուխ դասու կու-
սակցութեան, զրմէ գործ էր հոգալ:
Բայց ի քաղաքավարութիւնս ազգին
չեկաց նշանաւոր: Յարեցաւ զառաջնն
ի Փոքս, որպէս տեսաք, յետոյ ձգե-
ցաւ ի հանձարց և ի յաջորդութենէ
Պիտոյ, և հուսկ յետոյ կապեցաւ սղի
նորա ընդ Գէորգայ Գրենուիլայ: Յա-
մի 1764, ի սկզբան անդ ժողովց տաե-
նին, յորժամ յախուռն և անհանձար
հալածանք անարժան առաջնորդի ռամ-
կին, որում անուն էր Վիլքս, ամբո-
խեալ էր զլիտս ամենեցուն, զուարձա-
նայր քաղաքն վիպաւ, զոր տեսաք իսկ
ի յիշատակարանս Վալգուլայ՝ չե ե-
կեալ ի լյս: Հոփչարտ հայր Կլայվայ,
զոր աւագութիւն որդւոյն վերաբե-
րեալ էր յակումբ, որում կանխակալ
սովորութիւնք նորա անպատկանաւոր

զնա կացուցանէին, Ելյողթըն արքայի,
և ի հարցանել նորա՝ թէ ուր իցէ որ-
դին, պատասխանէաց ծերունին մեծա-
ձայն, մինչեւ լսելի լինել ամենեցուն, որ
անդն կային, և ասէ: Հասցէ ընդ հուպ,
տէր արքայ. և յաւելցի ձեզ ասա
վարկ մի:

Ա. Ա. Կլայվայ հանապազ յածէին միտք
դայնու աշխարհաւ, ուր իբրև զօրական
և քաղաքավար պայծառացեալն էր փա-
ռօք. և ի խորհրդոց անտի հնդիկ իրաց՝
ուղղէին գնացք նորա որպէս առն աւա-
գի յ Անգլիա: Զօրութիւն վաճառակը-
ցութեան արևելքան Հնդկաց՝ թէպէտ
անկարգ, ոչ ինչ երկմատիք լինել այնմ
առ մեօք անկարգութիւն օգտակար.
այլ յաւուրս Կլայվայ՝ էր այն և անկարգ
և վնասակար: Զէր նորա ատեան յան-
ձանձանաց: և յոդունք ի վերակացուաց
նորա վաճառականք և եթ էին, ան-
դէաք համաշխարհական քաղաքավա-
րութեանց, անծանօթք սեփական հան-
գամանաց աշխարհին, որ ըստ անընդել

գիպաց հպատակեալ էր նմա: Ասեան
բաժանորդաց նորա ուր և միմէլ կամէր,
գտանէր մուտս: Բազմակոյտ էր այն և
բազմազօք քան զարդիս, վասն զի ամե-
նայն բաժին, որ արժէր հինգ հարիւր
գրամակիս, տայր յայնժամ վարկ մի-
ժողովք նորա բազմագումարք, բազմ-
ամբոփ, և մըրկայց զք, և ատենաբա-
նութիւնք անպարկէ շտք և ախտաւորք:
Աղմուկ և աղաղակ և նենդ և կաշառ
նշաւակէին զանցս ժողովցն, ևս և ի
ինդիքս ծանունս: Վարկք ստայօդք հե-
նուին անսպառելք, և Կլայլ ինքնին
ետ տասն թիւրս գրամակշոց ի գնել
զմթերս վարկից, և բաշխեաց զայնս ի
պիտակ վաճառակիցն՝ յորս մարթ էր
նմա յենուր, և ընդ քարշ տանել զնո-
սա ի վէճ, առ ի ճգնել զիողմն հակա-
ռակորդաց: Զնոյն առնէին և այլք,
բայց ոչ նովին անհեթեթ յաճախու-
թեամբ:

Ժողովուրդն Անդիսյ փոյթ առնէր
յայնժամ զինդրոց Հնդկաց առաւել

քան զարդիս. և պատճառք յայտնիք են:
Այժմ պաշտօնեայ ոք մտանէ անտիա-
կան ի գործ . յուշիկ ելանէ ի վեր . և
բարեբաստիկ թուի, եթէ զբառասուն
և հինգամենիւք ուրեմն իցեն նմա տա-
րեոր հասք հազար գրամակշոց, և
բիւրք երեք ինայեալք, առ ի գառնալ
ի հայրենիս: Բազում մեծութիւն շա-
հին պաշտօնեայք ի Հնդիկս, այլ ոչ ոք
ի նոցանէ մեկին մեծանայ յոյժ. և որ
ինչ շահինն՝ յամբ, ատանելի և ար-
գար վաստակավք սոտանան: Աւագու-
թիւնք քաղաքականք բարձունք՝ չորք և
կամ հինգ միայն պահին արանց, որ ար-
ձակին յԱնգվիսյ: Իսկ զուտիկամու-
թիւնս, զատենադպրութիւնս և զատե-
նակալութիւնս ունին արք, որ զգեղեց
կագյն ամս կենաց նուիրեալ իցեն ի
սպաս վաճառակցութեանն. և ոչ հան-
ձար գերապայծառ, և ոչ ազգականու-
թիւնք մեծազօք զբազմաշահ աւագու-
թիւնս զայտոնիկ կարիցեն հանել յոք՝
որ չեմուտ ընդ գուռն կարգաւոր, և

ընդ սանդղոցն որոշս ոչ վերելակեաց :
Յառաջ քան զամն եօթ անսատւն՝ նուազ
արծաթ ածէր ի Հնդկաց յԱնդվաքան
զարդիս . այլ բաժանէր այն ի նուա-
զուս թուով . և բազում այն էր զի ի
սուզ ժամանակի ամբարէին սմանք զմե-
ծութիւնս : Ամենայն անդղացի՝ յոր
տիս և էր , կարէր յուսալ զբախս ու-
րուք ի ճոխ գալթականաց անտի : Եթէ
Ճամարտակէր քաջ ի հրապարակի , ե-
թէ մատենագրէր ինչ ի գովութիւն
գահէրիցու վաճառակցացն այնոցիկ ,
մարթէր երթալ նմա ի սպաս նոցին ի
Հնդիկս , և յամս իրը հինդ գառնալ ան-
տի մեծատուն որպէս Պիդոս և կամ
Կլայլ : Ամին իրի ատեան վաճառակա-
նացն նմանէր տաղաւարի վիճակաց , որ
հրաւէր կարդայր ամենեցուն առնուլ
վիճակս , մեծութիւնս իշխանականս կար-
կառեալ ի մրցանակ բարեբախտից սա-
կաւուց : Իրեւ աղդ եղւ լինել ուրեք
նահանդի , ուր զօրավար ոք յաստօտու
ուրեմն ընկալաւ ի պարգև կալուած

ընդարձակ հանդոյն աւանի , ուր թուէր
ի խնդրեն և թ առնուլ զբիւրս դրա-
մոց իբրև զննուիս , սկսան մարդիկ յու-
ղէլ և տապել յանմժոյժ ցանկութիւն
ճոխութեան , և յարհամարհանս յամբ ,
հաւասարի և չափաւոր շահուց :

Ի գուռի ծանու կուսակցութեան յա-
տենին վաճառականաց կայր ի վաղուց
վերակացու ոմն հզօր , աջողակ և մնա-
փառ Սոլիվան անուն : Մախայր նա ընդ
Կլայլ . և յիշէր զայրագին՝ որով ժապը .
հութեամբ քամահեալ էր երեմն կու-
սակալին ինենդալայ զհրամանօք բայց ,
կան ստենին : Հաշտեցաւ ընդ նմա ի
գարձին վեր ի վերս . այլ ոի գմնեայ
բունէր ի սիրտս երկաքանչիւր : Ամի
ամի ընտրէին յայնժամ ամենայն վերա-
կացուք . և յամի 1763 , յընտրութեան
նոցա փորձեցաւ Կլայլ բեկանել զըլու-
նութիւն զօրութեան Սոլիվանայ . և
գրգռեցաւ խազմ այնպիսի , զոր գժըն-
դակնկարագրէ Կլայլ : Յազմթանակեաց
Սոլիվան . և փութացաւ խնդրել վրէժ :

Զիր վարձուց վլմակին, զոր էառ. Կլայլ
ի Մեր Զափարայ, անխախուտ համարէր
ի քաջաց իրաւագիտաց Անդղիացւոց,
զի շնորհեալ էր ի նմին իսկ իշխանու.
թենէ, յորմէ ընկալան վաճառականքն
զիալուածն իւրեանց երևելիս, և զի զի.
ջեալ էր նոցա յայն ընդերկար : Սակայն
վերակացուք նոցա մատերեցին դրա.
ւել զայն, և հարկեցաւ Կլայլ բոլոքել
զնոցանէ յատեան արդարութեան :

Սակայն այլայլութիւն իրաց մեծ և
յեղարծ ի վերայ կայր : Ամենայն նաւ
ի ժամանակաց հետէ ածէր դոյժ չա.
րաշուկ ի թենդալայ, զի յոռութեան
առանին յանձնանձնաց դաւառին լը.
ցեալ էր չափ : Եւ բնաւ իսկ իմ իմբ
էր ակն ունել ի դասակէ պաշտօնեից
հասարակաց վտանգելոց ի հրապուրա.
նաց, զոր, որպէս երբեմն ինքն Կլայլ
ասէր, մարմին և արիւն ոչ կարէին բե.
րել. պաշտօնէից, որ անվլմարելի զօրու.
թեամբ զննեալ, համարս միայն տային
զեղծ, խռովայսող, խելայեղ և անիրա.

զեկ վաճառականաց բնակելոց ի բա.
ցեայ, ուստի յերթեւէ կ նամականուոյ
պէտք էին քան զամ մի և կէս: Սորին ա.
ղագաւ յետ Կլայլայ մեկնելոյ ի ին.
դալայ, տեսովութիւն Անդղիացւոց ընդ
ամս հինգ յայն անկարգութիւն զառա.
ծաւ անդ, յորմէ քայլքայի քաղաքա.
ժողով միաբանութիւն մարդկան : Հեւ.
պատն հոռվիմայեցի, որ յամ մի կամ
երկու՝ քամէր ի դաւառէ ուստիեք ըզ.
հնարս կանդնելոյ իւր գիշեայ ապա.
րանս, և զբաղանիս ի ծովագունս կամ
պանիսյ, ըմպէլոյ ի սաթէ, իսրախանա.
լոյ ի խահս երգակ հաւուք յօրինեալս.
ի հանդէս ածելոյ զգումարտակս ըմբը.
շաց, և զերամակս ընձուզտուց, նախա.
րարն ապանիացի, որ զհետ իւր թողեալ
զանէծս Մերսիքայ և Լիմայ, մոտանէր ի
Սատրիտ երկայնաձիգ կարգաւ ոսկէ.
զօծ կառաց, և բեռնաբարձ երիվարաց
ի վարաւանդս և ի տապճակս արծաթիս
զարդարելոց, ոչ ևս թուէին ինչ առ
պաշտօնէիւքն այնոքիւք ի թենդալ: իբր

ոչ եթէ անգթութիւն՝ ըստ բուն ձայ-
նին՝ յախտս նոցա երեկը, այլ անգթ-
թութիւն ինքնին դլխովին դուն ուրեք
դործէ զաղունս չարաղէտս՝ քան զար-
դասիս յախուռն ջանից նոցա ի գիւտ
դոյից : Խլէցին զեռաւկերտ իւրեանց
զՄիր Զափար՝ յաթուոյ . և զայլ ոք ընդ
նորա փոխանակեցին ; Միր Կոսիմ ա-
նուն : Այլ Միր Կոսիմայ էին կամք և ա-
ջողութիւնք մտաց . և թէպէտ միտեալ
ինքնին ի հարստահարել զհպատակս ,
ոչ հանգուրդէլ տեսանել ընդունեալ
զիսաա հարստահարութեամբ , որ ոչ
տայր նմա շահս , թող թէ ինոյր զաղ-
թիւր մտից նորին ի սպառ : Ամին իրի
բարձին զնա Անդղեացիք , և ամբարձին
անգրէն զՄիր Զափար : Եւ Միր Կոսիմ
կոստածիւ դառնագունիւ քան զիս-
ւարին խոռոչին առեալ զլրէժ անձին ,
անկաւ փախտական ի սահմանս նախ-
արարին Աւուդայ : Յամենայն յեղա-
փօխութիւնս յայսոսիկ բաշխէր տար-
աշխարհէկ տերանց իւրոց իշխանն նո-

րամուտ զամենայն քերուած գանձուց
իշխանակցին անկելոյ : Ժողովուրդ նորա
անթիւ մատնէր ի կամն այնոցիկ՝ որ իշ-
խան կացուցին զնա , և որ արկանել
զնա կարէին յիշխանութենէն : Եւ կա-
լան պաշտօնէայք վաճառականացն գրե-
թէ զամենայն իրաւունս մեկին շահա-
վաճառութեան ի միջերկրայս , ոչ յօ-
գուտ տերանցն , այլ վասն անձանց :
Հարկեցուցանէին զշնդիկս գնել շատի .
և վաճառէլ սակառոյ : Այնպատուհաս
թշնամնէին զգատաւորս , զպահա-
յոցը , և զշարկահանս աշխարհին : Ծնդ
հովանեաւ իւրեանց պաշտպանէին դա-
սու իմիք հնդիկ արբանեկաց , որ շըշէին
ընդ գաւառս գաւառս , և արհաւեիրս և
ամայութիւն տարածանէին , ուր և գա-
յին յերեան : Պաշտօնէայ իւրաքան-
չիւր սպառազինեալ էր ամենայն զօրու-
թեամբ տեառն իւրոյ , և տէր նորա ա-
մենայն զօրութեամբ վաճառակցու-
թեան իւրոյ : Բատ այսմ օրինակի ար-
ծաթ ամբաւ արագ արագ մթէրեցաւ

ի Կալկաթա . մինչդեռ մղեին ի խորս
թշուաւութեան էրեք հարիւր բիւրք
մարդկան : Սովորեալ էր նոցա ընդ բըռ-
նակալութեամբ կեալ . այլ ընդ բանա-
կարութեամբ այսպիսեաւ ոչ ևս : Ծկոյթ
անգղիացի սառւար թուէր նոցա քան
դուք Սուրածայ : Ընդ բնիկ տերամբք
լինէր նոցա գոնէ ելի աղագու գտանել .
զի ապստամբեալ յաղետսն անբերէլիս ,
տապալէին զտէրութիւն նոցա : Բայց
պետութիւն Անգղիացւոց բռնաւորու-
թեամբ ոչ ինչ ընդհատ ի բռնաւորա-
գոյն կարգէ խուժագուռժ տիրապետու-
թեան , ամբանայր ամենայն հնարիւք
բարգաւաճութեան անդրգուռելի : Բե-
րէր նա զնմանութիւն տէրութեան խա-
րամանեաց մնաւանդ քան զմարդկե-
ղէն բռնակալաց : Անյուսութիւն ինք-
նին ոչ զօրէր գրգելզէն զահամբոյր թեն-
գալացին յարիւթիւն անկուչելոյ ըգ-
ժառանդորդս աղնուականութեան աղ-
գի մարդկան , զարս Անգղիացին , որ
հարտարութեամբ իւրեանց և քաջու-

թեամբ յաճախ յաղթեալ էին թշնա-
մեաց , ևս և տամնապատիկ բազմագու-
նից : Ազգն հէք ոչ բնաւ փորձեցաւ ընդ-
դէմ դաննաւ . էր զի խոնարհէր ան-
մոռնչ ի դժոխմբեր տառապանս , և էր
զի փախստական գնայր ի սպիտակ որե-
րոյն , որպէս երբեմն հարք նորա ի Մա-
րատաց : Եւ դեսպակ անգղիացի ուղեռ-
բին ընթանայր յաճախ ընդ անշունջ
շնու և աւանս՝ անմարդացեալս ի համ-
բաւոյ մօտաւորութեան նորա :

Տարաշխարհիկ տեարք Բենդալայ ա-
տելիք էին հանուրց դրացի իշխանու-
թեանց . և ընդդէմ բոլանդակ սէդ աղ-
գին ձնկատէին անվեհէր : Զոգք նոցա
ամենայն ուրեք սակաւաձեռն , ամենայն
ուրեք յաղթանակէին . և զօրավարք
հէտ զշետէ մարզեալք ի գորոցի կլայ-
վայ , տակաւին զհայլենեացն պահպա-
նէին զհամբաւ : Վիպագիր ոմն հագա-
րացի , որ եկաց յայնմ ժամանակի , ա-
սէ . Պարտ է վկայէլ , զի զգաստութիւն
մոտաց ազգիս , անյողդողդ բարք և ա .

բութիւն անահ՝ Ելանեն ըստ կարծիս:
Զանդրգուելիք քաջութիւն ընդ անթե-
րի խոհականութեան միալուծ բերէ
յանձին. և չեթ իսկ նմա զոյդ յարուես-
տի ճակատ յարդարելց, և պատերազմ
տալց օրինօք: Եթէ ընդ այսքանում զի-
նուրական աջողութեան գիտէր կցոր-
դել զհմուռթիւն տեսչութեան, եթէ
հոգայր սփոփել զժողովրդն Աստո-
ծոյ, որպէս հսկէ ի ինամա ամենայն ի-
րաց պատերազմականաց, ոչ գտանէր
ընդ ուրաստ երկրի ազգ նախամեծարքան
զիա, և իշխանութեան արժանաւորա-
գոյն: Այլ հեծէ ընդ նովաւ ժողո-
վուրդն ամենայն ուրեք, և չքաւորի և
տառապի: Արի, Տէր, հաս յօդնութիւն
ծառայից քոց վշտագնելոց. և ապրեցո
զնոսա ի ճիրանաց նորա:

Սակայն և զօրականին անմարթ էր
կալ մնալ զերծ յախտից, որով տես-
չութիւնն առ հասարակ վարակէր: Զօ-
շաքալութիւն, զեղսութիւն և անսաս-
տութիւն երթային և ճարակէին ի քա-

դաբական պաշտօնէից ի զօրավարս, և
ի զօրավարաց ի զօրս: Զայրանային չա-
րեն օր քան զօր. մինչեւ ամենայն ուրեքը
դարանել դաւաճանութեան, և որո-
գայթս լարել որպէս զի յունել զհըն-
դիկ զօրս ի չափու, հարկ լինէր տալ
զնոսա գունդագունդ ի մահ:

Այս անցք աղետից ինենդալայ սկսան
ուր ուրեմն ինուղել զԱնդղիա: Անդ-
հատ յաջորդութիւնք յեղափոխու-
թեանց, զեղծ յանձանձանք իրաց,
հնդիկն կողոպտեալ, և վաճառակցու-
թիւնն ոչ մեծացեալ. նաւ ամենայն բե-
րէր զդարձաւոր բախտախնդիրս ճոխս
և բաւականսա ի գնոց ստանալ կալուածս
անպարագիրս, և կառուցանէլ ապա-
րանս մեծապայծառս. բերէր և զդայժ-
մօտալուտ չքաւորութեան աշխարհին,
պատերազմ յելս սահմանաց նորա,
գժառութիւն ի զօրս, պատիւ ազգին ընդ
վայր հարեալ ծայրայեղ չարեօք, յոր
երբեմն զառածան իսկ Վերբէս և Պի-
ծար, այսպիսի էր տեսարանն, որ պա-

Կոյց զհմուտս հնդիկ իրաց : Ջայն բար,
ձին ամենեքեան միաբարբառ , թէ կլայ,
վայ և կլայվայ միայնոյ մարթ է փրկել
զպետութիւնն կանգնեալ ի նմանէ :

Նոյն ցանկութիւն յայտնեցաւ աղա-
ղակաւ ի համագումար ուրեք վաճա-
ռակցացն ատենի . ուր կուսակցաց ի
մուացնս արկեալ վերաբանչեւր հեւ ,
և առ ահի կորստեան շահուց զդողանի-
հարեալ , գոչէնն զի կլայլ էր այրն
զ"ր խնդրէր վասան անհարին . զի
պարտ էր հատանել զվէճն յուղեալ
զվէճակէն , և թախանձել զնա դառնալ
անդրէն ի Հնդիկս :

Կանգնեցաւ կլայլ . և զկալըւածոցն
ասէր վճարել զվէճ ըստ համոյս երկա-
քանչիւր կողմանց : Բայց էր միւս այլ
խոչ անկրիսնել . զի զեկոյց նոցա ըստ
պատշաճի , թէ ցորչափնակագահ նըս-
տէր ատենի նոցին թշնամին իւր Սոլի-
լան , ոչ յանձն առնոյր բնաւ զեկոչու-
թիւն ինենդալայ : Լցաւ ատեանն աղմը-
կաւ . և Սոլիվանայ հազիւ թէ լսէր ոք ,

բազմագունից ի ժողովցն միաբանեալ
ընդ կլայվայ : Սոլիվան կամեցաւ փոր-
ձել զարդասիս քուէից . այլըստ կանոնի
նոցա չէր մարթ խնդրէր քուէից , եթէ
ոչ ձեռնագրեալ յիննեցունց ի վաճա-
ռակցաց անտի . և ոչ դասն ի բազմակոյտ
ատենին իննունք ոմանք , առ ի ձեռնա-
գիր արկանել յայն :

Յայնժամ անոււանեցաւ կլայլնախա-
րար և հրամանատար բրիտանիկ վիճա-
կացն ի իննդալ . այլ անդեալի պայման
իւր , հրաժարէր ձեռն ի դործ առնել ,
մինչեւ ծանից զվերակացուացն հնդեր
ձեալ ընտրութիւն : Յարեաւ պայքար
յամառ . այլ կլայլ յաղթանակեաց :
Սոլիվան միահեծան տէր ատենին՝ փոքր
միօւ ևս և տարագրէր անտի . և ընտրե-
ցան ի նախադահ և ի փոխանակ նորա
րաբեկամի . նախարարին :

Այսու օրինակաւ նաւարկեաց կլայլ
զայս երրորդ և վերջին նուագ ի Հնդիկս :
Յամի 1765 , յամսեան մայիսի եհաս ի
կալկաթա . և եգիտ խանդարեալ զբո-

լոր գործարան տեսչութեան երկրին ա-
հագնագոյն քան զոր կասկածէրն։ Միբ
Զափար, որ սուլ ինչ յառաջ կորու-
սեալ էր զորդին երեց զՄիրան, լուծաւ
ի կենաց, մինչ դեռ յուղւոյ էր Կլայլ։
Առեալիսկ էր անդ պաշտօնից անդղիա-
ցւոց հրաման սասաթիկ, մի ևս ընդունել
պարգևս ի հնդիկ իշխանաց։ այլ անձ-
կոսք շահուց, և անընդելք ակնածու-
թեան հրամանաց հեռաւոր, անդէու և
անհոդ տերանց իւրեանց, ի վաճառ հա-
նին վերսախն զդահ բենդալայ։ Բիւրք
դրամակշռոց իւր չորեքտասան բաշխե-
ցան ի մեջ ինունց հզօրագունից ի նո-
ցանէ. և փոխանակ այսր կաշառոյ եդաւ
մանուկ իշխանորդի յաթոռ հօրն մեռ-
լայ։ Ընդ առաջ եղե Կլայլայ զրոյց ամօ-
թապարտ այսր տուրեաւի ի ժամանել
նորա անդր։ Ի թղթի ուրեք, զոր գրեաց
անդէն ումեմն ի կարեւոր բարեկամացն.
հեղու զսիրտ իւր ի բարբառ այնպիսի,
որ ելեալ յայնքանոյ խրոմտ և անյող-
դողդ առնէ՝ ոչ ինչ ի յօրինուած գուսա-

նական բանից բնաւորելոյ, խանդաղա-
տէ զմարդ։ Աւաղ, ասէ, քանի՛ անար-
դեալ է անուն ազգիս. ոչ կարացի ժոյժ
ունել արտասուաց ընդ հրաժեշտ համ-
բաւու նորա թերևս անդարձ։ Սակայն
վկայութեան դնեմ առաջի գերաբուն և
արտագէտ ին, որում համարս պար-
տիմք տալ, եթէ գուցեն հանդերձեալք,
զի ելի ես խորհրդով գեր ի վերոյ կալ
ամենայն զառածանաց, և եդեալ եմ ի
մոի՛ ջնջել զօճկրս զայսոսիկ բազմապա-
տիկս, և կամ կորնչելի փորձին։

Գումարեցան խորհրդականք. Կլայլ
առաջի արար նոցա զանցեղի խոր-
հուրդ իւր, առ ի բարեկարգել զաւս-
չութեան աշխարհին, և առ այն վարել
բոլորով անպայման իշխանութեամբ,
որ տուեալն էր նմա։ Յնվշաննէս ոմն ի
նոցանէ, այր ժանտ և ժպիրհ, գիմաբա-
նել իմն կամեցաւ. այլ կարձեալ Կլայ-
լայ զբանս նորա, եհարց մեծասատ,
թէ երկուանայր ինչ արդեօք զնորոյ
տեսչութեանն զօրութենէ։ Կարկեցաւ

Եկաց Յովշաննէս : և յուրաստ եղե
յակնարկութենէ անտի : Հատաւ գոյն
ամենեցուն որ անդն կային, և ոչ ևս
յօդեաց ոք բան ինչ ընդգիմական :

Ելլց զուխտ իւր կլայլ զի լեալ իրը¹
զամ և կէս ի Ննդիկս, յարդիւնս էած
յայնմ սուղ ժամանակի զմի ի մեծա-
գոյն ի դժուարագոյն և ի մարդասիրա-
գոյն բարեկարգութեանց, զոր երեք
ուրեք արարեալ էր ուրուք : Յայս մասն
կէնաց իւրոց դառնայր հայէր ապա
պարծանօք : Կարեր նա երեքկնել զնոխ
իսկ փարթամութիւն իւր . փակել զաշս
առ զրկանս, այն ինչ ձեւանայր խափա-
նել զնոսին . հաճէլ զմիտս Անդլիացւոց
ի Բնդիկալ, մատնեալընչաքաղցութեան
նոցա ազգ մի ապիկար և երկչոտ, որ
անդիտանայրն ուր կալ կզզւոյն՝ ուս-
տի դահիճք իւր ելանէին . և որոյ բողո-
քոյն անմարթէր լսելի լինել մինչեւ ի հե-
ռաստան հնդետասան հազար փարսա-
խաց յայնկոյս ամենածաւալ ծովուն,
Եւ գիտէր կլայլ զի ի բուռն հարկանել

իւր ինամով յուղլութիւն կարգաց,
յարոցանէր յիւր վերայ զամենայն կի-
րըս մուէկանս : Գիտէր յոր անխիղզ և
անհաշտ ատելութիւն գրգռէր ադա-
հութիւն այնոցիկ, որ ի ինդիր բախտի
պանդիստեալ անդր, և ձեպով Ճոխանալ
կամէին, և հաւասարել երևելի մէծա-
տանց, եթէ հատանէր ամենայն յշո
նոցա : Այլ մասն բարի ընտրեաց . և
յինքն ամիոփեալ զամենայն զօրութիւ-
նըս մտացն, կազմեցաւ ի պատերազմ
դժէնէագոյն քան . զՊլասեայ : Անցյս
թուէր ի սկզբան յաջողութիւն, այլ
երկաթի արութիւննորակ բուռն կամք
վազ տապալեցին զամենայն խոչ և ըգ-
խութ : Արգել խափեւ ընդունել պար-
գևս ի Ննդկաց, և զուրցն շահավաճառ
պաշտօնէիցն երարձ ի միջոյ : Գաղթա-
կանն ողջոյն թուէր համագունդ հա-
կառակել խափանացս այսոցիկ . այլ
ազդ արար նախարարն անսզոք, զի եթէ
անդ ոչ գտանէր իւր ձեռնտու, այլուստ
հայթայթէր զայն, և ած իսկ զոմանս ի

Մադրասայ, օգնականս ի յանձանձանս
իրաց: Արկ զանուղայս ի պաշտամանց.
այլք տեղի ետուն անհրաժեշտ՝ հարկին.
և իսուղ ժամանակի ընկճեցաւ ամենայն
հակառակութիւն:

Այլ այր իմաստուն էր Կլայլ. և ի միտ
առնյըր, զի զառածանքն այն դրդեալ
էին ըստ մասին ի կարեաց՝ որ ընդ վե-
րանալ ձեռին իւրոց հզօրի, ոչ յապահէր
դարձեալ ի նցն դրդել զառածանս:
Քանի վաճառակցութիւնն զհետ եր-
թեալ վրիսակ կանոնի ի վարձկանու-
թիւն արբանեկաց իւրոց, վարձս տայր
նոցա կարի սակաւ, որ ոչ ներէին ընուլ
զպէտս կարեսր յառողջութիւն և ի
դիւրութիւն կենաց Եւրոպացւոց ի նա-
հանքի յեղյեղակաց. և յանհնարից էր
ինայէլ անտի և արծաթ մի: Ոչ էր կար-
ծել, զի արք ևս և փանաքիք յանձն առ-
նուցուն ծախել ի նժդեհութեան ընդ
բոցակէզ արեգակամք՝ զբաղցրագոյն
ամս կենացն առ ի գիւտ ևեթ այնպիսի
խուն վարձուց: Նմին իրի դիտելի էր ի

վաղնջուց, զի թողոյր վաճառակցու-
թիւնն պաշտօնէից իւրոց մեծանալ յիւ-
րաքանչիւր վաճառաց. և յանձնիւր պա-
ճարանաց աստի շահուց նոցա հասեալ
էին տերանցն ֆլագ ծանունք: Անդ ու-
րեմն առ իշխանութեամի Յակովայ Ա-
ռաջնոյ թախանձէր թովմաս Հույ այր
խորազնին՝ զլերակացուս նոցա, հայ-
թայթանս առնել վնասուն, և ասէր.
Խափանէցէք զարբանէկացդ ուրոյն շա-
հավաճառ, զի ձերդ լաւ ևս վճարեսցի:
Գիտեմ եթէ գմէկի է խափանդ. զի ա-
սեն իսկ նոքա չերթալ ի Հնդիկս ընդ
սոսկ վարձուց, այլ ցրեսցի փաստն
այս, եթէ յաւելուցուք զլարձս նոցա
ըստ բաւականի. և ծանիջիք ապա որ-
չափ ինչ ելանէ ի ձէնջ:

Ոչ անսացին նոքա իմաստուն խրա-
տուցս այսոցիկ, յարակայեալ ի նմին
կանիսակալ կանոնի. վարձս տալով դուզ-
նագեայս, և զլարձկանացն շահս ան-
ձահս չտէսանելցն առնելով: Վարձ
խորհրդականի նոցա ի Հնդիկս էր երեք

հարիւր ևեթ դրամակշխա ի տարւոջ.
այլոչ ոք անդիտանայր, զի ոչ մարթէ էր
կեալ նմա անդ առանց ծախելը տաս.
նապատիկ աւելի քան դայն. և զի ոչ
շատ համարէր բարեկեցիկ իսկ լինելի
պանդիտութեան, և ոչ խնայել ինչ.
զոր թէ տարցի ընդ իւր ի հայրենիս:
Կանոն այս նախ քան զաշխարհակա-
լութիւն Բենդալայ՝ թէպէտ վլաճա-
ռակցացն խորէր զահ, բայց այսպէտ
դոյզն ինչ ամենք վնաս. իսկ այժմ վա-
ճառակցութիւնն յեղաշըթեալ էր միւ-
խանութիւն. և պաշտօնեայք նորա տը-
րուակ և աւագ վաճառականք յորջոր-
ջեալք, ըստ արդեանց էին դործակալք,
սահմանակալք, կուսակալք լայնածա-
ւալ գաւառուաց: Իշխանութիւննոցա ան-
բաւ. և վարձք անբաւականք ըստ ամենե-
ցուն: Կանխակալ սովորութիւննոցա,
և անտրտունչ լոռութիւն տերանցն՝
խոստանային նոցա զմեծութիւնս ո-
տարութիս. և այս ժմենեայ գրգիռ չարա-
շահութեան և հարստահարութեան ա-

մայացոյց զբէնդալ: Ակն յանդիման ե-
տես կլայլ զբժպատեհութիւն յանձ-
նելոյ ումեք իշխանութիւն, և ինդրելը
կեալ նմա ի կարօտութեան. և իմաս-
տասիրեաց ըստ օրինի, զի անհնար էր
յարդիւնս գալ բարեկարգութեան ա-
ռանց հայթայթանաց առատ վարձուց
պաշտօնէեց: Գիտէր իսկ, զի ոչ կամէին
վերակացուքն ի գանձուց իւրեանց յա-
ճախել վլարձս նոցա. և միակ հնար՝
որ մնայր նմա ի յանդութիւն ուղղու-
թեանց, նոյն արկ զնովաւ զրպարտանս
բազում: այլ մեք անբասիր առնեմք
զայն ամենենին: Փանզի զատոյց ի նպաստ
պաշտաման աշխարհին զմենավճառ ա-
զի. որ անտի և այսր յարդարէ զերկե-
լի գլուխ համից Հնդկաց. և զարդիւնս
նորա բաժանեաց ոչ վարկպարազի:
Այսր ալլագաւ ամբաստանեալ ի թշնա-
մեաց, ամբաստանեցաւ և ի պատմա-
գրաց. իբր թէ ստունդանեալ պատուի-
րանաց, խոստանց գրմեալ և յօրէնս
գրեալ զմոլորութիւնն զոր անկ էր նմա

բառնալ, զպաշտօնէից ասեմք զպուան-
ձին չահավաճառ։ Այլ ամենայն զգն
և անաշառ դատաւորի լիցի ընդունելի,
զի ամրապէս ոչ ինչ կայր ընդ կանոնն
զոր եղ, և ընդ այս զոր եկն խափանէլ։
Մեկին վաճառ ալի լեալ էր ազբիւր
հասից պետութեանց Հնդկաց, չե ծը.
նեալ կլայլայ։ և տեսաց յետ նորա
ընդ երկար։ Օրէն էր կեալ պաշտօնէից
աշխարհին ի հասից նորին։ և կլայլ կար-
գեաց միայն զման ինչ այնր հասից ի
պէտս նոցա։ Եւ այսպէս ի զրաւ առ-
նել նորա չարաշահութեան, որով ա-
րագ արագ կուտէին լեռնակարկառ մե-
ծութիւնք ընչից, մատոյց պաշտօնէից
իւրաքանչեւր զհնարս յուշիկ և հաւաս-
տի ընդունելց զփոխարէնս վաստակոց։
Այլ այսպիսի է արդարութիւն ազդի
մարդկան, զի ոչ ինչ ի յանցուածոց
անտի, որ ածել ածեն ի նա զկեզունա-
խատանաց՝ այսպէս եպերեցաւ, որպէս
բարեկարգութիւնս այս կարեսոր ի լր-
ումն այլոց ամենայն բարեկարգու-
թեանց նորա։

Յածոյց նա զհակառակութիւն ի քա-
զպաշտօւմն պաշտաման, այլ զօրակա-
նին ստամբակութիւն ահաւորագոյն ևս
էր։ Ճգուռթիւնք ինչ ծախուց ի վերա-
կացուացն հրամայեալք՝ զգինուորաց
կարձեին զահ։ և աստի յարեաւ մըլ-
լիկ, յոր և կեսարու չէր կամակար գի-
մուգրաւել։ Գործ էր զգէմ ունել զո-
րութեան սուսերաւորաց յերկրի, զոր
սուսեր միայն վարէր։ Զի երկերիւր
սպայք անգղիացիք ի դաւ մտարե-
րեալ, խորհուրդ կալան հրաժարել առ-
օրին ի պաշտամանէ. ոչ ինչ երկբա-
յեալ զիթանել կլայլայ յամենայն պայ-
մանս, քան թէ աեսանել անառաջնորդ
զգօրս, յոր միայն յենոյր աշխարհակա-
լութիւն իւրեանց յԱրևելս։ Այլ չեւ ևս
հանաչեին նոքա զայրն անզարտելի,
ընդ որում գային ի վսեր։ Էին գեռ առ
նմա սպայք սակաւք հաւատարիմք.
կոչեաց և զայլս ի Սուրբ Գէորգ
ամրոցէն։ և յաւել ի կարդ նոցա ըլ-
պաշտօնեայս ոմանս, որ խրախուսէին

օգնել նմա ի վտանդին։ Յայնժամ հրա-
ման տայր ածել նշնչետայն ի կալկա-
թա զամենոյն ոք ի սպայից որ հրաժա-
րէր։ Մանեան դաւաձանքն զայլ ընդ
այլը կարծիս իւրեանց։ Նախարարն
կայր անողաբեկ։ զօրբ նորա եւրոպա-
ցիք անսասանք. և գունդն հնդիկ, որ
նորանշան տիրասիրութեամբ միշտ պաշ-
տէր զնա, պահ ունէր անդրդուելի առ
նովաւ։ Կալան զառաջնորդս դաւոյն.
մատուցին ի հարցափորձ. և հանին ի
պատույ։ Այլք կբեալ և վհատեալ,
ինդրէին առ ոչ ինչ գրել զհրաժեշտ
իւրեանց. և բազումք ևս այնոքի էին,
որ արտասուօք յայտնէին զապաշաւ։
Արդահատեաց կլայլ անտիականացն ի
նոցանէ. և թէպէտ զշարեացապարտս
դաւոյն դատեցաւ խստիւ, այլ խստու-
թիւննորա չէր մլեալ իսեթիւ։ ի մեծա-
սաստ ունել նորա զաւագութեան իւ-
րոյ անկաւոր պատիւ, զանց առնէր մե-
ծախոհ արհամարհութեամբ զթշնամա-
ծախոհ զզրկանք անձին։ Ամբաստանե-
նօք զզրկանք

ցաւ մի ի դաւաձանաց անտի, իբր ի
սպանութիւն նորա մտաբերեալ. այլ
չերեալ նորա ունկն այնմիկ, ասէ. Անգ-
վացիք են դոքա, և ոչ սրիկայք։

ի բարեկարգել նորա զտեսութիւն
գաղթականին, և ի կացուցանել զիշ-
խանութիւն իւր ի զօրուն, յաջողէր
և տարաշխարհիկ քաղաքաբարութիւն
իւր։ Իշանել նորա յերկիր Հնդկաց եղկ
ի նշան առժամայն խաղաղութեան։
Մեծաւ բանակաւ նստէր յայնժամ
նախարար Աւուդայ յեզերս սահմանաց
Բահարայ. գումարեալ ընդ նմա բազ-
մութեան Արդանից և Մարատաց. և
չըր իսկ տարապարտ խիթալ յաշխար-
հազօր համախմբութենէ բոլորից բնիկ
ազգաց ընդդէմ Անգվացւոց։ Այլ ա-
նուն կլայլայ լաեցոյց ի վայրկեան ժա-
մանակի զամենայն գիմադարձութիւն։
Մատեաւ թշնամին յաղերս խաղաղու-
թեան. և զամենայն պայմանս նորա ըն-
կալաւ անշապակլ։

Յայնմ վայրի կերպարանափոխ եղեւ

պետութիւն Բէնդալայ: Խշանութիւնն
անդղիական անծանօթ ի նախնի տէրու-
թէնէն, և անստոյդ ի ըրջապատ, չե և ս
սահմանէր ըստ իմբ ի գաւառնին: Բէ-
րէր նա զնանութիւն այնր իշխանու-
թէնս, զոր յանկանէլ արևմտեան ինք.
Նակալրութէան՝ վարէին ընդ Խտալիա
պետքն օտար վարձաւորաց, Հսկիմբը
և Օտուակեբը, որք ի վեր և ի վայր ձգձը-
գէին ըստ համնյս զշոյլս իշխանաց ան-
հանից, Կեսար և Օգոստոս անուամբը
պատուելոց: Սակայն որպէս յԽտալիա,
նոյնպէս և ի Հնդիկս ի գէպ գատեցան
եկքն պատերազմիկք՝ ուր ուրեմն տալ
տէրութէանն զինու զօրութէամբ կանդ-
նելոյ ի նոյնանէ զդրուշմ հաւանութէան
օրինաց և կանխակալ իրաւանց: Թէո-
դորիկ ի քաղաքավարութիւն համարե-
ցաւ գտանել ի բացական արքունեաց
Բիւզանդիոյ զկարդ իշխանի յԽտալիա.
և Կլայլ ըստ նմին օրինակի ինդրեաց
յարգունեաց Դելչեայ զվայտի շնորհ
զօրութէանց, զոր ժառանդէր իսկ ար-

դեամբք: Մումուաց Մողոլ անձեռնհաս
ամենևին. այլ հաճեցաւ յոյժ ընդ ար-
ծաթն զօրաւոր, զոր ընդ սակաւուց
պարսիկ տառից, ոչ ինչ նմա արժելոց.
փոխանակել կամեին Անդղիացիկ: յո-
րոց չէր և չէր նմա հնար բռնի հանել
զայն: Սակ արկին փութով, և անուա-
նեան նիքնակալ Հնդկաց՝ էհան հրո-
վարտակ, զի տայր Անդղիացւոց զիշխա-
նութիւն ժողովելոյ և յանձանձելոյ ըդ-
մուտու Բէնդալայ, Որիսայ և Բահարայ:

Եր այլ օմն նախարար հնդիկ, որ ըդ-
նոյն գեմն բերէր առ Անդղիացին, զոր
յետինք ի խօթամիս զաւակաց Մերո-
վինդայ բերէին առ աջողակ և հուժկու-
հազարապէտս արքունեաց իւրեանց առ
Կարոլ Մարտէլ և առ Պեպին: Ի խոր-
հել Երբեմն կլայվայ թօթափել զու-
րուն զայն ի բաց, կարեսր վարկաւ զա-
նուն նորս մանաւանդ ի ինդիրս յու-
զեալս ընդ այլ Եւրոպացիս, զորոց կար-
ծէր մոտադիւրագոյնս անսալ հնդիկ իւ-
խանին, որ յար ի պատուի էր առ նո-

սա, քան ոստիսաց իւրեանց վաճառա.
կանաց: Այսնախահոգութիւն ազդեալ
ի խոհականութենէ, վաղ անզօր գտաւ
ի պատրիկ զգք. և բարձան բաղայքն ի
միջը: Ժառանդ Միր Զափարայ բնակէ
տակաւին ի նախնի մայրաքալաքի աշ-
գատոհմին ի Մուրշիտապատ, տակաւին
իշխան ձայնեալ մեծարանոք, և ներեալ
նմա տակաւին ունել զման արքունա-
կան շքոյն, որ զնախնեզն փայլէր: Ե-
լանէ նմա ի տեսչութենէն ամի ամի վեշ-
տասան բիւր դրամակշիռ ի ռոմիկ: Պա-
տեն զկառան նորա (թիկնապահք. և ծա-
ռայք մական արծաթի ի ձեռին դնան
յառաջ): Ու անկանին անձն նորա և
բնակարան՝ ընդ ատենիւ հանապազօ-
րեայ գտատաստանաց. այլ անբաժ ի քա-
զաքական իշխանութենէ, գտանի նա
ըստ արդեանց իրաց՝ հպատակ և եթ
Անդիլացւոց տոհմիկ և ընչեղ:

Ի կալ Կլայվայ Երրորդ անդամ՝ ի
յաձանձանս իրաց ի իշխալ, դիւրին
էր նմա մթերել գանձ անբաւ, դժուա-

րադեպ յԵւրոպա: Ապաքէն ոչ ծան-
րանայր փարթամ՝ բենդալացւոց առա-
ւել քան զմարդասիրագոյնս յիշխանաց
նոյցա, եթէ ընդունէր զգիրս երեսուն
բիւրուց դրամակշիռոց ի տարւուզ: Զուար-
թագին փոխնանակէին զամենայն ինչիշ-
խանք դրացիք, առ ի գտանել շնորհս
առաջի նորա: այլ ոչ թուի խոտորեալ
նմա ի կարգաց անտի, զոր յառաջնոր-
դութիւն այլոց սահմանեալ էր: իշխան
ինենարիսայ մատցց նմա ագամանդս
բազմագինս: և նախարար Աւուդայ
դրամս յոլովս և ականս պատուականս
ի տիի: Յածութեամբ հրաժարեաց նա
բացէ ի բաց ի տրոց նոյցա: և տես ինձ:
զի ոչ ինչ քրքուեցաւ ընդ հրաժեշտ
իւր ընդ այն, որ չեկն իսկ ի յայտ, մին,
չեյտ մահուն: Ճշգիւ ուներ զհամար
վարձուց իւրոց, զբաժնին ի շահուց
զոր առնէր վաճառն աղի. և զպարգևաց
զոր ըստ բարեձեռութեան Հնդկաց ան-
ձահ էր մերժել: Ի դրամոց աստի ընյր
զպէտս պայմանի աւագութեան իւրոց.

և զաւելրդս բաշխէր ի բուն բարե-
կամս ոմանս պանդխտակիցս իւր։ Պան-
ծայր նա հանապազ, և ըստ մեղ պան-
ծայր ճշմարտիւ, զի վերջին կուսակա-
լութիւն իւր նուազեաց փոխանակյա-
ճախելց զինչ իւր։

Ապաքէն էառ զշրիտակին թողեալնը-
մա ի Միր Զափարայ, արծաթ, ոսկի, ա-
կանս պատուականս, որ արժէին աւե-
լի քան զլեց բիւրս գրամակուոց, զի կա-
նոնքն դեռ ևս հաստատեալը, զկենդա-
նեաց ակնարկէին զտուրս, լւեալ զշրի-
տակաց։ Էառ զայն ոչ վասն անձին։ զի
աւանդեաց վաճառակցութեանն վամե-
նայն, ի դարձն խեղելոց զինուորաց նո-
րին. և ի փարթամարոց աստի ել գլուխ
դրամոցն, ցարդ իսկ յանուն նորա վե-
րակոչեալ։

Լեալ նորա զամիսս ութ և տասն ի
չորտիկս, հարկեցոյց զնա վաստառովու-
թիւն՝ գառնալ յԵւրոպա։ Եւ յամի
1767, յելս ամսեան յունուարի եւ ան-
դարձ յերկրէ անտի, զորս տնօրինեալ

էր զնակատագիր՝ գոգցես ըստ կամի։

Դարձ նորա էրկրորդ՝ ոչ ովունեցաւ
ի հայրէնակցացն իբրև զաւածինն ի ձայն
ցնծութեան։ Դժկամակութիւնք բաղ-
մադիմք նիւթէին զլարիս, որ գառնա-
ցուցին զմնացորդս կէնաց նորա, և ըլ-
մահ նորա ճեպեցին տարաժամ։ Թշնա-
միք նորա վաղեմիք տակաւին կային զօ-
րաւուք և ժիրք ի վաճառականացն անդ
ատենի, օգնականեալք ի բազմաձեւն,
գնդէ գաշնաւորաց, որք գժնէութեամբ
անցուցանէին իսկ զնոքօք։ Ամենայն ջո-
լըր գողոց և աւազսկաց, յորոց սրբեալն
էր զիենդալ, հալածէր զիա այնու ա-
րիւնախանձ ոխութեամբ, որ նոցին սա-
կի նուաստախոհից է անկ։ Յոգունք ի
նոցանէ գոյիւ չափ մտին ի վաճառակը-
ցութիւն անդր. որպէս զի չարաչար ևս
ի նեղ արկանիցէն զայն զայն, որ համ-
բարտակ երբեմն զշաբաղութեան իւ-
րեանց կանդնեալ էր։ Ի վեր երկեցան
օրագիրը ստապատիրք, առ ի թշնամա-
նել և եթ զնա. և այնպէս յուղեալ էին

յայնժամ ոգիք, զի ի շարահնարութեանց անտի, որ սովորակի ոչ ինչըստ. նաև նա ճշմարտութեան և փաստակոց, զարթեան կիրք անընդելականք:

Ի մեծամեծ անցիցն անցելոց ի Հընդիկս, ի գոյ Եկեղել էր նոր իման դաս Անդրիացւոց ի գաւառակցացն Հնդկաւագ անուանելոց: Սոքա սերեալք առ հասարակ ոչ ի վաղնջուց և ոչ ի ճոխ ազգաց, և անդստին ի տուայ տիոց պահութանաւալք ի Հնդիկս, հարստացեալ էին անդ յոյժ, և զմեծութիւնս իւրեանց ածեալ ի հայրենիս: Եւ չեն ինչ զարմանք, զի ի գուն ուրեք դեպ լեալ նոցա մտանել յընկերութիւն բարեհամբոյր որերոյ, յանդիման առնէին զզառանցանս, և զպերձանս սինցորացյան կարծակի մեծացելոց: Ոչ ինչ են զարմանք, զի ի դեդերել նոցա յԱսիա, առեալ էին ախորժակս և սովորութիւնս զարմանալիս, թէ արդեօք և տաղակալիս, որոց չէ էր ելեալ յԵւրոպիոյ: Ոչ ինչ են զարմանք, զի մեծափառ պա-

տուասիրեալք ի Հնդիկս, ոչ հանդար, տէին անփառութեան իւրեանց ի հայրենիս. և մեծատունք ելով և անազգիք, և ամայիք ի տոհմիկ բարեկամաց, չեն զարմանք դարձեալ զի բռնի ինդրէին հանդէս առնել միակ նախամասնութեան իւրեանց: Ուր և բնականային՝ դրդէր անդ հեռ ընդ նոսա և ընդ վաղեմի ազատանին. որպիսի գրգռեցաւն երբեմն ընդ սպարապետն և ընդ սեպուհս ի Գաղղիա: Այսու ատելութեամբ աղուուկանաց նշանաւոր դտան պաշտօնայք վաճառականութեանն ընդ երկար: Քսան ամօք և ևս յետոյ քան զժամանակս, զրովէ բանքս են, ընդ մոլենախանձ հետամուտս ապերասան համար: Ճակութեան համարեցաւ Բորք գրեթէ զամենայն արեւելահնդիկ Անդրիացիս: որք զարեկին՝ տեսանելով զի ոչ են կըշուեալ զվարկ անձանց ըստ դոյաւորութեան իւրեանց:

Հնդկաւագացն անուանեալ դաս՝ վաղութեմն դժպհի եղև ամենեցուն: Ոմանց

ի նոցանէ պայծառացեալ էր հանձարովի Հնդիկս, և մեծամեծ վաստակովք սպասաւորեալ աշխարհին. այլ ի հայրենիս անդ ոչ նողեաց հանձար նոցա, և վաստակ նոցին դուն ուրեք ծանուցաւ: Եին նոքա անտոհմիկ ժառանգեկին զմթերս ընջեց ցուցանէին զայն լրբար, վատնէին զայն չարաչար ամբառնային շուրջանակի զգինս ամենայնի, ի թարմ ճուոց մինչև ցանբնակ աւանս. հանդերձանինոցա պայծառագոյն քան զազատանւոյն, և կառք քան զաւագանոյն շբեղագոյնք: օրինակ մեծածախ և յոսի անտեսութեան նոցա զեղծուցաներ զոդուն ի ծառայից այլոց: Կեսք ի նոցանէ հանդերձ ամենայն շքով իւրեանց՝ ոչ գիտէին յերիւրել զանձինս ըստ պատշաճից. և պաշտեալք ամբոխիւ սպասաւորաց, և բազմութեամբ նժուգաց, և ազնիւ սպասուք և անոյշ գինեօք, այլ առք արհամարհք էին. և այս ամենայն յուզէր և ի գասուն յորմէ ելին, և ի գասուն յոր նկրտէին,

զան հնարին գժիմսութիւն, զխառն արդասիս յաշաղանաց և անարգանաց: Սակայն յորժամ հաշակ ևս հարաւ, եթէ մեծութիւնքն այն, որով նսեմացուցանէին զպարծանս արանց աւագաց, և ի վերայ տանուտեարց վաղնջականաց զընտանին յարուցանէին, մթերեալ էին դրժանօք հաւատոց, բարձագութեամբ իշխանաց, և զդաւառս ողջյնի խորս ալզատութեան գահավիժելով, դղորդեցան ամենայն տարելք մարդկե, զէն բնութեան, վեհք և վատթարք, բարիք և չարք ընդդէմ թշուառականին, որ յանցանօք և ամօթով հայթայթեալ էր՝ որ ինչ վատնէրն արդ ամբարտաւանութեամբ և շինականութեամբ: Հընդկաւագն վատջուեր՝ թուէր յօթեալ ի թերութեանց, զորս ծանակէ կատակերգութիւն զայրագին, և յեղերանց՝ որք սիրագունիւ պատեն միդաւ զութերգութիւն: Ամպրոպք ձաղանաց նովից, որպիսիք յառնեն երբեմն ի հաւածանս կրօնից, ձայթեցին ի գլուխ

պաշտօնէից վաճառակցութեանն: Մարդասէրք սոսկային ընդ պաճարանս մթեւրից ընչեց նոցա, և սակաւապէտք՝ ընդ շոյլութիւն ծախուց նոցին: Հմուտք պատշաճից ունչս առնէին անհարթութեան ախորժակաց նոցա. և ռամփին ընդ գուեհիկս համարէր զնոսա: Մատենագիրը ամենախն իսկ ներհակակիրք, և այլակերպէ ի տիպս բանից, լուրջը և կտիք, իմաւատասէրք և ծաղրածուք՝ միաբանեցին անգամ մի ի նոյն կարծիս: Զամս իբր երեսուն ամենայն սմժափական դպրութիւն ազգին գունենցաւ գորշես բնաւեին կրիւքն՝ զոր նկարագրեցաք: Փութք ի տեսիլ էած հնդկաւագ զոմն մեղկ, անոպայ և անագորոյն, զի զամօթի հարկանէր ընդ խոնարհութիւն բարեկամաց մանկութեան իւրոյ. զի ատէր զազատորեարն, այլ տղայաբար անձկայր ի նոցին գոլ ի համարի. զի զգոյս եւր վասնէր ի հոմանիս և ի մարդելոյզ. զի շողոմէր զգահերէց իւր ի ձեռն չքնաղ ծաղկանց. և զանդէտսյա-

պուշ կրթէր ի զօղանջ խաղտալուր հընդիկ բառից: Մակենզի հարեւանցի հենդութեամբ նկարեաց զգեղջային տուն անպաճոյն, յանկարծ ի հնդիկ շահուց ազգականի ուրուք հասեալ ի մեծութիւն. և անհեթեթ նմանութեամբ գընացից աւագ որերոյ՝ ի ծաղը շարժեաց զամենեսին: Քովակեր ի վսեմ կեղերջականս իւր վառեալս ի խանդից նոցին իսկ Երբայեցւոցն քերթողաց, զհարսաահարութիւն. Հնդկաց եդ ասալին ի դասկարդի ամբարշտութեանց Անդլոյ. Վամն որոյ եհար զնա Աստուած բազմակեայ աղետաւոր պատերազմաւ, և պարտութեամբ ի նորին իսկ ի ծավս, և կորստեամբ իշխանութեան յայնկոյս Ատլանտական ծովուն: ի յուզել ուրուք ի փոշոտ խորչս հին գրանցաց վէպ ինչ առաջ քան զամս վալթառն եկեալ ի լոյս, գէպ լինի գտանել նմա ի դէմն ձիւաղաց վիպին զվայրենի հնդկաւագ ծեր, ընչեղ, ամսյն, խօթ լերդիւ, և սրտիւ խօթագոյն:

Այսպիսի կրիւք զգածեալ էր աշխարհն, որպէս այժմ՝ թուի, զչնդկաւագաց առ հասարակ։ Եւ կըսվ էր երեւագոյն, աղողագոյն, աւագագոյն և ձոխագոյն ի բոլոր կարգի նոցին։ Ճոխութիւն նորա այնպէս ընծայէր ի տեսիլ, զի գրգաէր զատկութիւն ամբոխին։ կառուցեալ էր նորա ի կրկին հըրապարակս ապարանս կրկին. և կեայր բազմապայծառ հանդերձանօք։ Զօրացեալ յատեանս աշխարհին, կըրէր ընդդէմազգատուհմից վեհից։ Ատկայնյայստամենայն պայծառութեան և ի զըրութեան գտանէր նախանձ ձարակ ծանականաց։ Ենին յաղգականաց նորա, որք այլանդակէին ի մեծութիւնս և ի պատիւս. այլ և ինքն իսկ հանդերձ մեծամեծ բարեմասնութեամբ իւրովք չէր զերծ ի տկարութեանց անտի, որովհենդաբանք դարձն զբարս բովանդակ դասուն նորա նկարագրէին։ Ի ձակատս պատերազմաց անպահոյց վարէր կենցաղ. միշտ ի նիւս երիվարի, ցանդ ի

գրաստ զինուորական. ոչ զգենոյր կերպաս, ոչ էլսնէր ի գեսպակ. և խոշոր պարենիւ շատանայր։ Այլ յոչ ևս կալնորա ի գլուխ բանակի, փոխանակեաց զժուժկալութիւն սպարտական ընդ սիսպարացի պէրճութեան և զեղիսութեան։ Կերպարան նորա խոշորագեղ, և դիմացն գժկերպութիւն պատրուակեալ միայն ի գննեայ, և խիզախ և ի սպառնական սաստից. այլ սիրէր զհանդերձս աղնիւս և փաղփունս. և խծկէր զարկեղու նորօք։ Մելքոն աւանդէ պիտակ ինչ անպատեհ։ յորում պատուիրէ գերձակի իւրում կըսվ շապիկս երկերիւր յաղնուագունից զոր մարթիցի ստանալ ընդ սիրոյ կամ ընդ արծաթոյ։ Անմտութիւնք այսպիսիք չարաչար ի համբաւոյ կուտակեալք, սարտուցին զիմոս ամբոխին։ Եւ ոչ այս միայն, այլ չարախօսութիւնք ծանունք, ըստ մեծի մասին յօդուածոլք, ընթանային զնմանէ։ Բնաւից էր նմա տանելնախատանաց, ոչ միայն զմոլորութե-

նէն, յոր էջ ինքն երթեմ, այլ զամենայն մղորութեանց ամենայն Անդղիացւոց ի Հնդիկս, այլ զամենայն չարեաց, յոր այլ անկիտացան հեռի ի նմանէ. նա աւանիկ և զայնցանէ՝ որոց զգէմ կալաւ արիաբար, և պատուհասեաց ըշնոսին սասափիկ: Զնա գնէին վասսապարտ և այնց անկարգութեանց ընդ որս մաքառեալ էր անյոդդողդ համեստութեամբ, և խափանեալ զնոսին: Համայն ասել. համարէր նա պարառութիւն հանուրց յոռութեանց և տկարութեանց, զոր յիրաւի թէ յանիրաւի արկանէր ամբոխն զայնոքիւք, որք ի ինդիր բախ. տի երթեալ էին յԱսիա: Մեր իսկ լըւեալ է գե մարդակերպ ասելոյ զնա ծերունեաց ոմանց. որ անգէտք ամենկին պատմութեան նորա, բերէին տակաւին զմոտահաճութիւնս ի մանկութենէ տարրացեալս յանձին: Զայս անուն տայր նմա հանապաղ և Յուսոն: Բրաւն ոմն վարձկանեալ ի Կլայվայ, առ ի յարդարել զագարակ նորա զուարձալի,

յապուշ լինէր, տեսեալ ի տան պատուական տեառն իւրօյ զարկին լցեալ երբեմ ուկւովի գանձուց Մուռշատապատայ. և ոչ կարէր ի վերայ կալ, թէ որպէս ներէր խիղճ մտաց եղեանաւորին ննջել ի սենեկի՝ առ որում հուպ կայր այն: Ենիականաց հայեցեալ խորախորհուրդ զարհուրանօք ի նորակերտ տպարանս նորա, մինչ ամբառնայրն մեծատեսիլ, հծծէին յունկանէ, թէ առն մեծի և ապիրատի պատուիրեալ էր պարիսպս ածել ստուարս անացս ի սատանայէ, որ օր մի տարցի զնա կենդանւոյն: Էր ի խոան գուեհկաց զառանցելոց ի զարհուրական առասպելաց աստի Ցոնս ոմն պատանի մըրգուզ, անգեղեայ և խաբեբայ, և զօրութեամբն աշխարհաքարող. և զահեղեղ հաւատոց ընդ չարահնար նենգութեանն Ծորդեալ սորա անընտրողութեամբ, թուրի ոչ սակաւս յառաջ եկեալ ի լոց բաշաղանացն կարկատէլոց ի նմանէ զկենաց և զբարուց Կլայվայ:

Յայնմ վայրի երթայր և թողանայր
կարգն եղեալի կլայլայ՝ ի յանձանձանս
իրաց ի ԲԵՆԳԱԼ: Քաղաքավարութիւն
նորա ապախտ եղե գրեթէ ի սպառ .
զեղծութիւնքն ուղղեալք ի նմանէ, ի
վերերևեցան վերսատին. և յաղէտս անդ,
զո՞ր զհէտ իւր առեալ ձգէ յոռի աես
ըութիւն, յաւելաւ ուր ուրեմն մի ի
սոսկալի այցելութեանց անտի, յորմէ
և խմասնագունին ի տեսչութիւնս ոչ
է խուսափել: Յամի 1770 երաշտ եղել
անդ յամարայնի. տոչորէր երկիր տա-
պախառն. աւազանիքցամաքեալք, գետք
ի հօնս ամիտփեալք. և սոլ սաստիկ,
որպիսի պատահէ միայն յերկրի, ուր
տուն իւրաքանչիւր յարդեանց դոյջն
արտոյ իւրոյ կրայ. ելից աղետիւք և
մահուամիք զհովիտ Գանգեայ համայն:
Կանանին գիրգ և փափուկ, որոց չէր
հոլանեալ երբէք զերեսս իւրեանց ի
տեսիլ այլոց, ելանէին յառագաստից,
ուր գեղյ նոցա հսկէ նախանձ արեւ
լեան, անկանէին առ ոտս անցաւորաց.

և կողկողագին պաղատէին բուռն մի ո-
րեզ ի պէտս որդւոց իւրեանց: Գետն
Հուկիլ հանապաջր վարէր թաւալէր
զբիւրս դիականց առ անդաստանօք և առ-
դրախափիւք անդլիսցի աշխարհակալաց
նոցա. և կյուք մեռելց և օրհասակա-
նաց խաֆանէին զանցս ճանապարհաց
և ի կակաթա: Խսկ ապրեալքն վոխտք
և յոդիս ապաստանք, ոչ զօրէին զդիա-
կունս ընտանեացն ածել ի խարոյի ան-
ուըր, կամ ի գեան սրբազն. և կամ
գէթ քշէլ զգազմնս և զանդելզ, որք
ի ըցս տուընընեան գիշատէին զնոսին:
Մահացելցն ոչ ստուգեցաւ թիւ. այլ
ըստ հասարակաց համարոյ ի բիւրս բիւ-
րուց գումարէր: Եւ գոյժս այս յաւել
զայրացուցանէլ ընդ իրս Հնդկաց զԱնդ-
ղիա: Խռովեցան վաճառակիցքն ընդ վր-
տանգշահից իւրեանց. յուղեցան գումըք
լաւաց ամենեցուն ընդ աղէտս եղկե-
լեացն այնոցիկ. և սրտմտութիւն խառ-
նեցաւ վաղ ընդ գթութեան: Համաւ
հնչեաց, թէ վաճառական պաշտօնէիցն

ածեալ էր զսով, գնելով զորիզ աշ-
խարհին ողջոյն, և վաճառելով զայն ընդ-
ութեկին ընդ տասնեկին և ընդ երկո-
տասանեկին աւելի արծաթոյ քան ըզ-
գինս նորին. և թէ ուրումնի նոցանէ.
որոյ չեր ի հերուն դրամակշխա հարիւր,
յղեալ էր ի սովու անդ վեց բիւրս ի
կոնտոն: Ամբաստանութիւնքս այս թը.
ւին մեզ տարապարտ: Թէ ի մեկնել
անտի Կլայվայ, իշխեալ էր նոցա առնել
զվաճառաշահութիւն որիզյ, այն չէ
անհաւանելի. թէ ի գալ նոցա ի վա-
ճառականութիւն որիզյ, հարկ էր նո-
ցա առ ի չքոյէ յաճախութեան վաճա-
ռոյն, շահել արծաթ, և այն չէ երկուա-
նալի. սակայն չիք տեղի կասկածոյ, թէ
նոցա իցէ ածեալ, կամ զայրացուցեալ
զարկածս ի բնական պատճառաց բա-
ցատրեալս ըստ բաւականին: Ալազակն,
որ յաճախեաց զնոցանէ, այնպէս էր
անտեղի, որպէս այն որով առ ի չքոյէ
հնձոց չարահամբաւեցին երբեմն և ա-
ւագանին, և տակաւին չարահամբաւեն

պատաւունք զվաճառականս ընդոց: Այլ
թանձրանայր աղաղակն համաշխարհա-
կան, մինչև գողանալ և զմիաս այնորիկ,
որ գեր ի վերոյ կայր մոլորութեան
ռամփին. այն է Սմիտհ: Առաւել զար-
մանալի այն էր, զի ի չարացուկ պա-
տահարաց աստի Կլայվաչացաց եւանէր
ամենեցուն: Ի սկսանել սովոյն, էր նա
յամաց հետէ յԱնդղիա . և ոչ ինչ ի
կարգաց նորա պատճառս ետ մասուն:
Եթէ արբանեկաց վաճա-
ռակցութեանն տուրեառիկ վաճառս
որիզյ, անցեալ էր նոցա զվանոնաւն,
զոր եդ և պինդ կալաւ առ իշխանու-
թեամբ իւրօվ: Այլ որպէս ասացաք,
թուեր նա յաւս հայրենակցացն պարա-
գւումն հնդկաւագաց ամենեցուն, և բնա-
ւց բարուց նոցա յարացոյց. և մինչ ա-
պարանս կանդնէր և տնկէր այդիս յԱնդ-
ղիա, պարտաւոր գրեցաւ ամենայն վը-
նասու երաշտութեան ի Բենդպալ:

Ատեան տեսչութեան Անդղիա չև էր
ցայս վայր խնամով ուշ եղեալ արեւե-

Եան վիճակաց ազգին : Անդստին ի Գե-
որդայ Երկրորդէ հետէ՝ արագ յաջոր-
դութիւնք տկար յանձանձանաց , մերթ
շնթեալք և մերթ խարդաւանեալք
յարբունեաց , զնմանութիւն և եթ բե-
րէին զիշանանութեան : Նենդ յարբու-
նիս , աղմուկի մայրաբառաբին , և խլըրա-
մունքն ապստամբականք ի հատուա-
ծեալս յԱմերիկայ , ոչ տային խորհըր-
դականաց արքունի պարապով քննել
զբաղաբավարութիւն Հնդկաց . և ի խըն-
դիր առնել նոցա զնմանէ , խնդիր նոցա
էր հարեւանցի և յողդողդ : Զաթամի
խորհրդակից կալ իւրում առ ժամա-
նակ մի Գեորդայ Երրորդի , խորհեցաւ
ապաբէն զբառմբ ածել իշխանասաստ
հնարիւք զլիճակս վաճառակցայն հընդ-
կայնոց . այլ ըմբռնեալ յախտ նորա-
նշան , մթագնեցաւ հանճար նորա նշու-
լագեղ . և խորհուրդ նորին ել ի գերեւ :

Ապա յամին 1772 , զդացին բազումք
զի ոչ ևս մարթ էր աւագանւոյն ապախտ
առնել զիրս Հնդկաց : Հզօրագոյն էր

տեսչութիւն նոցա քան զբնաւից , որք
յետ երկպառակութեան Պիտայ և ու-
մըկականացն կալեալ էին զեխանու-
թիւն : Ոչ գրաւէր հոդ առանին կամ
տարաշխարհիկ ինդրոց զմիտս նոցա .
սուզ և պատիր լուսութիւն էր ի մէջ եր-
կուց մրկաց : Դադարեալ էր խորովու-
թիւն ատենին . գՖկամակութիւնք Ա-
մերիկայ չեւ ևս սպառնային պատերազմ
ընտանի . կնճիռն դրամոց վաճառա-
կցութեանն ածեալ էր տագնապ մեծ .
վասն որոյ հարկ եղեւ աւագանւոյն հո-
գալ զայնմանէ . և ահա ամպրոպք ընդ-
երկար կուտակեալք , որոտընդուստ Ճայ-
թեցին համօրէն ի գլուխ Կլայվայ :

Բուռն էր նմա յամենայն կողմանց .
ատելի ընդ աշխարհն ողջոյն . ատելի յա-
տենին վաճառակցութեան . ատելի մա-
նաւանդ առ ընչաւէտ և մեծազօր ար-
բանակսնորա , որոց ընչափացութեան
և բռնաւորութեան կացեալ էր թումբ
և ամբարտակ : Կրկին էր նմա ժուժկա-
լէլ սոդտանաց , զդործոց իւրոց բա-

րեացեչարաց, զամենայն զեղծութեանց
հնդկայնոց, և զամենայն ուղղութեանց
նոցին : Պայման քաղաքավարութեան
աշխարհին բառնայր ի նմանէ զայս ձեռն-
կալութեան և գհզօր կուսակցաց : Ծը նա
ի համախոհից Գրէնվլայ . որոց թէ և
տարաձայնեալ ի տեսչութենէն , չէր
սերտիւ միաբանեալ ընդ այլս յշնդդի-
մական հերձուածոց ատենին , ընդ փո-
քու գնդին , որ տակաւին զհետ երթայր
բախտին Զաթամայ , և ընդ մեծի և մե-
ծարոյ գասուն՝ որում առաջնորդէր
Հռոքինգամ: Գրէնվլ վճարեալ երայն
ժամ ի կենաց , և կուսակիցք նորա վա-
րատեալք . և կլայլ ուրոյն ի հզօր համա-
խոհութեանց անտի , որ պառակտին
զատեանն , ապաստանեալ էր ի վարկս
և թատենակալցացն ընտրելոց իւրեւ:
Թշնամիք նորա , զի մի առասցուք առա-
քինութեանց նորա , էին արք անխիլճք ,
արինախանձք , և անագորոյնք : Զարա-
կամութիւն նոցա խնդրէր համաշխիջ
կորուսանել զհամբաւ նորա և զհոխու .

Թիւն : Տենչային նոքա տեսանել զնա
տարագրեալ յատենէն , զթկս նորա
փետեալ , զլալուածն հատեալ ի գանձ
արքունի . և յերկեայս լինիմք , թէ այդ-
պիսում իսկ թշուաւութեան մարթէր
զպասուք վրիմու նոցա յափուցանել :

Ատենական հնարք կլայլայ յար և
նման էին զինուորական հնարից նորին :
Լքեալ յամենեցունց , պաշարեալ ի խը-
ռանէ , մատնեալ ամենեին ի վտանգ , և
անարժան համարէր կալ ի դիմամարտ .
այլ իսիզամիէր , խոյանայր , յարձակէր
ի վերայ : Ի սկզբան անդ հակաձառու-
թեանց զիրաց հնդկայնոց՝ յոտն էկաց
յատենին . և երկայն և ներկուռ բանա-
խոսութեամբ հերթեաց ըստ մասանց
մասանց զամբաստանութիւնս զիւրմէ :
Այսու ատենաբանութեամբ ասի յոյժ
ազգեալ նորա յունկնդիբու : Զաթամ ,
որ արդ իբրև ստուեր անձին իւրց ա-
ռաջնոյ՝ ի թատեր անդ փառայն սիրէր
դեգերել , եկաց զայն գիշեր ընդ սրա-
հիւ ատենին . և ասէր ոչ լուեալ ուրեւ

ատենախօսութիւն վայելչագոյն : Ի տիս
հարաւ այն ապա ընդ ինսամով կլայվայ .
և բովանդակ շնորհելով իսկ նմա զբար-
գէտ բարեկամացն օքնականութիւն ,
ցուցանէ այն՝ տակաւեին ոչ միայն զիսրո .
վի իսելամութիւննորա և զարութիւն ,
այլ և զաջողութիւնս մտաց ի հետազօ-
տութիւն և ի ճարտարութիւն բանից
ճահաւորս , զոր հանապազզորդ կրթու-
թեամբ մարթ էր ածելի ծայր կատար-
ման : Եւ բովանդակեալ զջատագովու-
թիւն իւր ի հայթայթանս յետին յան-
ձանձանաց իւրոց , այնպէս ցրեաց զբա-
րուրս , զի ի գէպ թուեցաւ թշնամեաց
նորա շրջել զյարձակմունս իւրեանց այ-
նուհետեւ ի կանխագոյն մասն կենաց նո-
րուն :

Եւ կանխագոյն մասն կենաց նորա
ընծայէր ըստ ոչ բախտի զինքիծս ի
խանձ թշնամութեան : Ընտրեցան ո-
մանք ի ձեռն վարկից , առ ի խոյլ և
խնդիր առնել յիրս Նեփկաց . և զբո-
վանդակ պատմութիւն այնր մեծի յե-

զափոխութեան , որ իջցց զԱռւրաջա ,
և յարցց զՄիր Զափար , մանր կրկտե-
ցին սոքա չըրակամ խորհրդով : Զգե-
ցաւ կլայվ անխնայ ի հարց և ի փորձ
ճղճիմ : Դորմէ ապա բոլոք բառնայր սըր-
տառուչ , թէ ինքն ասպետն Պլասեայ՝
գատեցաւ իբրև զգով կծծի : Համար-
ձակ և անկեղծ պատախանիք նորա շատ
իսկ յայտ առնէին քանի օտար ի բնա-
ւորութենէ նորա էր նենդ , յոր էջն
երբեմն ի գործակալութեան Ծնդկաց :
Խոստովան ելու որով հնարիւք պատ-
րեալ զՈմիոնտ . և յաւել համարձակ ,
ոչ յամօթ լինել ընդ այն , և ի նոյն
գէպս ըստ նմին օրինակի վարել վերըս-
տին : Ասէր իսկ արծաթ բազում ընկա-
լեալ ի Միր Զափարայ , այլ ժիստէր մա-
տրն լեալ այնուիկ պարտուց բարոյա-
կանին և պատուոյ . նա զի անընչասի-
րութեամբն գովելի զանձն համարէր .
և ոչ վայրապար : Եւ նկարագրեաց աշ-
խայժ բանիւք զհանդամանս յաղթանա-
կի իւրոյ . իշխանք մեծամեծք ի հաջոյս

իւր ապաստանեալ . քաղաք բազմա-
գանձ խիթացեալ ի լինելոյ յաւար . ըն-
չեղ սեղանաւորք զիմեամբ ելեալ , ի
շահել զժպիտ նորա . մթերք ոսկոյ և
դոհարաց բացեալնմա միայնոյ . և ի վե-
րայ էած մեծաճյն . Երդուեալ յեր-
կինս , ո գահերեց , ահա զարմոցեալ
եմ ես ինձէն ընդ չափոյս իմ :

Յերկարեաց քննութիւնն յոդնամաս-
նեայ . մինչեւ արձակել ատենին , չեւ վր-
ձարեալ զայն . զոր ի միւսանգամ գու-
մարել իւրում , յառաջ մատոյց անդ-
րէն : Ապա իրբեւ կատարեցին քննիչքն
զվաստակս իւրեանց . դիւրին էր դիտ-
նոց և արդարասիրաց զելս իրացն գու-
շակել : Յայտ իսկ էր , զի կլայվ յան-
ցաւոր գտանէր վնասուց , զոր անհնար
է բարեբել , առանց թշնամանելոյ զջօ-
րութիւն հանուրց օրինաց սրբագու-
նից , որք զհազորդութիւնս ուզզեն ըզ-
մարդկան և զպետութեանց : Ոյլ ոչ
ինչ նուռազ յայտ էր և այն , զի յանձին
եբեր զաջողութիւնս մտաց մեծամեծու-

և զմեծամեծ իսկ լաւութիւնս . զի սպաս
մեծ մատոյց և հայրենեաց իւրոց և Նընդ-
կաց . և զի ոչ եթէ առ վնասու գնացիցն
ընդ Միր Զափար , և ոչ վասն վարելոյ
նենդաւ ընդ Ոմիչոնա , այլ առ անդըր-
դուելի Կալոյ նորա հակառակ ագահու-
թեան և բռնաւորութեան եղեւ եկակոչ :

Ոչ ինչ ամոքէ զարօրեայ օրէնս ար-
դարութեան ի պատուհաս եղերանց :
Մեծամեծ վաստակոց ուրուք ոչ է ո-
ղոքել զամբաստանութիւն գուզնաբեկայ
յանցանաց նորա : Յառաւօտու կիւրա-
կէի վաճառեալ ուրուք գարեջուր , չեք
նմա անբասիր առնել զանձն այնու զի
ոգի ի բախն կեցոյց զմարդ . կամ եթէ
գամբու լծիցէ ի կառս մանկան իւրոց
տղայոյ , չեք նմա ջատագովել զանձն ,
վասն զի վէրս ընկալաւ , մարտուցեալ
ի վերայ հայրենեաց : Սակայն ոչ է օրէն
այսպէս գատել զարս գեր ի վերոյս քան
զպայման ընդելական մարդկան , փոր-
ձեալս յանդելական հրապուրանաց ,
և անընդելական ախտակցութեան ար-

Ժանիս: Դատ առնել անկ է ժամանակակցաց ընդ արս այսպիսիս, զոր օրինակ դատ արտացեն ընդ նոսա յետինք: Ապաքէն չէ արժան գեղերեսել զթերութիւնսնոցա. այլ արդար կշռեցուք զթերութիւնս նոցա և զաւութիւնս. և ի հակել կշռոյն ի կողմն լաւութեանց, անբասիր արացուք զնոսա, և գովեսցուք իսկ: Զիք ի պատմութեան իշխան մեծ և ոչ մի, թէ անպարտ արձակիցի ի դժնեայ դատաւորէ, որ ի յանցանս ինչ նորա զակն պիշ ունիցի: Բրուս փրկիչ Սկովակիս, Մաւրեկ' ազատիչ Գերմանիոյ, Ուլիկէմ' փրկիչ Հոլանտիս, զաւակ նորա վեհ ազատարար Ոնդզիս, Մորէս' խնամապետն բարի, Կոսմոս հայրէնեացն հայր, Հենրի Զորբրորդ՝ Գալզիացւոց, մեծն Պետրոս' Ռուսաց, և ո որ ի սոցանէ կարիցէ կալ առաջի փորձյդ: Պատմութիւն ձգտի ի տեսութիւնս ընդարձակագոյնս. և իմաստնագոյն դատաստան զմեծամեծ ինդրոց քաղաքականաց այն իսկ է, որ կանիէ ի դատակնիք պատմութեան:

Այսպէս խորհէին զկլայվայ արք ըդոնք և արդարակորովք յամենայն դասուց: Անբիծ քարոզել զնա ոչ կարէին. այլ ոչ կամէին լքանել զնա ի ձիրանս դազանամիտ և չարանախանձ վրհմակին, որ զգետնել զնա և ձրձել մռմռային: Նորթ, որ չէրն սիրով ընդ նմա, ոչ կամցաւ ի նեղ արկանել զնա: Եւ մինչդեռ քննութիւնն ընթանայր, կլայվ որ յամաց հետէ գրեալ էր յասպէտութիւն, պասկեցաւ մեծափառ ի մատրան Հենրիայ Յօթներորդի. և վաղ յետոյ կարգեցաւ ի հազարապէտ Շրոպշայրայ: Ի համբուրել նորա զձեռու ըստ օրինի, Գէորգ Երրորդ, որ միշտ գթասիրեալն էր ի նա, ընկալաւ զնա մեկին առ իւր. և զիկս ժամու խօսեցեալ ընդ նմա զքաղաքալարութենէ Հնդկաց, գորովեցաւ ակներմ ընդ պատմել հալածական սպարապէտին զլաստակս իւր. և զդարձ փոխարինի նոցին:

Ածաւ արդարականութիւնն բացայաց ոճով առաջի առենին: Յորկոն՝

քննականացն նախագահ, այր հանձարեղ, բարեձև և ծաղրասէր, ախորժար մատենագիր [թատերական, զօրավար քաջարի և բազմահմուտ, նա մատեւ դատախազ: Պառակտեցան աւագանին. զի ամենայն խնդիրը ի դարուն՝ հրապարակաւ քննէին, բաց յայնցանէ որ ի պետութենէն և կամ հակառակ նորին մատուցեալք: Թորլոյ պաշտամն օրինաց յոսովխաց անտի էր և նա. իսկ Վետերապորոն իրաւագէտ հասարակաց, որ կապեալ էր սիրով ընդ կլայվայ, ջատագովեաց զբարեկամ իւր պանչէ լեօք փաստից և բարբառոյ: Տես զի թորլոյ յետոյ քան զամ ինչ երկելի ախոյ յեան եկաց Վարենայ Հաստինքսայ, և Վետերապորոն գմնէագոյն ի հալածըաց քաղաքավարին մեծի, այլ ոչ անբըծի: Կլայվ անձամբ վամն անձին առնէր պատասխանի. ոչ երկայնաբանեալ, և ոչ արուեստախօսեալ որպէս ի հերուն. այլ բանք նորա կորովիք և ազդուք: Պատմեաց զմեծամեծ նահատակու-

թիւնս իւր, և զվրիպակս. և յուշ արարեալ ունկնդրացն, զի առաջի կայր նոցա սահմանել ոչ միայն զպատիւ իւր, այլ և զանձանց պատիւ, ել յատենէն: ՎՃիռ ետ ատեանն, զի պետութեան միայն են ինչք ստացեալք զինուք պետութեան. և զի որ խորեն զայնս պաշտօնեայք՝ լուծանեն զօրէնս: ՎՃիռ ետ դարձեալ, զի պաշտօնէից անդզիացւոց թուրոն հանապազօր առ ոսն կոխեալ զողլամիտ զայս օրէնս ի բենդալ: Ի վաղիւ անդր քայլ մի ևս յառաջ մատուցեալ, վՃիռ ետ, զի կլայվ ի ձեռն զօրութեան աստիճանի իւրոյ որպէս հըրամանատար զօրացն Անգդիացւոց՝ կալաւ արծաթ յոլով ի Սիր Զափարայ: Աստանօր զկայ էառ ատեանն. ընկալեալ էր զմեծագոյն և զփոքրագոյն նախադասութիւնս շարաբանութեան իոր կոնայ. այլ կասէր առնել զհետեւութիւնն արամաբանական: Իբրև յարեաւ խնդիր, թէ զեղծեալ էր Կլայվ իշխանութեամբ իւրով և օրինակ չար տուեալ

պաշտօնէից հասարակաց, էանց ինդիրն ըստ առաջին մասին, և ընդունելի եղեատենին։ Ապա յետ ուժգին հակաձառութեան ձգելց անդը քան զժագել արևու, առաջարկեաց Վետերբրոն ըզմեծավաստակ երախտիս կլայվայ առ հայրենիս. և այս ինդիր էանց առանց երկպառակութեան։

Ելք այսր նշանաւոր գատաստանի թուի մեջ բաւական ի ցոյց արդարութեան, զգանութեան, և խոհականութեան ատենին։ Ապաքէն ոչ ինչ սադրէր զնա կամակուել զիրաւունս. եթէ փուրչիշ ամբաստանութեան լինէր զարանց օտարախոհից, գատափետէր արդեօք զնոսա, սակայն գատ կլայվայ չէր գատ կուսակցութեան. վասն որպէս իմաստութեամբ վարեցաւ ատեանն, և լաւութեամբ որում միշտ իսկ իցէ ակնուել ի ժողովայ արանց երևելեաց, ոչ կուրացելոց ի հերձուածոյ։

Տեղ և արդար գատաստան ատեսի տեսչութեան Անդվիոյ ևս քան զես բա-

րեհամբաւեցաւի զուգակըոյ; Թշուառ տէրութիւն Լուգովիկեայ Հնդկետապաներորդի փողոտեալ էր պէսպէս՝ գրեթէ զամենայն Պալլզիացիս հայրենասէր վաստակովք իւրեանց հռչակեալս յԱրեւալս։ Լապուրտանէս ձգեալ ի բանտ, ել անտի յետ բազմամեայ տառապանց, առ ի վճարել ևէթ զիեանսն։ Տոպէս ի մեծութեանցն կապտեալ, և սըրապարեկեալ յարհամարհանաց արքային, սուզու ի գերեզման անփառունակ։ Լալլի գայլ ի բերան վարեցաւ ի մահ անարդ։ Իսկ տեսչութիւն Անդվիոյ իրաւառնէր կենդանի զօրավարի իւրում՝ այնու արդարասիրութեամբ, որ գուն ուրեք պատահէ, բայց միայն ի բաժին մեռելոց։ Առաջի եղ զանմոլար իմաստս հանրականո. և հեղիկ ակնարկեալ ուրս ստերիւրեալ էր նա ի նոցանէ, ամեքեաց աղնուական ներբողիւ բարեմասնութեանց նորս զպարսաւ իւր։ Այս համբաւ հիացաց զՎոլտէր, որ միշտ մեծարէր զԱնդղիս, և ցանդ նշաւակել

ինդրեր զմոլորութիւնս ատենիցն Գաղղ-
ղեց : Ապաքէն զայսու ժամանակաւ
թուի ուշ ի կուրծսանկեալ նորա պատ-
մագրել զաշխարհակալութիւն բենդա-
լայ . զի զեկոյց զմիտս իւր Մուրայ զը-
ւարձալի մատենագրին , որ այց արար
նմա ի Փեռնի : Վետերորոն ցանկայր
լրման խորհրդայն , և ժաէր զելայվ տալ
նմա զտեղեկութիւնս կարեորս : Եթէ
կատարէր Վալտեր զառաջարկութիւն
իւր , մատենան նորա բովանդակէր ան-
երկբայապէս զմէպս բաղումն , ցան-
կալս , զարմանազանս , զիմաստս յո-
լովս , ճշմարիտս , գորովականս , դժնեայ
երդիծանօք բացատրեալս , զմրիպանս
անբաւս , անհետեգս , զբարբանչս յո-
գունս զմովսիսեան ժամանակագրու-
թիւնէն , զայպանութիւնս ոչ սակաւս
զառաքելական երիցանւոյն , և զգերա-
բուն պատգամն աստուածայինք գովա-
ցեալս ի սուրբ աւետարանէն , և եղեալս
ի բերան առաքինի և իմաստասէր Բրակ-
մանաց :

Եւ արդ աներկեան վայելէր Կլայվի
մեծութիւնս իւր , և ի պատիւս , պար
առեալ ի բուն բարեկամաց և յազգա-
կանաց , և չե ևս անցեալ զաւուրբք :
Այլ ամպք ի բազմաց հետէ զմոգին դի-
զացեալք՝ պատէին զայն այժմ թանձր
ի մուսլ : Լէկէր նա անդստին ի մանուկ
տիոց դարձադարձիւ այնր անհասանելի
թափծութեան , որ է զի զեղու ի հըր-
չուանս , և է զի ինդայ ի գիւտ մահու :
Մինչդեռ դպիրն էր ի Մադրաս , երկիցս
փորձեցաւ երթալ զեւրովին . այլ ապա
դիւր արարին նմա զբաղանք և յաջո-
զուածք : Ի Հնդկս մինչ պարապէր ի
մեծամեծս , և յինդողիս այն ինչ նորա-
հրաշ բերկանս ընծայէին նմա Ճոխու-
թիւն և աւագութիւն , զդէմ կալաւ
ընդարսոյ լկանացն : Բայց արդ չէր նը-
մա առնել ինչ , և ոչ ըզձալ իմիք . և
միտք նորա միր խամրէր և թարշամէր
յանդործութեան , որպէս բուսակ յան-
պատկան ուրեք նահանգի : Հալածանք
ի խորամանկ թշնամեաց , նախատինք ի

դատաւորաց, սագտանք ատենին թէ և
թէթէք, գիտակցութիւն համարելոյ
զնա յոգունց ի հայրենակցացն՝ բռնա.
կալ անդութ և չարանենք. այս ամե.
նայն միահաղոյն զայրացուցանեին զնա
և ընկնէին. Դրաձեալ և տաղաապէր ի
ցաւագին ախտից, զոր ախտացեալն էր
ի յամել իւրում յերկրի յեւլեղակաց.
և ի խնդիրդիւրութեան ցաւոցն ապա.
ւինեալ էր յօգնութիւն ափիոնի, և գե.
րեալի դաւաճան դեղյն: Աակայն հան.
ձարնորա ցուանայր երբէք երբէք ընդ.
մէդ մուացն մնչև ի սպառ: Եր զե ժամս
ձիգս լուռ և անշարժ բազմեալ, ընդ.
ոսանոյը ապա ի վէճ ինդրոյ մեծի, և
կորովակի հանդէս արարեալ ամենայն
տղողութեանց մուաց զօրավարի և քո.
զաքավարի, անկանէր ընկդմէր անդրէն
ի հանգիստ իւր տիրատեսիլ:

Իւնանայր յայնժամ գժտութիւն
ընդ Ամերիկայ, բախիւն սուսերաց
թուէր անհրաժեշտ. և իղձ լինէին ա.
ւագանին օգտել զննուորական աջողու-

թեամբ կլայվայ: Եթէ էր նա աակա.
ւին, որ ինչ երն երբեմն, յորժամե.
բէկ զպաշարումն Պատնայ, և կորոյս
զգոս և զնաւո Հուանտացւոց ի բէրան
Գանգեայ, ընկնէր արգեօք վաարանջու.
թիւն գաղթականին, և անջատումն այն
անհրաժարելի յապալէր զամն քանի
մի: Այլ անագան էր յօյժ, և հզօր միաք
նորա հիւծէր արագ արագ յազդի ազ.
դի տառապանաց: Յամի 1774, ի բաս.
ներորդ երկրորդ աւուր ամսեան նո.
յերերի զպաւեաց զանձն ի կենաց.
այն ինչ լցեալ քաւասներորդ ինսերորդ
ամի տիցն:

Յայսմ ահաւոր կատարածի այնքա.
նեաց յաջողուածոց և փառաց՝ աամիկն
զհաւասիս և եթ նկատէր զամենայն
մահաճութեանց իւրոց. և ի բարեկրօ.
նից իսկ և ի հանճարեղաց՝ ի մուացնս
արկեալ ոմանց զպատգամն ճշմարտու.
թեան, և զիմաստասիրութեան, վար.
կան զէղերական վախճան նորա արժա.
նահաս պատուհաս արգարադատ երկ.

նից և արհաւրաց խղճի: Այլազդ ամենաին խոկամք մեք ի տեսարան մեծի մըտաց վտանգելոյ ի յափրանաց, ի դառնակոկիծ վիրաց պատույ, ի մահացու ախտից, և յես մահացու գեղոց:

Կլայլ զառածու ի սիսալանս ծանունս. և մեք ոչ հնարեցաք բարեքել զնոսա: Այլ սիսալանք նորա ընդ վաստակոցն զուգակուեալք, և ի հրապուրացն ոչ զատուցեալք, ոչ վրիպեցուացեն զնա յիրաւանց մեծարանաց ի միտոյետնոց:

Յառաջնոյ եկաւորութենէ նորա ի Հնդիկս, սկսանի թուաբերութիւն համբաւոյ անդղիական զնոնոց յ լիրելս: Զե երևեալ նորա, անդոսնէին անդԱնդղիացիք որպէս իշերեզակք. ուր Գաղղիացիք բարեբանէին իբրև ժողովուրդ կազմեալ ի յաղթութիւն և յիշխանութիւն: Քաջութիւն նորա և աջողակութիւն լուծին զհմայսն: Ի դիմամարտութենէ Արկոտայ սկիթըն առնու երկայնաձիգ շարայարութիւն արևե.

Եւան յաղթանակաց, որ անկմամբ Խիզնեայ կատարի: Եւ մի լիցի մուտացօնք, զի ամաց նա քսան և հնդից միայն էր, յորդամ հասուն համարեցաւ զանձն ի զրավարութիւն. պատիւ պատանեկութեան գժուարագէսպ: Ապաքէն Աղեքսանդր, Փոնտէս, և Կարոլ Երկոսասաներորդ ասարան յաղթութիւնս մեծամեծուի մատաղագոյն ևս ի տիս, այլ առընթեր կային սոցա բազմամեայ զօրավարք մեծահանձարք. որոց ժելադրութեանց պարտ է գրել զյաղթութիւնս Գրանիկեայ, Հրոկրուայ և Նարվայ: Իսկ Կլայլ պատանի անփորձ, փորձագոյն գտանէր քան զբնաւո՛ որք զենուորէին ընդ նովաւ: Անկ էր նմա կազմել զանձն, կազմել զզօրագլուխս իւր, կազմել և զզօրս: Մի ոք միայն յուշ լինի մեզ, որ ի նմին հասակի ետ զնոյն ցոյց պատերազմական հանձարայ. Նապուէն Բոնապարտ:

Երկրորդ երթ Կլայլայ ի Հնդիկս, սկիթն առնէ քաղաքական իշխանու-

թեան Անդղիացւոց անդ : Ճարտարութեամբ իւրով և անդքուռութեամբ արդիւնացոյց նա ընդ ամսա ինչ՝ աւաւելքան զամենափայլ անուրջս հեղեալս ի ցնորս մտաց Ցոպլեայ : Ոչ այնպիսի անմաւ երկիր յուռթի , ոչ այնչափ գահնուց հասք , ոչ այնքան բազմութիւն հպատակաց յաւելան երթեք ի աէրու . թիւն Հռովմայ՝ ի բարեփառագունէն յիշանաց իւրոց : Դարձեալ և աւարք այնպիսի ժարթամք ոչ անցին բնաւ ընդ յաղթական կամուօք , ընդ նուբրական ուղին ի մէջ բազմամբոխ հրապարակին տծեալք առ սեամս մեհենին տարպէանն Արամազգայ : Համբաւ նոցա , որ հարին զԱնտիւք և զՑիգրան , նսեմանայ առ բազմոպայծառ նահատակութեամբք պատանւոյն անդղիացւոց , Կացելոց ի բըլուս դնդի փոքու քան զիէս հռովմեա կան լեհէոնի :

Յերրորդ այցելութենէ Կլայվայ ի Հնդիկս , սկսանի ժամանակադրութիւն անարատութե յանձանձանաց պէտու-


թեան Անդղիացւոց յարեւելս : Յամի 1765 , յորժամ էջ Կլայվ ի Կալկաթա , արձակէին անդր Անդղիացիք առ ի վաղագոյն ճոխանալ և եթ ամենայն մարթանը . նա նախիկին մարտ ետ անվեհեր և անաշտու ընդ անհետեդ սովորութեան կրփանաց , կաշառանաց և զրկանաց . և ի մարտի անդ վտանգեաց զհանդիսու իւր , զհամբաւ և զփարթամ ճնիպութիւն : Ակնածութիւն իրաւանց որ արգելու զմեղ պատրուակել , և կամ պահումնել զփիպակս աւուրց նորա առաջնոց , նոյն և հարկ առնէ մեզ հաւանել , զի ազնուաբար փոխարինեաց նա վրպակացն այնոցիկ : Եթէ բարձան նախատինք վաճառակցացն և պաշտօնէից նոցա , եթէ լուծ օտար տերանց՝ այլուր քան զամենայն լուծու ծանրակիր , թեթև գտաւ ի Հնդիկս՝ քան զամենայն բընիկ իշխանութեանց և զնուկ հուզկահարացն , որ ահ արկանէին յառաջա . գոյն ընդ բնաւ գաշապայրն իւնդալայ , եթէ յաջորդեցին պաշտօնէայք ոչ

ինչ նուազ երևելիք յուղութիւն, յան-
ընչամբութիւն և ի նախանձ օտար
հասարակաց, քան ի հմտութիւննել ի
ջանս, և եթէ տեսանեմք այժմկ դարս
անուանիս զի առաջնորդեալքաջաղթ
բանակաց, և զարբայս կացուցեալ և
ընկեցեալ՝ պանծան ի բարեփառ չքա-
ւորութիւն իւրեանց, յորժամ գարձ
աննեն յաշխարհէն՝ որ երթեմն կարկա-
ռէր ամենայն ընչափաղ պանդխափ զոյս
անսահման մեծութեանց, գրուատիք
այսր ամենայնի ոչ սակաւ պատկանին
կլայվայ: Անուն նորա յարձանադիրս
աշխարհակալաց գերակայեալ այլ դը-
րոշի և յազնուագոյն ցուցակին ի ցու-
ցակի այնոցիկ, որ վաստակեցին և վրշ-
տակրեցին ի բարօրութիւն մարդկան:
Մարտիկն սահմանեսցէ պատմութիւն
բարձ զուգապատիւ ընդ Լուկուլեայ
և ընդ Ֆրայիանու. այլ և նորորոշողին բա-
րեկարգութեածց՝ ոչ ժխտեսցէ զբա-
ժին այնրյարդանաց, որով գրուէ Գալ-
դիա զիշատակ Տորկոսայ, և որով յե-
տինք ի Հնդկացյառեսցին յանդրի անդր
Ուկիւնաց բենտինգայ:

ԱՆՌԻԱՆԻ ԻՆՉ

- Արկու Arcot
Արնի Arnee
Բուջեբոջ Budjebudje
Բոսսի Bussy
Բորկոն Burgogne
Բորք Burke
Բրաւն Brawn
Բրուս Bruce
Գուալիոր Gualior
Թուրլու Thurlow
Իռիք Irish (Իռլանդացիք)
Կոնյեվրամ Conjeveram
Կոնուա Conway
Հումանգուտան Rajpootan
Հուոյ Roe
Հուոյ Row
Հուոյիկոնա Rohilcund
Հուոնճանինգ Rungeeising
Հուոտլուց Roydullub
Հուոքինկամ Rockingham
Հուոկուա Rocroy
Մակաու Macaulay
Մուրեյ Murrey
Յոկես Սայտ Jugget Seit
Յոմիս Jumna

Յոհանն Jonson
Յունտ Junt
Նեղամ Ալմող Nizam al Mulk
Չոնտա Chunda Sahib
Պիտ Pitt
Պլասէ Plassey
Պունա Poonah
Չորինգ Chowringhe
Սաքվուլ Sackville
Սաքսու Saxe
Վալպոլ Walpole
Վատսոն Watson
Վատս Watts
Վելլոր Vellore
Վեդդերբորон Wedderboron
Վիլքես Wilkes
Տանժոր Tanjore
Տիմեր Timery
Դպլէս Dupleis
Տորկու Turgot
Փեռնի Ferney
Փոքս Fox
Փորտ Ford
Փուդ Foode
Քովդեր Cooper



52



405

2013

